

Մերգել Մինասյան

# ՎՐԱՍՏԱՆԻ ԵՇԽԿԱԿԱՆ ՓՈք ՐԱՍՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

համարկման ներուժը  
երկրի հայ բնակչության օրինակով



Երևան 2006

Մերգել Մինասյան

ՎՐԱՍՏԱՆԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ  
ՓՈՔՐԱՍԱՍՆՈՒԹՅՈՒՆԵՐ.  
ՀԱՍԱՐԿՄԱՆ ՆԵՐՈՒԺԸ  
ԵՐԿՐԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ  
ՕՐԻՆԱԿՈՎ



Երևան 2006

ՀՏԴ 341.231.14: 323 (479.22)

ԳՄՊ 67.91+ 66.3 (2 Վր)

Ս-710

Ս 710 Միասնական Ս.

Վրաստանի էթնիկական փորձամասնություններ. համարկման ներուժը Երկրի հայ բնակչության օրինակով. - Երևան, Լրատվամիջոցների կովկասյան ինսիտոս և Հայրենադպրոցան և հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպությունների միուրյան, 2006. - Էջ. 180

Ուսումնասիրությունը նվիրված է Վրաստանու մարդու և էթնիկական փորձամասնությունների իրավունքների դաստիարակության ողբերգությանը, երկրի բնակչական ու մշակուրային կանոնին էթնիկական փորձամասնությունների համարկման հեռանկարների որոշմանը: Հետազոտվում են սվայ խնդիր կազմակերպությունների առջև, այդ ըլքում միջազգային-իրավական դրասավորություններից և ժամանակակից Վրաստանու դրանց գործնական խախնացանքների առնախնական դրասականությանց բխող իրավական ուղանակները: Հայաբնակ Սամցին-Զավակաբ աւագանության օրինակով մեխանիզմներ ու համձնաւարականներ ճշակելու դրա է աշխատ, մի կողմից, փորձամասնությունների իննուրյան, լեզվի ու մշակույթի դադարական նորմերը և այս կողմից, նաև հետազու խախնացական համարկման միջև փոխգիծնան հասնելու համար:

Գիտական խմբագիր՝ **Ա. Խոկանդարյան**

Խմբագիրներ՝ **Հ. Խառայան, Ն. Խոկանդարյան, Ռ. Թարյան**  
Ուսումնիցից բարգմանեց՝ **Ռ. Թարյան**

Ֆեռնանդ Ա. Մանուկյան

Ըստիկի ձևակերպություն և մասկետ՝ «Մատիտ» ստույդիո / www.matit.am  
Տպագրվել է «Մատիտ» ՍՊԸ տպարանում

**Minasyan, S.**

**Ethnic minorities in Georgia: Potential for Integration. A Case Study of the Country's Armenian Population.**  
- Yerevan, CMI and the 'Yerkir' NGO Union, 2006. - p. 180

The volume analyses the situation with human and minority rights in Georgia and suggests ways of integrating minorities in the social, political and cultural life of the country. The author looks at the legal framework for minority issues, focusing on Georgia's international legal obligations and their political implementation practices. In a case study of the Armenian-populated region of Samtskhe-Javakheti, the author proposes mechanisms and recommendations for achieving a compromise between minorities' needs to preserve their identity, language and culture, and to achieve factual political rights, on one hand, and their profound civil integration, on the other.

Scientific Editor: **A. Iskandaryan**

Editors: **H. Kharatyan, N. Iskandaryan, R. Tatoyan**

Translation from Russian: **R. Tatoyan**

Cover photo by **R. Mangasaryan**

Cover design and layout by 'Matit' Studio / www.matit.am

Printed by "Samark" LLC

ԳՄՊ 67.91+ 66.3 (2 Վր)

ISBN - 99941-2-058-1

© Լրատվամիջոցների կովկասյան ինսիտոս և Հայրենադպրոցան և հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպությունների միուրյան, 2006.  
© 2006 by Caucasus Media Institute and the 'Yerkir' NGO Union

Նախագծի նախաչեղողու և գլխավոր հովանակո՞ւ Հայրենադպրոցան և հիմնավորման «Երկիր» Հասարակական կազմակերպությունների Միուրյան / www.yerkir.org

# **ՑԱՆԿ**

---

3 ..... **ԽՄՔԱԳՔԻ ԿՈՂՄԻՑ**

5 ..... **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

17 ..... **ԳԼՈՒԽ 1.**

**Մարդու և էքնիկական փոքրամասնությունների իրավունքների ղաւառանության ոլորտի միջազգային-իրավական նորմերին ու մեխափմներին Վրաստանի համադաշախանության մակարդակը**

18 ..... 1.1. Միջազգային-իրավական նորմերը ՄԱԿ-ի ցանակներում

20 ..... 1.2. Միջազգային-իրավական նորմերը ԵԱՀԿ-ի ցանակներում

25 ..... 1.3. Միջազգային-իրավական նորմերը Եվրոպայի խորհրդի ցանակներում

33 ..... **ԳԼՈՒԽ 2.**

**Մարդու և էքնիկական փոքրամասնությունների ղաւառանությանը վերաբերվող Վրաստանի ներքին օրենսդրական նորմերը և դրանց բաղադրական իրականացման դրակիչիկան**

33 ..... 2.1. Ընդիհանուր դրույթներ

41 ..... 2.2. Խոսքի և մայրենի լեզվի օգտագործման ազատություն

59 ..... 2.3. Կրոնության և մշակույթի ազատություն

68 ..... 2.4. Կրոնի ազատություն

78 ..... 2.5. Քաղաքական իրավունքներ և սեղական ինքնակառավարման գարզացում

88 ..... **ԳԼՈՒԽ 3.**

**Միջազգային զեկույցներ և դիմարկումներ Վրաստանում մարդու և էքնիկական փոքրամասնությունների իրավունքների ոլորտում սիրող իրավիճակի վերաբերյալ**

88 ..... 3.1. Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով

90 ..... 3.2. ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողով

92 ..... 3.3. ՄԱԿ-ի սնանական և սոցիալական խորհրդին կից մարդու իրավունքների հանձնաժողով

94.....	<b>3.4. Փոքրամասնությունների իրավունքների խումբ</b>
98.....	<b>3.5. Մարդու իրավունքների միջազգային դաշնություն</b>
103.....	<b>3.6. Փոքրամասնությունների խնդիրների եվրոպական կենտրոն</b>
108.....	<b>3.7. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն</b>
109.....	<b>3.8. ԱՄՆ դեսքարտուղարություն</b>
113.....	<b>ԳԼՈՒԽ 4.</b>
	<b>Վրաստանում մարդու և երնիկական փոքրամասնությունների իրավունքների դաւադանության ոլորտում իրավիճակի դիմամիկան Սամցխե-Զավախսի սարածաւութանի օրինակով</b>
114.....	<b>4.1. Ծողովդագրական իրավիճակ</b>
122.....	<b>4.2. Անցիալ-սնէսական իրավիճակ</b>
131.....	<b>4.3 Միջազգային հանրության մասնակցությունը սարածաւութանի սնէսական վերականգնման գործընթացներում</b>
137.....	<b>4.4. Կրթության և մշակույթի խնդիրներ</b>
139.....	<b>4.5. Քաղաքական գործընթացները սարածաւութանում 2003թ. «Վարդերի հեղափոխությունից» հետո</b>
152.....	<b>Հանձնարարականներ</b>
157.....	<b>Վերջաբան</b>
163.....	<b>Հավելվածներ</b>
165.....	<b>Մատենագրություն</b>

## ԽՄԲԱԳԻ ԿՈՂՄԻՑ

Ախալքալակի ռազմաբազայի շուրջ իրավիճակի հերթական կիսասման դահերից մեկին, ես մասնակցում էի բոլորվիմ այլ թեմայով իրավիրված մի գիտաժողովի, եւ այնուն հանդիմեցի իմ գրծընկերոջը Վրաստաճից, որը հիանալի մասնագետ է եւ իմ լավ ընկերը: Խոսակցությունը սահուն կերպով անցավ Վրաստաճի հայաբնակ տջանների խնդիրներին: «Հասկացիր, ոչ մի ինքնավարություն ունեն մեկը ձեզ չերեւ չի տպու: Մենք գիտենք, թե հայերի դեմքում ինչ է նաև ակում ինքնավարություն: Դա դրու է, օրիներգ, նախազահ, իսկ վաղը՝ Ղարաբաղ: Այդ դաշճառով, մոռացենք, դրա մասին վրացական կողմքը երեք, անգամ, խոսել չի ցանկանա»,- ասում էր գրուցակից:

Այդ ռեպիկում գրծընկերու ի մի թերեց վրացերեն «Զավախերի», իսկ հայերեն՝ «Զավախի» կոչվող սարածաւորանում իրավիճակը բնորոշող խնդիրների ամրողությունը:

Առաջինը, ինքնին բնութագրական է բաժանումը «ձեզ» հայերի և «մեզ»՝ վրացիների միջև: Եթե Թքիլսիի եւ Վրաստաճի զուտ վրացաբնակ տջանների միջև առաջացող խնդիրները բարդություն են երիտասարդ դեմությանը բնորոշ ընտալսավերի «անորակության», կոռուպցիայի ու կառավարման ընդհանուր չկարգավորվածության վրա, առաջ Զավախի դաշճառում, դրանք միանգամից երեկոյական երանգ են սահմանում, մեկնարանում են «վրացի-հայ» հարրության վրա: Իսկ «հայերն» այս համատեսում ոչ թե սուկ Վրաստաճի երեկոյական փոքրանասնություններից մեկն են, որի ներկայացուցիչները բնակվում են ինչողևս Զավախում, այդիս եւ այլ տջաններում, այդ բնում նաև մայրաքաղաքում: Հայերը բնակվում են նաև հարեւան Հայաստանում, որը սահմանակից է Վրաստաճին ինչն Զավախի սարածում: Առաջանում է բոլոր հայերին միավորող «դուք»-ը՝ Զավախի, ընդհանրապես Վրաստաճի, Հայաստաճի, սփյուռքի հայերին, այդ բոլորը «դուք» են, եւ ոչ «մենք»:

Երկրորդը, Վրաստաճի վերջին սարիների դաշճությունն, ընդհանուր առմանք, ինքնին հասկանալի է դարձնում «ինքնավարություն» բառի նկատմամբ ցավագին զգայունությունը: ԽՍՀՍ-ից Վրաստաճին ժառանգություն անցած ինքնավարությունների փորձը բավականին շատ հիմքեր է տալիս երկրու ունենալու բուն իսկ այդ երեսությունը: Էլ չատենք այն մասին, որ հայերը (քող բացաձակադիմ ուրիշները եւ բացաձակադիմ այլ համատեսում) արդեն Ղարաբաղում ունեն մետրոպոլիայից անջատվելու ու դե-ֆակտո անկախության հասնելու փորձ, ինչը, բնականաբար, զգասացնում է:

Վերջին բոլոր սարիներին Զավախիյան խնդրի շուրջ փոխադառ վախ է կուտակվում: Խնդրի շուրջ ձեւափրվել է երկու անհամատեղեկի բանավեճեր (ՃԱԿԿՐ)՝ «Վրացական» եւ «հայկական»: Վրացական բանավեճը կատուցվում է հայկական «անջատողականության» ու Զավախիների բունազավքման դավադրության նկատմամբ վախի վրա, հայկական բանավեճը համակված է վրաց իշխանությունների կողմից Զավախի հայության բռնի ձուլման ու հայարափման վախով: Տեղեկավական դաշճերը վերածվում են ականային դաշճերի. բոլոր է հարուցում սարածաւորան անվանման այս կամ այլ լեզվաբանական ձեփի («Զավախերի» կամ «Զավախի»)

օգտագործումը կամ անզամ բանախոսի ազգանվան վերջավորությունը: Այդ իրավիճակը, որը չափազանց նյարդայնացնում է գիտնականներին ու արտաքին դիմումներին, բոլր գործող անձանց սպրում է առնվազն բառապատճենի հետազա արևատականացմանը, ինչն իր հերթին նոյասում է բանավեճերի միմյանցից հեռացնան ու վախերի աճմանը:

Չեր ուսադրությանը ներկայացվող ուսումնասիրության հեղինակի ազգանունն ավարտվում է «յան»-ով: Ավելին, նա ծնունդով Զավախից է եւ, կասկածում եմ, թե մասնագիտական համատեսիցից դուրս իր փոքր հայրենիքն անվանում է միայն Զավախից (հայերենով այլ կերպ ասել չի լինի): Սակայն, իր աշխատանքում հեղինակը փորձում է դուրս գալ վախի ու առձականան տաճարանությունից: Դիմելով Վրաց խրեթիշմենիքն հեղինակը համոզիչ կերպով ցոյց է տալիս, որ «ինենավարություն» սարսափելի բարդ տակ կարող է քանիվել բնավ էլ ոչ անջատողականությունը, այլ այս կամ այն իրավունքն իրականացնելու երկրի բաղադրիչների դարգ դահանջմունքը, եւ այդ դահանջմունքը կարելի է բավարարել ժամանակակից իրավական միջոցներով: Դիմելով Վրասանից դուրս բնակվող հայերին հեղինակը ցոյց է տալիս, որ Զավախիցում իրավիճակի մեկնարարանումը որոյն «Հայաստանի հետ վերամիավորման դայտա» ոչ կառուցողական է առաջին հերթին Վրասանի հայ բաղադրիչների նկատմամբ եւ ոչ միայն մոտեցնում, այլ հետացնում է Զավախիցիների կեսական խնդիրների լուծումը: Դիմելով եվրոպացիներին եւ առավել լայն առումնով արտաքին դիմուններին՝ հեղինակը նկատում է, որ Ծվեյցարիան ախտահարված չէ «ազեսիվ անջատողականությամբ» եւ Բեռնը չի վախենում Փարիզից, մասնավորապես, այն դաշտառով, որ Ժնեվի բնակիչն ունի այն իրավունքներն ու հնարավորությունները, որոնց մասին Ախարքակի բնակիչն չի կարող երազել անզամ, ընդ որում Ժնեվում գերմաներն են կլսես, թերեւս, ոչ ավելի հաճախ, բան Վրացերեն՝ Ասալիքանում: Վերջապես, դիմելով Զավախիցի բնակիչներին՝ հեղինակը ցոյց է տալիս, որ հանուն իրենց իրավունքների դայտարում, զիսավոր գեներ դեսք է դառնան ոչ թե հանրահավաքներն ու ցոյցերը, այլ Վրասանի կողմից ստորագրած միջազգային դայնանագրերը եւ վրացական դետուրյան ներքին օրենքները:

Այժմ Զավախիցի հարցում առավել արդիական խնդիրն է փոխարքել վրացական ու հայկական բանավեճերը դատերազական հարբությունից լուծումների որոնման հարբություն: Դրա համար երկու բանավեճերն անհրաժեշտ է «քարզմանել» այլ լեզվի՝ համագործակցության ու վերլուծության, իրավական նորմերի ու միջազգային փորձի: Այդ դարավայրում կա հավանականություն, որ անվանումների դատերազմը կրաքարի ինենքսինեյան, ինչդեռ որ նման դատերազմ չի նղվում այն երկու երկների միջեւ, որոնք նրանցից մեկի լեզվով անվանվում են «Սահարթվելո» ու «Սասոմխերի», իսկ մյուսի լեզվով՝ «Վրասան» եւ «Հայաստան», ինչը չի խանգարում այս երկներին իրենց միջեւ փոխհարաբերություններում օգտագործելու այլ լեզուներու անվանումներ:

Սերգեյ Մինասյանի ուսումնասիրության խորագիրն է «Վրասանի երեխիկական փորմանանություններ». հանրակման ներուժը երկրի հայ բնակչության օրինակով: Նման հարցադրումը լիսվին արդարացված է, բանի որ Զավախիցի խնդիրը,

հավանաբար, Վրաստանի էքնիկական փոփրամասնությունների առավել բարդ խնդիրն է (քացառությամբ, իհարկե, այն հակամարտությունների, որոնք փոխադրվել են թեժ փող եւ, վերջին հաշվով, արդեն, ըստ էության, զուս միջէքնիկական չեն): Որու իմաստով Զավախսի խնդրում առավել ցցուն կերպով արտացոլվել են ժամանակակից Վրաստանին բնորու բազմաթիվ խնդիրներ: Յավոր, այս թեմայով իսկական գիտական գրականություն բացակայում է, եւ ֆնարկումները զերս են գրեթե բացասաբանիս թերթերի էջերում եւ բաղադրականացված ու բենեռացված բանավեճի Եջանակներում: Ներկա ոսումնասիրության հեղինակը ձգում է ամբողջովին փոխել բնարկման համատեսությունը: Որդես սկիզբ նա փորձում է հաճակարգել փոփրամասնությունների վիճակը կարգավորող Վրաստանի իրավական նորմերը, որվագծել Զավախսի առավել կենսական խնդիրների Եջանակը եւ որուել, թե ինչես այդ խնդիրները կարող են լուծվել Վրաստանի գոյություն ունեցող (կամ ձեւավորվող) իրավական դաշտի Եջանակներում:

Անկասկած, հեղինակի շատ դրույթներ ու եզրակացություններ բոլոր կողմերի մոտ կարող են ավելի շատ հարցեր առաջացնել, քան դասախաններ: Կարծում եմ, դրանից չղեցք է վախենալ, ավելին, ավելին, սվյալ ոսումնասիրությունից ծնված բանավեճը կարող է խաղալ կարեռուազնյու դեր Երևոտի հարթահարճան եւ Զավախեթիք Զավախսի վերաբերյալ «հայկական» ու «Վրացական» բանավեճերի ասիհմանական միավորնան գործում, որտեղ էլ որ այն տարի՝ Հայաստանում, Վրաստանում թե միջազգային Եջանակներում:

Այն ժամանակ ես գործընկերող դասախաննեցի, որ «ինքնավարությունը» լոկ խոսք է: Մարդիք են այն լցնում որեւէ բովանդակությամբ, եւ միանգամայն հնարավոր է, որ այդ բովանդակությունը, ի սարքերություն խոսի, որեւէ վասնգ չի ներկայացնում վրացական դեւականության համար: Խոկ առանց սարսափելի խոսի կարելի է եւ յուս գնալ: Հետո մենք խոսեցիմ այն մասին, որ դրուենք, զինանշաններու որհներգեր ունենում են եւ ֆուրուլային ակումբներն ու բնավ էլ փաս չէ, որ Նարարարում տեղի ունեցածի դաշճառը ինքնավարության «ավելցուկն» էր, այլ ոչ թե ընդհակառակը: Մենք երկուս էլ գիտեինք, որ Տիշին կամունում մնային կառավարչին դիմումները գրփում են իսակերենով, եւ դա չի խարխլում Եվելյացարական ազգի հիմները: Մենք այն ժամանակ հաճածայնության եւանձն, որ Զավախսի մասին բանավեճն արժի տեղափոխել այսօն ասած «տեխնիկական» լուծումների որոնման դաշտ եւ ու ակնհայտութեան ավելի լավ կլինի, քան դարձել, թե էքնուսներից որ մեկն առաջինը բնակեցրեց այս կամ այն հարթավայրը, կամ որտեղով էին անցնում սահմանները մեր քվարկությունից առաջ 4-րդ դարում: Այնքան էլ շատ ժամանակ չի անցել այդ հանդիմումից եւ ես ուրախ եմ Գեր ուշարդությանը ներկայացնելու մի գիրք, որը մեզ հրավիրում է մասնակցել հենց այդոիսի բանավեճի:

*Աղեմսանդր Իսկանդարյան  
Լրասպամիջոցների Կովկասյան Ինսիստուտի Տնօրեն*

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վրաստանում մարդու եւ էթնիկական<sup>1</sup> փոռամասնությունների իրավունքների ղաւողանության խնդիրն իր բոլոր՝ ղամական, բաղախական, իրավական, սոցիալ-ընտեսական, մշակութային ժեսանկացություններով բավականաչափ խրին է: Էթնիկական փոռամասնությունների նկատմամբ փառվող բաղախականությունը ղահանջում է աճքողջական մուտքում, բանի որ այն դեմք է ուղղված լինի, մի կողմից՝ փոռամասնությունների էթնիկական ու մշակութային ինքնության ղաւողանությանը եւ նրանց արժանադաշիվ կյանքի ու սոցիալ-ընտեսական զարգացման համար դայմանների ստեղծմանը, մյուս կողմից՝ երկի հասարակական-բաղախական կյանքին նրանց առավել խոր համարկմանը, դեսականապես ղաւողանության, ժողովրդավարացման ու բաղացիական հասարակության ձեռագործան գործընթացներում ներգրավմանը: Վրաստանը թերի բազմաթիվ անգամներ հայտարարել է այս սկզբունքներին իր նվիրվածության մասին, գործանականում փոռամասնությունների նկատմամբ իր կողմից փառվող բաղախականությունը դեռ ծայրասիծան անարդյունավետ է: Թերի կրացական հասարակության համար ժողովրդավարական արժեքները սարեցարի ձեռք են ընդուն ավելի մեծ նեանակություն, երկրու բնակվող փոռամասնությունների հետ կաղված հարցերում ժեսանելի առաջընթացի բացակայությունը հանգեցնում է արդեն գոյություն ունեցող խնդիրների սրմանը:

Այդ հարցերի լուծման կամ դրական առաջընթաց գրանցելու գործում հետխորհրդային Վրաստանի անկարողությունը մեծ չափով դայմանավորված է առարկայական ղամառներով, մասնավորապես, համայնակարական վարչակարգի ժառանգությամբ: Հարավային Օսիայի եւ Արքսագիայի արյունու հակամարտությունները, 1990-ականների առաջին կեսի ներքին խժդությունները, ինչպես նաև ծանր սոցիալ-ընտեսական իրավիճակը միայն վատրարացեցին փոռամասնությունների դրույթունը: Սակայն իրենց դերու ունեցան նաև ներքայական գործուները, եւ առաջին կեսի ներքին

1 Վերջին տարիներին եկորողական լեզուներում նշմարվում է «ազգ» եւ «էթնոս» եղբերի սահմանակառություն: «Ազգ» ու «ազգային» (nation, national) եղբերը գնայով կիրառվում են այս կամ այն լետուրյան ողջ բնակչության նկատմամբ, իսկ «էթնոս», «էթնիկական» եղբերն այն խմբերի նկատմամբ, որոնց հայերենով ընդունված եր «ազգություններ» կամ «ազգեր» անվանել: Այս եղբարակությունը դեռ աճքողջովին չի հասավել, մասնավորապես, 20-րդ դարու ընդունված մի շարք միջազգային փաստարդերում ինչորեւ ուստեանով, այնուա էլ անգերենով «ազգային» ու «էթնիկական» եղբերը միասնա փոխարինում են: Ծիրոյից խոսավելու նորագույն ներկա ուսումանիրության մեջ մեծ հետակա ենի ժամանակակից ձեւն եւ խուելու ենի «էթնիկական փոռամասնություններ» ու «էթնիկական բաղախականության» մասին, բացառությամբ այն դեմքների, եր մեծ հղում ենի կատարելու այս կամ այն փաստարդեցից, որ եղբերն այլ կերպ են կիրառվում:

փոքրամասնությունների խնդիրների նկատմամբ իր վերաբերմունքը արմատապիս վերանայելու հաղափական կամքի եւ վճռականության բացակայությունը։ Զնայած վրացիներին ավանդաբար բնորու ազգային ու կրոնական բազմակարծությանը, Վրաստանում էքնիկական փոքրամասնությունների նկատմամբ վարչող հաղափականության վրա իր ազդեցությունն են քողնում արդի վրացական հասարակության ներսում, որուակի շրջանակների մոտ ազգայնական միտումները եւ, անզամ, այլայսացությունը։ Բացի դրանից, երկրում բնակվող էքնիկական փոքրամասնությունների նկատմամբ վրացական դեմության ու հասարակության վերաբերմունքի վրա իր ազդեցությունն է քողնում նրանց «Էքնիկական հայրենիքներ» հանդիսացող երկրների հետ Վրաստանի փոխհարաբերությունների բնույթը։ Վերջապես, փոքրամասնությունների վրա առավելագույն չափով են անդրադառնում նաև երկրի համար ընդհանուր խնդիրները, ինչպիսիք են կոռուպցիան ու մարդու իրավունքների խախտումները, բանի ու փոքրամասնությունների ներկայացուցիչները Վրաստանում ձեռավորող հաղափական հասարակության հաճախ առավել անդաւաժան անդամներն են դառնում։

Վրացական դեմության կողմից ողջ հետխորհրդային ժամանակաշրջանում փոքրամասնությունների նկատմամբ իրականացվող հաղափականությունը ոչ միայն չնողասեց փոքրամասնությունների համարկմանը, այլ, ընդհակառակը, ուժեղացրեց միջէքնիկական հարաբերությունների բացասական ներուժը։ Որու փոքրամասնություններ զնալով ավելի են հեռանում վրացական դեմությունից եւ երկրի հասարակական ու մշակութային կյանքին համարկվելու որուէ դատարաւակամություն չեն ցուցաբերում։

Սակայն, ինչողես վկայում է միջազգային փորձը, նման խնդիրներ ծագում են առ երկրներում եւ բնավ էլ անլուծելի չեն, բայց դրանց լուծումը (համարկես, փոքրամասնությունների համախումբ բնակության շրջաններում) դահանջելու է բոլոր մակարդակների դեսական կառույցների հաղափականության ազատականացում, ինչողես նաև վրացական հասարակության դիրքուրուման արմատական վերափոխություն։ Փոքրամասնությունները դեսֆ է զգան, որ իրեն եւս Վրաստանի հասարակության լիարժեք անդամներ են եւ հնարավորություն ունենան ստանձելու միասնական դեմության ձակատագի նկատմամբ դատախանակության իրենց բաժինը։ Դա հնարավոր է միայն այն դեմքում, եթե վրացական դեմությունը եւ հասարակությունը դադարեն էքնիկական փոքրամասնություններին որոշես օսաբներ կամ անցանկախ սարրեւ դիտարկելուց, երբ իրական հեռանկարներ կստեղծվեն երկրում բնակվող փոքրամասնությունների ոչ խորական կադրային ու սոցիալական աճի համար։ Մասնավորապես, երկրի հաղափական, մշակութային ու սոցիալ-սննդական

դաւում փոքրամասնությունների համարկման համար կարեւոր խրան կարող է դառնալ փոքրամասնությունների համախումք բնակության տջաններում իրական ինքնակառավարման հաստատումը, ինչդեռ նաև նրանց էթնիկական ինքնության դահլյաննան համար միջոցների ձեռնարկումը: Այդ դայմաններում էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչները Վրաստանում իրենց բաղադրիչների հասարակության կառուցման գործուն մասնակիցներ կզգան:

Այդ նոյառակին հասնելու համար դեռության, ընտախավի եւ հասարակության մոտ համադաշխան կամքի առկայությունը բավարար դայման չէ: Ինչդեռ ցոյց է տալիս դեռ ոչ վաղ անցյալուն նման խնդիրների հետ առնչված, սակայն, վերջին ժամանակներում էթնիկական փոքրամասնությունների համարկման հարցերում մեծ հաջողությունների հասած եվրոպական դեռություններից շատերի օրինակը, այդ գործընթացը դասհանջելու է միջազգային հանրության առավել ակտիվ ներգրավում ու օգնություն, վրացական ներքին օրենսդրության մեջ հիմնարար միջազգային-իրավական նորմների ու համաձայնագրերի դրույթների ներմուծում եւ ամելացն էթնիկական, կրոնական ու ռասայական դասկաններությունների օրենքի ու նարդու իրավունքների գերակայության հաստատում Վրաստանում:

Վրաստանն ավանդաբար բազմազգ երկիր է եղել: Այնտեղ դարեւով բնակվել են սարբեր ժողովուրդներ, որոնք նւանակալից ավանդ են ունեցել վրացական մշակույթի զարգացման եւ դեւականության կայացման գործում: Ռուսական կայսրության կազմի մեջ Վրաստանի ներգրավվումից հետո, 19-րդ դարի կեսերին, ժամանակակից Վրաստանը կազմող սարածերում բնակվում էին այլ ազգությունների մեծ թվով ներկայացուցիչներ, որոնք որոշ տջաններում բնակչության մեծամասնությունն էին կազմում: Սակայն սկսած 19-րդ դարի վերջերից եւ 20-րդ դարի սկզբներից, էթնիկ վրացիների թիվն սկսեց աճել: Այդ գործընթացներն էլ ավելի արագացան խորհրդային ժամանակաշրջանում: Ի թիվս նախկին ԽՍՀՄ միգրացիոն իրավիճակին հատուկ այլ գործոնների դրան նոյառում էին նաև այնովհայ գործընթացներ, ինչդիսիք էին Վրաստանից հիմնականում հայ եւ աղբեջանցի բնակչության մշտական արտահոսքը Հայաստան, Արքեթան ու հարեւան այլ հանրատեսություններ, 1944թ. բորբ-մեսխեթցիների եւ համենահայերի բռնի սեղահանումը Միջին Ասիա, ձուզման գործընթացների ակտիվացումը եւ այլն:

**Աղյուսակ 1. Վրացական ԽՍՀ-ի բնակչության էթնիկական կազմի  
փոփոխության դիմամիկան 1926 - 1979 թթ.<sup>2</sup>**

Ազգություն	1926		1939		1959		1979	
	հազ. մարդ	%						
Վրացիներ	1 788,2	66,8	2 173,5	61,4	2 600,5	64,3	3 433,0	68,8
Արևազգիներ	56,8	2,1	56,6	1,6	62,9	1,5	85,3	1,7
Օստրոներ	113,3	4,2	148,7	4,2	141,2	3,5	160,5	3,2
Հայեր	307,0	11,5	414,2	11,7	442,9	11,0	448,0	9
Հունաներ	96,1	3,6	30,8	8,7	407,9	10,1	371,6	7,4
Ուկրաինացիներ	14,4	0,5	46,0	1,3	52,2	1,3	45,0	0,9
Ադրեզանցիներ <sup>3</sup>	143,9	5,4	187,6	5,3	153,6	3,8	255,7	5,1
Հույներ	54,0	2,0	84,9	2,4	72,9	1,8	95,1	1,9
Հեռաներ	30,2	1,1	42,4	1,2	51,6	1,3	28,3	0,6
Այլ	73,1	2,8	77,9	2,2	58,1	1,4	76,0	2,0

1991թվականին անկախություն ձեռք բերելոց հետո Վրաստանի էթնոժողովրդագրական դասկերն էադես փոխվեց: Վրաստանի առաջին նախագահ Զվիադ Գամսախուրիդիան սկսեց երկրում բնակվող փոփոխանությունների նկատմամբ ազգայնամոլ արմատական բաղադրականություն իրականացնել: Հետխորհրդային Վրաստանի դասմության այդ ժամանակաշրջանը բնութագրվում էր ոչ միայն վրացական դեկավարության եւ բաղադրական ուժերի ծայրահեղ ազգայնական հայտարարություններով եւ գործողություններով, այլև համընկավ երկրում խորը բաղադրական եւ սննդապահ զգացմանի, բաղադրական դաշտեազմի եւ Արխագիայում ու Հարավային Օսիայում զինված հակամարտությունների հետ: Հենց իննունական թվականներին սեղի ունեցան Բորժոմի եւ Ծիլա-Քարթլիի շրջանների որու բնակավայրերից՝ օսերի, եւ Քվեմո-Քարթլիի շրջանի որու զյուղերից՝ ադրեզանցիների սեղահանությունները<sup>4</sup>: Ակսվեց նաև ուս բնակչության հիմնականում Թրիլիսից, դոլսորոններ՝ Սամցխե-Զավախիլի Նինոծմինդայի

- 
- 2 Ջյառաւու Յ.Ի. Նаселение Грузии: экономико-географическое исследование. Тбилиси, 1968. С.48.; Официальные данные Всесоюзных переписей населения в СССР в 1926 – 1979 гг.
- 3 1926 եւ 1939 թթ. մարդահամարների թվաքանում ադրեզանցիների (նախկին կովկասյան բարաների) թվում դասվեցին դարսիկները եւ բյուրական ազգությունների ներակայացուցիչները (բորժոմ, բուրժոնները, բորժ-մետարքիներ եւ այլն):
- 4 Քվեմո-Քարթլին Վրաստանի հարավ-արևելքում գտնվող վաշշարածքային միավորներից մեկն է: Այն ներառում է մի բանի շրջաններ, որոնց բնակչության զգայի մասն էթնիկական փոփոխանությունների ներկայացուցիչներ են, հիմնականում ադրեզանցիներ, հայեր եւ հույներ:

Եղանակ<sup>5</sup>, հոյների՝ Քվեմո-Քարթլիի Ծալկայի Եղանակ, ինչպես նաև հայերի՝ Թքիլիսիից ու Սամցխե-Զավախսից արտագաղթը։ Գրեթե բոլոր այս Եղանակներում կենտրոնական իշխանությունները բայց ձեռնակեցին դատարկված բնակավայրերն Ազարիայից, Վրաստանի ներքին և արեալային Եղանակներից բերված վրացիներով ու, մասմար, Արխագիայից՝ փախստականներով բնակեցնելու ուղղությամբ, ինչը հաճիքեց միայն կենտրոնական իշխանությունների և փոփրամասնությունների միջև հարաբերությունների հետագա վարժարացմանը։

Վրաստանում Շենարդմանական իշխանության գաղուց հետո կենտրոնական իշխանությունների ու փոփրամասնությունների միջեւ դիմակայությունը որոշ չափով բոլուացավ, սակայն ոչ-ժիշդրասակիր ազգերի ներկայացուցիչների ակտիվ արտագաղթը շարունակվեց։ Այդ Եղանակում վրացական իշխանություններն ասիդանաբար կարողացան որոշակի վերահսկողություն հաստակել էքիպական փոփրամասնությունների համախումբ բնակության Եղանակների նկատմամարք։

2003 թվականի «Վարդերի հեղափոխությունից» հետո անցած ժամանակաշրջանում Վրաստանում նարդու և էքիպական փոփրամասնությունների իրավունքների դատավանության ոլորտում սկսվեց ձեռավորվել արմատական նոր իրավիճակ։ Մի կողմից, դեռական մարմինները, համարեն սոցիալ-սենտրալական ոլորտում, սկսեցին գործել շատ ավելի արդյունավետ։ Մյուս կողմից, իշխանության ներկայացուցիչներից շատերի ելույթներում դարձյալ տեղ գտան հարձակողական-ազգայնական և ծայրահետ ամրութափական բառադաշտությունների հետ (Արխագիայի և Հարավային Օսիայի շուրջափոյք վերամիավորում Վրաստանին), եւ, հետեւաբար, ուղղված էր առաջին հերթին օսերի, արխագիների և ոռուների դեմ, էքիպական այլ փոփրամասնությունների բազմաթիվ ներկայացուցիչներ, ելնելով 1990-ական թվականների սկզբների ժանուարի վերահսկողության դեկապարության այդ կոչերն ընկալում էին իրենց դեմ որդես։ Առավել են, որ այս բոլորն ուղեկցվում էր փոփրամասնությունների համախումբ բնակության վայրերում ուժային կառույցների գործունեության կրոնիկ խստացմամբ և բացասական միջադեմքերի մակարդակի ու հաճախականության աճով։

5 Սամցին-Զավախսի Վրաստանի հարավում գտնվող Վաշչա-Տարածքային միավորներից մեկն է (Շենարդման է 6 Եղանակ), սահմանակից է Թուրիային և Հայաստանի։ Նահանգի բնակչության մեծամասնությունը հայեր են, իսկ Ավապախատի և Նինոծնինդայի արեւելյան երկու Եղանակներում, նրանք բազարձակ մեծամասնություն են կազմում (մոտավորապես 94-95%)։ Վրացական տառապարձամամբ այս երկու աշխարհագրականորեն միացված Եղանակներն անվանվում են Զավախսերի, իսկ հայերն այն անվանում են Զավախս։

Սակայն, այս ամենի հետ մեկտեղ, դեսք է ընդգծել, որ 2003թ. «Վարդերի հեղափոխությունից» հետո Վրաստանի արտաքին բաղաբականության եվրոպական և Եվրազանցյան ուղղությունների ակտիվումը հանգեցրեց վրաց բաղաբական ընտրախավի կողմից մարդու իրավունքների, բազմակարծության և կրոնական ու էթնիկական դասկանելությունից անկախ բոլոր բաղաբացիների հավասարության, էթնիկական փոփրամասնությունների դաշտանության հարցերում որու մոտեցումների ժամանը: Դա արտահայտվեց միջազգային և Եվրոպական նորմատիվ-իրավական ակտերի Վրաստանի ներքին օրենսդրությունում կիրարկման ուղղությամբ առաջին, թե՛ւ թերի և անվճռական ժայլերի ժեսով:

Սակայն, փոփոխություններն առաջմ արտահայտվել են օրենսդրական ու հոչակագրային ճակարդակներում և զործնական արդյունքների չեն հանգեցրել: Ավելին, ձգտելով երկրի հասարակական-բաղաբական կյանքում փոփրամասնությունների համարկման հարցում արագործեն հասնելու ժամանելի արդյունքների՝ Վրաստանի իշխանությունները կրուկ կերպով արագացեցին սվյալ ուղղությամբ, հատկապես՝ լեզվական և կրթական հարցերում, իրենց բաղաբականությունը, ինչը միայն հակառակ արդյունքներ սվեց: Այդ դայմաններում շարունակվում է լարվածությունն կուտակվել հատկապես՝ էթնիկական փոփրամասնությունների համախումբ բնակչության շրջաններում, ինչը ժամանելի աղազայում ինչղես Վրաստանի, այդղես էլ Հարավային Կովկասի ողջ տարածաշրջանի համար կարող է բացասական բաղաբական հետևանքների հանգեցնել:

## Աղյուսակ 2. Վրաստանի ազգաբնակչության 1989 և 2002թթ. դաշտանական մարդահամարների սվյալները

Ազգություն	1989		2002		Փոփոխությունները 1989-2002թ.
	հազ. մարդ	%	հազ. մարդ	%	
Վրացիներ	3 784,4	70,1	3 661,2	83,8	-126,2
Արևազիներ	95,9	1,8	3,5	0,1	-92,3
Օւեր	164,1	3	38,0	0,9	-126,0
Հայեր	437,2	8,1	248,9	5,7	-188,2
Ուսումնական	341,2	6,3	67,7	1,5	-273,5
Ուկրաինացիներ	52,4	1,0	7,0	0,2	-45,4
Ալբերտացիներ	307,6	5,7	284,8	6,5	-22,8
Հոյներ	100,3	1,9	15,2	0,3	-85,1
Հետաներ	24,8	0,5	3,8	0,1	-20,9
Զրդիներ	33,3	0,6	2,5	-	-30,8
<b>Ընդամենը</b>	<b>5 400,8</b>	<b>100</b>	<b>4 371,5</b>	<b>100</b>	<b>-1 029</b>

Ինչդես Երեսում է այս սվյալներից, 2002թ. մարդահամարի սվյալներով Վրաստանի բնակչության թիվը (բացառությամբ Արխագիայի եւ հարավային Օսիայի տարածքների, որոնք չեն վերահսկվում վրացական կառավարության կողմից) կազմում էր 4 371,5 հազ. մարդ: Խորհրդային ժամանակաշրջանի հետ համեմատած, Երկրի բնակչության նվազումը 1 029,3 հազ. մարդով, հիմնականում արտագաղթի հետևանք է: Տվյալ ժամանակահատվածում վրացիների թվաքանակը նվազել է միայն 126,2 հազ. մարդով: Հետխորհրդային ժամանակաշրջանում Երկրից արտագաղթածների մեծամասնությունը էրնիկական փոնքամասնությունների ներկայացուցիչներ են՝ ոռուներ, ուկրաինացիներ, հայեր ու հույններ: Վրաստանում էրնիկական փոնքամասնությունների ընդհանուր թիվն այդ տարիների ընթացքում 1 613 հազ. մարդուց նվազել է մինչեւ 710 հազ. մարդու, այսինքն, ընդհանուր թիվ 56%-ով, այն դեպքում, երբ էրնիկական վրացիների թվաքանակը նվազել է միայն 3%-ով:

Արդյունքում, ժամանակակից Վրաստանի էրնիկական եւ ժողովրդագրական դասկերն էադես ձեռակիոլիստի է: 2002թ. մարդահամարի սվյալներով վրացիները կազմում են Երկրի բնակչության թիվի 83%-ը, այն դեպքում, երբ 1989թ. նրանց տեսակարա կշիռը կազմում էր 70,1%: Վրաստանի էրնիկական խուռա փոնքամասնություններից բացառություն են կազմում միայն աղքեցանցիները, որոնց թիվը հետխորհրդային ժամանակաշրջանում նվազել է միայն 7%-ով (22,8 հազ. մարդով), սակայն, դրա հետ մեկտեղ, աճել է նրանց տեսակարա կշիռը Վրաստանի մնացած բնակչության նկատմամբ՝ 5,7%-ից հասնելով մինչեւ 6,5%-ի:

Ներկայունս Վրաստանի առավել խուռաքիվ էրնիկական փոնքամասնություններն են հայերը, աղքեցանցիները, օսերը, ոռուները, հույները, քրիստոնյաները, կիստինները (չեչեն-վայնախներ), հրեաները:

## Հայեր

Հայեի առնելով Արխագիայի եւ Հարավային Օսիայի հայ բնակչությունը՝ հայերը տարունակում են մնալ Վրաստանի խուռաքուն էրնիկական փոնքամասնությունը, թեև վրացական իշխանությունների կողմից դե-ֆակտո վերահսկվող տարածքներում նրանք, ըստ դաշտնական սվյալների, ավելի փոնքաքիվ են, քան աղքեցանցիները: Ըստ 2002թ. մարդահամարի սվյալների Վրաստանի սվյալ տարածքի վրա բնակվում է 248,9 հազ. հայ, ինչը կազմում է Երկրի բնակչության 5,7%-ը: Սակայն, դեմք է հայեի առնել, որ միայն Արխագիայում, մինչեւ 1990-ական թվականների սկզբների ռազմական գործողությունները, բնակվում էր ավելի քան 100 հազ. հայ:

Վրաստանի տարածում հայերը հիմնականում համախունք բնակվում

Են երկու վարչատարածքային միավորներում՝ Սամցխե-Զավախսում և Քվեմո-Քարթլիում։ Սամցխե-Զավախսի Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջաններում հայերը կազմում են բացառակ մեծամասնություն՝ բնակչության ուրոշ 94-96%-ը։ Սամցխե-Զավախսի Ախալցխայի շրջանում հայերը կազմում են ազգաբնակչության գրեթե կեսը։ Բավական մեծ թվով հայեր բնակվում են Քվեմո-Քարթլիի նահանգի Ծալկայի և Բոլնիսի շրջաններում։ Հարուս ղամմական ավանդույթներ ունեցող հայկական համայնք կա Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում (ըստ swarptեր սվյաների ներկա ղահին նրա թվաբանակը կազմում է առնվազն 100 հազ. մարդ)։ Որոշակի թվով հայեր բնակվում են Աջարիայում, իմանականում Բարումի հաղափում։

Հայերը զիսավորադես Հայ առանձիւ կան եկեղեցու հետեւրդներ են, որու մասը կարողիկություն է դաշտանում։

### *Այրեցանցիներ*

Այրեցանցիները Վրաստանում թվով երկրորդ էրեմիկական փոքրամասնությունն են։ Նրանք հիմնականում բնակվում են Վրաստանի արեւելյան և հարավ-արեւելյան շրջաններում։ Նրանց առավելագույն մասը համախոսնք կերպով բնակվում է Քվեմո-Քարթլիի նահանգի Մառնելովի, Բոլնիսի, Դմանիսի և Գարդաբանիի շրջաններում, որտեղ նրանք կազմում են բնակչության մեծամասնությունը կամ բավականին զգայի մասը։ Մեծ թվով այրեցանցիներ բնակվում են Ծալկայի շրջանում, այրեցանական ոչ մեծ բնակավայրեր կան նաև Կախեթի և Շիրա Քարթլիի նահանգներում։

Որոշակի թվով այրեցանցիներ բնակվում են նաև Թբիլիսի, Ռուսավի և Բարումի հաղափում։ Այրեցանցիների կեսից ավելին սումիներ են, մնացած մասը՝ շիաներ։

### *Օւեր*

Օւերը հիմնականում բնակվում են Հարավային Օսիայի տարածքում, որի զգայի հատվածը ներկայում չի վերահսկվում վրացական իշխանությունների կողմից։ Մինչեւ վրաց-օսական զինված հակամարտությունը, 1990-ական թթ. սկզբներին, մեծ թվով օւեր բնակվում էին ներկայիս Սամցխե-Զավախսի նահանգի Բորժոմի շրջանում։ Օսական բնակավայրեր կային Կախեթում, ու բնակչություն կար նաև Թբիլիսիում։

1990-ական թվականների սկզբների դեմքերից հետո Վրաստանի ներքին շրջաններում բնակվող օւերի մեծ մասը քողել է երկիրը։ Ներկայումս, Վրաստանում օւերի թիվն էապես նվազել է, եւ նրանք, հիմնականում, բնակվում են մայրաքաղաքում և Հարավային Օսիային հարող որու բնակավայրերում։

Վրաստանում բնակվող օսերի մեծամասնությունն ուղղափառ եկեղեցու հետեւողմներ են:

### *Ոռութեան*

Խորհրդային ժամանակներում Վրաստանում գոյություն ուներ բավականին հոծ ռուսական համայնք, որը ձեռավորվել էր 19-րդ դարից սկսած, երկիրը Ռուսասական կայսրությանը միացվելուց հետո: ԽՍՀՄ-ի փլուզման նախօրյակին բավականին մեծ թվով ռուս բնակչություն կար նաև Արխագիայում: Սակայն, 1990-ական թվականներին ռուսների մեծ մասը տարբեր դաշտառներով սիրոված եղավ լինել Վրաստանը:

Ներկայում ռուսների մեծամասնությունը բնակվում է Թբիլիսի, Ռուսավի, Քարումի քաղաքներում: 1840-ական թվականներին վերաբնակեցված դուխտոր կրոնական ուղղությանը դատկանող էրնիկական ռուսների ոչ մեծ համայնք կա Զավախսում: Էրնիկական ռուսների մնացած մասը հիմնականում ուղղափառ եկեղեցու հետեւողմներ են:

### *Հովանութեան*

Հիմնականում բնակվում են Քվեմո-Քարթիի Թեթրիծղարոյի և Շալկայի տղաներում: Խորհրդային ժամանակներում Արխագիայում գոյություն ուներ հոնական մեծ համայնք, սակայն այնտեղ ընթացող ռազմական գործողությունների տղանում հոյների մեծամասնությունը հոնական կառավարության կողմից տարհանվեց Հոնաստան: Շալկայի և Թեթրիծղարոյի տղաներում բնակվող հոյների մեծ մասն սկսած 1990-ական թվականներից նոյնույն արտաքարթեց Հոնաստան: Ներկայում հոյն բնակչության թվաքանակը համեմատաբար մեծ չէ, որու թվով հոյներ բնակվում են նաև Աջարիայում և Թբիլիսիում: Հոյների ճնշող մեծամասնությունը ուղղափառ եկեղեցու հետեւողմներ են:

### *Կիստինանութեան*

Կիստիները համախումք կերպով բնակվում են հիմնականում Կախեթի Ախմետա տղանի Պանկիսիի կիրճում: Նրանք կազմում են կիրճի բնակչության մեծամասնությունն ու հիմնականում խսլամի սունի ուղղության հետեւողմներ են:

## **ԳԼՈՒԽ 1.**

**Մարդու և էրնիկական փոքրամասնությունների իրավունքների  
դաշտանուրյան ոլորտի միջազգային-իրավական նորմերին  
ու մեխաիզմներին Վրաստանի համադատասխանության  
մակարդակը**

Միջազգային բնույթ ունեցող արդի հակամարտություններն, հաճախ այդովին են դասնում հենց այն դաշտառով, որ ժամանակին այս կամ այլ դեւուրյուններում փոքրամասնություն կազմող էրնիկական խմբերին ներփական միջոցներով չեն տրամադրվել նրանց էրնիկական փոքրամասնության կարգավիճակին համադատասխանող ազատություններ ու իրավունքներ: Միջազգային հանրությունն աստիճանաբար զիսակցում է, որ անհարական ու հանրային իրավունքների եւ ազատությունների խախման հետևանքով ներդեւական հակամարտությունը կարող է վերաձել արդեն միջազգային իրավունքի եւ միջազգային հարաբերությունների տեսանկյունից որպատճեն այլ՝ միջազգային կամ միջդեւական բնույթի հակամարտության, երբ առաջ են հաւաքում խախտող-դեւուրյան սահմաններից դուրս իննորոշումներու դահանջներ:

Վրաստանը միջազգային միջկառավարական տարրեր կազմակերպությունների անդամ է, որոնց օրշանակներում նա ստանձնել է մարդու իրավունքների եւ էրնիկական փարամասնությունների դաշտանուրյան գծով միջազգային-իրավական դարտավորություններ: Միենույն ժամանակ, ինչողեւ ցույց է տրվելու ստորև, Վրաստանի կողմից ստանձնած դարտավորությունների ծավալն ու դրանց իրականացման մակարդակը, հատկապես՝ լեզվական եւ փոքրամասնությունների իննակառավարման իրավունքի հարցերում, ժողովրդավարական դեւուրյան համար բավարար չեն: Միենույն ժամանակ, միջազգային կազմակերպությունների, առանձին դեւուրյունների եւ հանրության սկզբունքային դիրքորոշումը եւ վրացական կենսորնական իշխանությունների հետ նրանց միջազգային-իրավական դարտավորությունների հարցերի ուրության երկխոսությունը, կարող են հանգեցնել մարդու եւ փարամասնությունների իրավունքների իրական դաշտանուրյան, Վրաստանի հասարակական-քաղաքական կյանքին նրանց համարկման համար բնականն իրավաբարեկական նախադրյալների ստեղծման:

Վրաստանի էրնիկական եւ կրոնական փոքրամասնությունների սոցիալ-սեփական եւ քաղաքական ծանր կացությունը դայմանավորված է նաև ոչ-հիմնական էրնիսների ներկայացուցիչների եւ ոչ-ուղղափառ կրոնական համայնքների նկամամբ կենսորնական իշխանությունների քաղաքականուրյան եւ վրացական հասարակության լարված վերաբերնունքով: Այդ դաշտառով

առանձին հարցերին լուծում տալը չի կարող հաճգեցնել իրավիճակի ընդհանուր բարելավման, որն օժակած է զգալի բախումնային ներուժով։ Անհարաժեշտ է խնդրի նկատմամբ դրսեւող համայիշ մոտեցում, շեշտը դնելով հենց միջազգային իրավական պարավորությունների կատարման վրա, որոնց տարին ու ոգուն համապատասխան էլ պետք է փարովի, ընդհանրապես, փոփրամասնությունների, եւ, մասնավորապես, էքսիլսական փոփրամասնությունների նկատմամբ հաղորդականությունը։

Որդեսզի ուրվագծենմ իրավական դաշտը, որի տրամակներում ժողովրդավարական Վրաստանին առաջիկայում վիճակված է կարգավորել փոփրամասնությունների խնդիրները, անհրաժեշտ է հստակեցնել, թե այդ ոլորտում ինչողիս միջազգային-իրավական դարտավորություններ է Վրաստան արդեն ստանձնել եւ ինչողիս դարտավորություններ այն դեմք է ընդունի։ Պետք է հաւաք առնել, որ մարդու եւ փոփրամասնությունների իրավունքների դաշտավանության ոլորտում միջազգային-իրավական նորմների ու մեխանիզմների հիմնական աղբյուրներ՝ ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի եւ Եվրախորհրդի տրամակներում ընդունված փաստքրերը, ինչողես գործողության ոլորտով, այնուև էլ նաև ակադեմիա պետությունների համար իրավական (եւ կամ բարեփական) ասիժանով էալես սարքելում են։

## 1.1. Միջազգային-իրավական նորմերը ՄԱԿ-ի տրամակներում

Վրաստանը Միացյալ Ազգերի Կազմակերպության անդամ է 1992թ. հուլիսի 31-ից։ ՄԱԿ-ի առանձնահասկությունը նրանում է, որ այն միակ միջազգային միջկառավարական կազմակերպությունն է, որը բոլոր դեսություններն իր մեջ ներառում է որդես միջազգային իրավունքի սուբյեկտներ, սակայն, միեւնոյն ժամանակ, նրա տրամակներում ընդունվող միջազգային ակտերը նաև ակտեր մասնակից-դեսությունների համար չունեն միջազգային-իրավական դարտադր ուժ։ ՄԱԿ-ի գլխավոր խորհուրդը (ՄԱԿ-ի ԳԽ) լիազորված է առանց ռասայական, սեռական, լեզվական եւ կրոնական խորհրդականության մարդու իրավունքների եւ ազատությունների իրականացնան աջակցելով նորաւակով հանձնարարականներ տալու։ Հանձնարարականները հիմնականում արտահայտվում են ԳԽ-ի բանաձեւերով որոնք դեսությունների կողմից ընդունվում են դրանց օգտին տրված բարեների միջոցով, այսինքն բվեարկությամբ, այլ ոչ թե սոնրացրությամբ։ Իրավական ժեսանկյունից դա չի դարտավորեցնում սվյալ բանաձեւի օգտին բվեարկած դեսությանը իրականացնել դրանում նորմերը։

Նորմերի ստեղծման սլյալ ժեսակը եւ, համապատասխանաբար, նորմերը, որոնի ժես են գտել ՄԱԿ-ի ԳԽ հոչակագրերում, միջազգային իրավունքի ժեսության մեջ սացել են «փափուկ իրավունք» անվանումը։ Դրանից չեն դարտավորեցնում,

սակայն ընդունող մարմնի՝ ՄԱԿ-ի Գլխավոր խորհրդի հեղինակության ուժով ուղղում են ղետությունների վարքը դեռի իրավական հում, կոչ են անում նրանց դահլիճներ և իրականացնել դրանցում ամրագրված նորմերը:

Հոչակագրերի հետ մեկտեղ, ՄԱԿ-ի ԳԽ-ը նոյն կարգը ընդունում է եւ կոնվենցիաներ, ընդ որում, դրանց ընդուման ժամանակ սվյալ կոնվենցիային միանալու, սոնրագրելու եւ վավերացնելու հնարավորության վերաբերյալ միւս դաշտաբանում է տրվում: Նման բնույթի փաստարդերից են, օրինակ, **Ռազմական խորականության բոլոր ձեւերի վերացման մասին միջազգային կոնվենցիան** (1965թ.) եւ **Երեխայի իրավունքների հոչակագրը** (1959թ.): Առաջինը տալիս է զանազան, եւ, առաջին հերթին, ռազմական, կրօնական, եւ էքսիլիական հատկանիւնների հիման վրա խորականության արգելման համընդիանուր ձեւակերպությը: Երկրորդը ոչ նվազ կարեւոր է փորձամասնությունների իրավունքների դաշտամասնության համար, բանի որ Երեխայի ձեւավորվող անհատականության հիմքում դեսք է դրվի իր էքսիլիական ինքնաշխատության և իր էքսիլիական կարգավիճակի դաշտամասնության վիճելու համոզվածության զգացումը, ինչու նաև դեսք է նրան ներարկվեն էքսիլիական մշակույթի հիմքերը և հնարավորություններ ստեղծեն մայրենի լեզվով կրություն ստանալու համար:

ՄԱԿ-ի համակարգում գործում են անձի կարգավիճակի իրավական աղահովության ողջ համայիրի դաշտամասնության ինստիտուտներն ու մեխանիզմները, որոնց միջոցով միջազգային հանրությունն իրագելվում է ժամանակակից միջազգային հարաբերությունների կարեւորագույն կանխադրույթին՝ էքսիլիական փորձամասնությունների իրավունքների անդամանականությունը, առավել եւս, ուղղակի խախտումը ու դրանց նկատմամբ խորական վերաբերունքը խաղաղության եւ անվտանգության միջազգային-իրավական աղահովման ողջ համակարգի համար սղառնալիք է ներկայացնում:

Էքսիլիական փորձամասնությունների իրավունքների դաշտամասնության հարցում ՄԱԿ-ի մուտքումները կրում են ընդիանուր, կարելի է ասել, հիմնային բնույթ: Տվյալ հարցին վերաբերվող բոլոր հոչակագրերում եւ կոնվենցիաներում տրվում է խորականության անբոլյաստիլիտության մասին ընդիանուր նորմ, առանց էքսիլիական փորձամասնությունների կոնկրետ իրավունքների եւ դեւությունների կողմից դրանց դաշտամասնության երաշխիքների մատնանշման: Բացառություն է կազմում **Ռազմական խորականության բոլոր ձեւերի վերացման մասին 1965թ. միջազգային կոնվենցիան**, որտեղ տրվում է իրավունքների որոշակի բարկում եւ նախատեսվում է դրանց դահլիճանման վերահսկողության մեխանիզմ, ի դեմս Ռազմական խորականության բոլոր

Ճեթրի վերացման հանձնաժողովի: Այս Հանձնաժողովի գեկոյցներում բազմից նշվել է 1965թ. Կոնվենցիայի դրույթներին Վրաստաճի ներքին օրենսդրության անհամաղատասխանության եւ այդ երկրի կողմից դրանք չկատարելու մասին<sup>1</sup>:

Տվյալ ոլորտում ՍԱՀ-ի մեկ այլ գործուն մեխանիզմներից է Մարդու իրավունքների հանձնաժողովը, որը գործում է որպես ՍԱՀ-ի սնտեսական եւ սոցիալական խորհրդի (ՏՈԽ) օժանդակ մարմին եւ լիազորված է ևլյալ խորհրդի ֆինարկմանը ներկայացնելու առաջարկություններ, հանձնարարականներ եւ գեկոյցներ: Հանձնաժողովն ունի ՏՈԽ-ի որոշմանք ստեղծված օժանդակ մարմին՝ Մարդու իրավունքների աջակցության ու դաշտանության ենթահանձնաժողովը: Ենթահանձնաժողովի շրջանակներում գործում է ազգային կամ էրնիկական, կրոնական եւ լեզվական փորձամասնություններին դատկանող անձանց իրավունքների հարցերով զբաղվող աշխատանքային խումբ: Աշխատանքային խմբի գործունեության իրավական հիմքը Ազգային կամ էրնիկական, կրոնական եւ լեզվական փորձամասնություններին վետականող անձանց իրավունքների մասին 1992թ. հոչակագիրն է:

Ընդհանուր առմանք Վրաստաճը ստորագրել կամ միացել է մարդու, էրնիկական ու կրոնական փորձամասնությունների իրավունքների դաշտանության, խորականության բոլոր ձեւերի դեմ դայլարի ոլորտին վերաբերվող ՍԱՀ-ի գործնականում բոլոր փաստաթղթերին (Տե՛ս Հավելվածը):

## 1.2. Միջազգային-իրավական նորմերը ԵԱՀԿ-ի շրջանակներում

Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ)<sup>2</sup> նոյնույն օժանդակ է մի շարք մեխանիզմներով, որոնք ուղղակիորեն վերաբերվում են էրնիկական փարքամասնությունների իրավունքների դաշտանության ոլորտին: Դրա հետ մեկտեղ դեմք է նետել, որ մարդու եւ էրնիկական փորձամասնությունների իրավունքների դաշտանության ոլորտին: Դա կարգված է ԵԱՀԿ-ի միջազգային իրավաներակայության որոշակի յուրահատկության հետ. կազմակերպությունը չունի կանոնադրություն, գործնականում չունի փաստաթղթերով ամրագրված հստակ լմբացակարգեր, գործունեության միասնական կանոնակարգ, հենվում է նախադեմերի եւ դրակիլայի վրա: Ենթադրվում է, որ ԵԱՀԿ-ի

1. Տե՛ս նամանամաս՝ Report of the Committee on the Elimination of Racial Discrimination Fifty-eighth session (6-23 March 2001) Fifty-ninth session (30 July-17 August 2001) General Assembly Official Records Fifty-sixth Session Supplement No. 18 (A/56/18). New York, 2001. P.26-27.

2. Մինչև 1994 թ. կազմակերպությունը դաշտանայտես կոչվում էր Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության խորհրդակցություն (ԵԱՀԿ)

որումներն ունեն ավելի շուրջ բաղաբական, քան թե իրավական քնույթ: Օրինակ, **Սրբիկովի 1986թ. կոնֆերանսի փաստաթում** ասված է, որ նրանում ընդունված նորմերը (միջոցները) «քաղաքականացնելու դարտադրի են»: Քուղաղեցի 1994թ. կոնֆերանսի ընթացքում ընդունված **Վարժականություն**, որը վերաբերվում է անվանգործյան ռազմաքաղաքական ասդեկտներին, նույնում է, որ Վարժականությունը ամրագրված դրույթները «ունեն քաղաքականացնելու դարտադրություն»:

Սակայն, դրա հետ մեկտեղ, մարդու իրավունքների ու ազատությունների հարցերում **ԵԱՀԿ-ի** համար հիմնարար են **ԵԱՀԽ-ի մարդկային չափանիշի 1990թ. Կողմենագենյան խորհրդակցության փաստաթուղթը** ԵԱՀԿ-ի անդամ-դեսությունների կողմից փոխազմամբ ընդունվելու դաշտառով, ինչողևս կարեւորագոյն քաղաքական, այնուև էլ իրավական նույնակություն ունի: «Մարդկային չափանիշ» հասկացության մեջ մնում են «մարդու իրավունքները, հիմնական ազատությունները, ժողովրդավարությունը եւ օրենքի գերակայության սկզբունքը» (**Ե ԱՀԽ-ի մարդկային չափանիշի խորհրդաժողովի 1991թ. Մոսկվայի խորհրդակցության փաստաթուղթ**, կետ 1), ինչը, բնականաբար, բարձրացնում է մասնակից-դեսությունների քաղաքական դարտավորությունների ասիհճանը: Դրանով, համաձայն **ԵԱՀԿ-ի**, «քաղաքական դարտավորությունների խախտումը նույնան անընդունելի է, որքան միջազգային իրավունքի ցանկացած այլ խախտում»: Չոլեսք է մոռանալ նաև, որ սկյալ հազմակերպության հիմնարար փաստաթուղթ՝ **Մասնակից-դեսություններին 1975թ. ԵԱՀԽ-ի Հելսինկյան եղրափակիչ ակտի փոխադարձ հարաբերություններում առաջնորդող սկզբունքների հոչակագիրը**, գործող միջազգային իրավունքի կարեւորագոյն սկզբունքների մշակման հիմք դարձավ:

Իրավական նորմերի ստեղծման ԵԱՀԿ-ի հնարավորությունն իրականացվում է ամենահիմնային մակարդակի վրա: Դրանում դրվում են ԵԱՀԿ սարածացանի դեսությունների միջեւ փոխհարաբերությունների հիմքերը.

- **ԵԱՀԿ-ի նորմերի մշակման գործընթացում գործում է փոխազման սկզբունքը**, որը սահմանվում է որդես «քննարկվող հարցում որում ընդունելու համար որեւէ ներկայացուցչի կողմից արտահայտած խոչընուող որեւէ առարկության բացակայություն»: Այլ խոսնով, գործում է «ոչինչ համաձայնեցված չէ, մինչեւ ամեն ինչ համաձայնեցված չէ» սկզբունքը:
- **Գործող են համարվում բոլոր չեղյալ չհայտարարված դարտավորությունները (նորմերը)**: Մինչ այժմ որեւէ լուրջ դարտավորություն ԵԱՀԿ-ն չեղյալ չի հայտարարել: Ինքնին չեղյալ հայտարարման գործընթացը դահանջելու է փոխազման սկզբունքը

դարտավորություններն ընդունվել են. իհմնականում դա դեռությունների կամ կառավարությունների ղեկավարների, ինչդես նաև արտակի գործերի նախարարների մակարդակն է:

Կազմակերպությունն ունի մի բանի «մակարդակներում» գործելու իրական հնարավորություն՝ բաղաբան երկխոսություն, օդերասիվ աշխատանք (առավելություններ, կենսուններ, մշական ներկայացչություններ, ընտրությունների ընթացքը դիմակող խմբեր) եւ այլն:

Այրը նեվածքը ենթադրում է ԵԱՀԿ-ի մասնակից-դեռությունների կողմից ստանձնած անզամ բաղաբան բնույթ ունեցող դարտավորությունների բարեփիղ կատարում հաւաքի առնելով այն բարձր մակարդակը, որի վրա դրանից ընդունվում են:

Կարենու է նկատի ունենալ, որ ԵԱՀԿ-ն գրադպում է առաջին հերթին անվտանգության հարցերով, սվյալ հասկացության բոլոր չափումներով ու դրսեւումներով։ Սամրովի 1999թ. գագաթնաժողովի մասնակիցները ամրագրել են հետևյալ դարտավորությունները՝ կատուցել «հարաբերությունները համաձայն համընդիանուր եւ համադարչիակ անվտանգության հայեցակարգի, առաջնորդվելով հավասար գործնկերության, համեմատչության, եւ թափանցիկության սկզբունքներով։ Յուրաքանչյուր մասնակից-դեռության անվտանգությունն անվակելիորեն կառված է այլ դեռությունների անվտանգության հետ։ Մենք դիմակելու ենք անվտանգության մարդկային, սննդսական եւ ռազմավարաբանական չափանիւերը որովէս ամբողջություն» (Եվրոպական անվտանգության 1999թ. հոչակագիր, կետ 9): Անվտանգության մարդկային չափանիւը, որն առաջինն է նշվում Հռչակագրի տեսուում, ըստ իր դերի, առաջինն է նաև ԵԱՀԿ սարածաւրջանում խաղաղության եւ անվտանգության դադարանության գործում։ Անվտանգության մարդկային չափանիւչի իրավունքների, ազատությունների եւ երաշխիքների ամբողջության բաղկացուցիչ մասն է ԵԱՀԿ մասնակից-դեռությունների էքնիկական փորձանականությունների դաշտավայրան ինսիստուտը։ Ինչդես ցույց էր տրվել ՄԱԿ-ի օրինակով, անհրաժեշտ է նաև ԵԱՀԿ-ի կողմից այն փաստի լուրջ գիտակցումը, որ սարածաւրջանային անվտանգությունն ուղղակիորեն փոխկառակացված է Կազմակերպության մարդու իրավունքների դաշտանության տեսանկյունից ոչ բարենպատ վիճակում գտնվող մասնակից-երկրներում (որոնց թվին է դաշտանում, օրինակ, Վրաստանը) բնակվող էքնիկական փորձանականությունների իրավունքների, ազատությունների եւ դաշտավայրան երաշխիքների ծավալից ու մակարդակից։

«Մեծ Եվրոպայում» անվտանգության մարդկային չափանիւչի աղահովման նորագույն, ԵԱՀԿ-ի համակարգում գործում են կոնկրե-

հաստատություններ եւ դաշտնյաներ, որոնք դատասխանատու են, մասնավորապես, փոփոխանությունների իրավունքների դատավանության հարցերում: Նախարարների խորհրդին օժանդակություն ցույց տալու նորակով ստեղծված է Հակամաճարտությունների վերացման կենսուն (տեղակայված է Վիեննայում), որի շրջանակներում անդամ-դեեւություններն անցկացնում են համադատասխան խորհրդակցություններ: Մարդու իրավունքների եւ ժողովրդավարական հաստատությունների բյուրոն (ՄԻԺՀ, զժնվում է Վարչավայում) աջակցում է «մարդկային չափանիշի» բնագավառում համագործակցության ընդացնմանը եւ նոր ժողովրդավարացող երկրներում բաղադրային հաստակության ձեւապրմանը: Էթնիկական փոփոխանությունների հարցերով անմիջականորեն զրադշում է Ազգային փոփոխանությունների հարցերով ԵԱՀԿ-ի գլխավոր հանձնակատարը:

ԵԱՀԿ-ի մարմինների որոշումների իրականացման որոշակի սահմանափակումներն արտահայտվում են, մի կողմից, ընդունված բազմաթիվ որոշումների իրավական ոչ դարտապիր բնույթի տեսով, այսինքն, սահմանած դարտավորությունների հարկադիր կատարման աղափակման անհնարինությամբ, մյուս կողմից, բաղադրային կողմնակալության տեսով: ԵԱՀԿ-ի «Ըկունությունը» եւ սվյա կազմակերպության ընթացակարգային շրջանակների «մեղմությունը» ոչ միշտ են նրան բույլ տալիս արագ եւ արդյունավետ արձագանքելու ձգնաժամային իրավիճակներին, ինչը նորասավոր է այն երկրների համար, որոնք էթնիկական հանդուրժողականությամբ աշխ չեն ընկնում եւ, համադատասխանաբար, իրենց երկրներում էթնիկական փոփոխանությունների իրավունքների դատավանություն չեն աղափակում:

Էթնիկական փոփոխանությունների իրավունքների դատավանության ոլորտում ԵԱՀԿ-ի հիմնարար փաստարությունը՝ **Հելսինկիի 1975թ. եղափակիչ արձանագրությունն** է, որի յոթերորդ սկզբունքում (*Մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների՝ ներառյալ մժի, խղճի, կրոնի եւ համոզմունքների ազատությունը, բոլորի համար՝ առանց ռասայական, սեռական, լեզվական եւ կրնական խորականության: ...Մասնակից-դեեւությունները հարգելու են մարդու իրավունքներն ու հիմնական ազատությունները՝ ներառյալ մժի, խղճի, կրոնի եւ համոզմունքների ազատությունը, բոլորի համար՝ առանց ռասայական, սեռական, լեզվական եւ կրնական խորականության: ...Մասնակից-դեեւությունները, որոնց տարածումը բնակվում են ազգային փոփոխանություններ, հարգելու են այդ փոփոխանություններին դատականող անձանց իրավունքները, նրանց լիակատար իրավունք են տալու գործականում օգտվելու մարդու իրավունքներից եւ հիմնական ազատություններից եւ դատավանելու են նոված բնագավառում նրանց օրինական շահերը»: Նոված ոլորտում կարենրազոյն նույնակություն ունի նաև ԵԱՀԿ-ի մարդկային չափանիշի խորհրդաժողովի 1990թ. Կողենհագենյան*

**Խորհրդակցության փաստաթուղթը**, որի չորրորդ բաժինն ազգային, կրոնական, լեզվական եւ մշակութային փոփամասնությունների նկատմամբ խորհրդականության անքույլատելիության մասին հստակ դրույթներ է դարունակում (հոդվածներ 30-40):

Դրա հետ մեւսեղ, փոփամասնությունների դաշտանության իրավունքների, ազատությունների եւ երաշխիքների ամրողության ամրապնդման ու զարգացման գործում, ինչդեռ երկրի, այդդես էլ դրանում բնակվող երիկական փոփամասնությունների ջանքերի փոխադարձվածության ու փոխլրացման մասին նովում է նաև ԵԱՀԿ-ի այլ փաստաթորերում: Մասնավորապես, **Հասարակական-քաղաքական կյանքին ազգային փոփամասնությունների արդյունավետ մասնակցության վերաբերյալ 1999թ. Լուսնի հանձնարարականներում** հետևյալն է ասվում. «Ի զարգացումն Կողենիազգենյան փաստաթղթի 35-րդ կետի դրույթների, Ազգային փոփամասնությունների հարցերով ԵԱՀԿ-ի փորձագետների խորհրդակցությունում (Ծնև, 1991) նովում է, որ «Եթե ազգային փոփամասնություններին վերաբերվող հարցերը բնաւրկվում են նրանց բնակության երկրներում, հարկ է նրանց հնարավորությունը ընձեռել արդյունավետ կերպով մասնակցելու այդ գործնքացի»: **Լուսնի հանձնարարականների** նոված դրույթներն երնիական փոփամասնություններին բոլոր մակարդակներում սեփական խնդիրների լայն բնաւրկումներ նախաձեռնելու (այդ թվում ԵԱՀԿ-ի կառույցներին ուղղված դիմումների ժամանակակից եւ առաջարկություններ ներկայացնելու իրական հնարավորություն եւ երաշխիքներ են տալիս»:

Ազգային փոփամասնությունների հարցերով զիսավոր հանձնարարի գրասենյակի կողմից ձեւակերպված են երնիական փոփամասնությունների իրավունքների դաշտանությանն ուղղված հանձնարարական բնույթի փաստաթղթ՝ **Օսլոյի 1998թ. հանձնարարականները ազգային փոփամասնությունների լեզվական իրավունքների մասին, Հազարյի 1996թ. հանձնարարականները կրույքան ոլորտում ազգային փոփամասնությունների իրավունքների մասին, Հանձնարարականներ հեռուստառադիմակորդակցության մեջ ազգային փոփամասնությունների լեզվների օգտագործման մասին (2003թ.)** եւ վերոնշյալ՝ **Լուսնի 1999թ. հանձնարարականները հասարակական-քաղաքական կյանքին ազգային փոփամասնությունների արդյունավետ մասնակցության մասին:** **Լուսնի հանձնարարականները** իմանալ վրա ԵԱՀԿ-ն 2001թ. ձեւակերպեց նաև **Բնտրական գործնքացում ազգային փոփամասնությունների մասնակցության աջակցությանն ուղղված հանձնարարականներ:** 2006թ. փետրվարին Ազգային փոփամասնությունների հարցերով զիսավոր

## հանձնակատարի գրասենյակի կողմից դատարանվեցին **Քազմազգ հանրույրում ուսիլկանության աշխատանքի վերաբերյալ հանձնարարականներ:**

ԵԱՀԿ-ում անդամությունը դարձավորեցնում է Վրաստանին հաւաքի նստել ԵԱՀԿ-ի Եվրանակներում ընդունված բոլոր վերը նշված հանձնարարականների եւ փոփռամասնությունների իրավունքների դատավանության ոլորտի այլ փաստարդերի հետ, նոյասել երկրի բաղադրական դրականիկայում դրանց կիրառմանը եւ դրանց սեփական օրենսդրության համադատախանեցմանը: Տարբեր դեսական եւ ոչ դեսական կառույցների, բաղադրական կուսակցությունների եւ հասարակական-բաղադրական միավորումների (ՈԿԿ, ակադեմիական հաստատություններ, փորձագիտական խմբեր եւ այլն) ջաներով անհրաժեշտ է Վրաստանի իշխանությունների համար ըմբռնելի դարձնել մարդու եւ էքսիլիական փոփռամասնությունների իրավունքների ոլորտում վրացական օրենսդրությունն եւ բաղադրական դրականիկայում ԵԱՀԿ նշված հանձնարարականներին համադատախանեցնելու կարեւորությունը:

### 1.3. Միջազգային-իրավական նորմերը Եվրոպայի խորհրդի շրջանակներում

Եվրոպայի խորհրդի (ԵԽ) նոյատակը մարդու իրավունքների դատավանության եւ ժողովրդավարության ընդլայնման միջոցով մասնակիցներների մերձեցումն է: Հավանաբար, Եվրոպայի խորհրդի ամենաակտիվ մարմինը Խորհրդարանական վեհաժողովն է (ԵԽԽՎ): Այն ԵԽ գործունեության զվարար նախաձեռնողն է, եւ իր ոլենար նիստերում ձայների մեծամասնությամբ ընդունում է ԵԽ նախարարների խորհրդին եւ ազգային կառավարություններին ուղղված հանձնարարականներ: ԵԽԽՎ-ն կազմակերպում է խորհրդարանական լուրմներ, կոնֆերանսներ, ձեռավորում տարբեր հանձնաժողովներ եւ ենթահանձնաժողովներ, հետազոտական խմբեր եւ այլն:

Տվյալ կազմակերպության կարեւորությունը գործունեության հսակ ձեռավորված իրավական դաշտի մեջ է: Իր գործունեության բոլոր իիմնական ուղղություններում, եւ, հասկացես, մարդու իրավունքների ու ազատությունների դատավանության ոլորտում, Եվրոպայի խորհուրդը մասնակից-դեսությունների համար ձեռակերպում է բավական կույտ իրավական շրջանակներ:

Եվրոպայի խորհուրդը միջազգային այն կազմակերպությունն է, որի շրջանակներում կարելի է հղումներ կատարել էքսիլիական փոփռամասնությունների իրավունքների դատավանության ոլորտում դարձադր ուժ ունեցող իրավական փաստարդերն: Նշված ակտերի դարձադր ուժը, սակայն, դայմանափորված չէ միայն մասնակից-երկրների ԵԽ անդամությամբ: Կոնվենցիաները սուրագրած դեսությունների վրա դրանց իրավական դարձադրողականության տարածնան

համար, անհրաժեշտ է անցնել ներդեսական օրենսդրությամբ նախատեսված քոլոր փոլղերով։ Դա, որպես կանոն, կրնվենցիաների վավերացման եւ ուժի մեջ մտնելու գործընթացն է։

Երնիկական փորձամասնությունների դատավանության ոլորտում Եվրոպայի խորհրդի կարեւորագոյն նորմատիվ-իրավական փաստաթղթերն ու մեխանիզմներն են։

- **Մարզու իրավունքների եւ հիմնական ազատությունների դատավանության մասին 1950թ. Եվրոպական կոնվենցիան։**  
Փաստաթղթի ներուժն աձել է 2005թ. ապրիլի 1-ին նրա երաշխիքների ոլորտն ընդլայնող Առանագրության ընդունումից հետո։
- **Ազգային փորձամասնությունների իրավունքների դատավանության 1995թ. ցշանակային կոնվենցիան (ԱՓՃԿ)։**
- **Տարածացանային եւ փորձամասնությունների լեզուների 1992թ. Եվրոպական խարժիան։**
- **Եվրոպական սոցիալական խարժիան (1961թ., վերանայվել է 1996թ.)։**
- **Տեղական իննակառավարման 1985 թ. Եվրոպական խարժիան։**
- **Տարածային համայնքների եւ իշխանությունների միջևն անդրսահմանային համագործակցության 1980թ. Եվրոպական ցշանակային կոնվենցիան, ինչպես նաև Կոնվենցիային կից 1995թ. լրացուցիչ առձանագրությունը եւ «Միջազարածացանային համագործակցության առնչությամբ տարածային համայնքների եւ իշխանությունների սահմանային համագործակցության մասին» Թիվ 2 առձանագրությունը (1998թ.)։**

Ի հավելումն հատուկ Եվրոպայի խորհրդի ցշանակներում եքնիկական փորձամասնությունների իրավունքների ոլորտում ընդունված մեխանիզմների, դրանց դատավանությունն այնպիսի մարմինների աշխատանքի կարեւոր բաղկացուցիչ մասերից է, ինչողիսից են Եվրոպայի խորհրդարանական վեհաժողովը, Ռազմական կոմիտեն, Եվրոպական խորհրդարանի կոմիտեն, Եվրոպական մարմարի անձնագործողության դեմ Եվրահանձնաժողովը, Եվրոպայի տեղական եւ տարածացանային իշխանությունների կոնգրեսը, Վենետիկի հանձնաժողովը եւ Եվրոպական սոցիալական խարժիային կից սոցիալական իրավունքների Եվրոպական կոմիտեն։

Եթե ՍԱԿ եւ ԵԱՀԽ/ԵԱՀԿ անդամակցելու համար ԽՍՀՄ նախակին հանրապետություններից չեր դահանջվում հսակ իրավական դարտավորությունների ստանձնելում<sup>3</sup>, աղա դա այդուն չէ Եվրոպայի խորհրդին անդամակցելու դարագայում։ Եվրոպայի խորհուրդը ընդունվող դեւությունները դեմք է ստանձնեն Մարդու իրավունքների եւ իիմնական ազատությունների դաշտանության 1950թ. Եվրոպական կոնվենցիայում ամրագրված դարտավորությունները եւ ամբողջությամբ ընդունեն դրա վերահսկող մեխանիզմները։ Եև-ում նոր անդամների ընդունման իիմնական դայմանը ժողովրդավարական իրավական կառուցվածքի առկայությունն է եւ ազատ, հավասար ու համընդիանոր ընտրությունների անցկացումը։

Վրաստանն ստորագրել է Եվրոպայի խորհրդի **Ազգային փոփոքրամասնությունների իրավունքների դաշտանության մասին 1995թ. օրշանակային կոնվենցիան** այդ կազմակերպությանն անդամակցելու դահին<sup>4</sup>, սակայն դրա վավերացումը մէտաղեն հետաձգվում էր, եւ այն Վրաստանի խորհրդարանի կողմից վավերացվեց միայն 2005թ. վեցերին։ Քազմաքիվ փորձագետների կարծիքով դա բացարկվում էր Վրաստանում փոփոքրամասնությունների խնդրի բաղադրականացմանը եւ դրա նկատմամբ առկա հասարակական անհանդուժողական վերաբերունենությունը։ **Օրշանակային կոնվենցիան**, այն ստորագրած երկրների համար խիստ դարտավորեցնող բնույթ ունի։ Կոնվենցիայի 2-րդ բաժնի 16 հոդվածներից, որտեղ բվարկվում են երնիկական փոփոքրամասնությունների իրավունքները, 12-ը բացառադիմ կազմված են դեսուրյուններին դարտավորեցնող դիրքերից։ Կոնվենցիայի դրույթներն իրավական տեսանկյունից հսակ են ձեւակերպված եւ երկիմաս մեկնարարամասնությունների համար տեղի չեն տալիս։ Կոնվենցիայում նախատեսված են դեսուրյան կողմից ստանձնած դարտավորությունների իրականացման վերահսկողության մեխանիզմներ (հոդվածներ 24-26)։ Դրանց համարատասխան, **Օրշանակային կոնվենցիայի** նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության գործընթացին մասնակցում են՝ Նախարարների խորհուրդը, Եև գլխավոր հարսութարը եւ Խորհրդակցական կոմիտեն, որը

3 Օդինակ, Վրաստանը ՍԱԿ-ի և ԵԱՀԽ-ի անդամ է դաշնակ 1992թ.: Սակայն, ԵԱՀԽ 1992թ. մատրիս անդամակցելու հետ 1992թ. հունիսին նա ստորագրեց 1975 թ. ԵԱՀԽ-ի երգափակիչ ալքը, իսկ նոր Եվրոպայի Փարիզյան խարհման (1990թ.) միայն 1994թ. հունվարին։ Այլ խոսքով, հետխորհրդային հանրապետությունները ՍԱԿ-ի և ԵԱՀԽ/ԵԱՀԿ-ի անդամներ դաշնան ԽՍՀՄ իրավաենականության իմերժիան ուժում։

4 Տվյալ երկիր համար Եվրոպայի Խորհրդին անդամակցելու օր է համարվում այնտեղ կազմակերպության Կանոնադրության (1949 թ.) ոմիք մեջ մտնելու եւ մարդու իրավունքների ու իիմնական ազատությունների դաշտանության մասին կոնվենցիայի (1950թ.) ստորագրության (բայց ոչ ոմիք մեջ մտնելու) օրը։ Վրաստանի համար դա նույն օրն է՝ 1999թ. ապրիլի 27-ը։

գործում է որպես Կազմակերպության նախարարների խորհրդին օժանդակող մարմին: Կոնվենցիայի 25-րդ հոդվածն ուղղակիրեն նախատեսում է, որ սվյալ մասնակից-երկրի նկատմամբ Շքանակային կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո, մեկ տարվա ընթացքում, վերջինս Եվրոպայի խորհրդի գլխավոր հարտուղարին ամբողջական սվյալներ է փոխանցում օրենսդրական եւ այլ միջոցառումների մասին, որոնք ձեռնարկվել են Շքանակային կոնվենցիայից բխող սկզբունքներն ի կատար ածելու նողատակով:

1998 թվականից գործող ԱՓԾԿ դիմարկման մեխանիզմը համադրում է Խորհրդակցական կոմիտեի փորձագիտական գնահատականները Նախարարների խորհրդի հաղաքական կողի հետ: Խորհրդակցական կոմիտեն բննում է սվյալ երկրի գեկույցներն ու այլ սվյալները եւ երկրի իշխանությունների ու հաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ արդյունավետ երկխոսություն ծավալելու նողատակով իրականացնում ստուգայցեր: Այդ աշխատանքի արգասիքը Խորհրդակցական կոմիտեի Կարծիքներն ու Նախարարների խորհրդի թանաձնելու են, որոնք դարտնակում են մասնակից-երկրների գործունեության համար կառուցողական հանձնարարականներ ու խորհուրդներ: Կոնվենցիան Վրաստանի տարածում ուժի մեջ է մտել 2006թ. ապրիլի 1-ից: **Շքանակային կոնվենցիայի** վավերացումից բխող դարտավորություններից ելնելով՝ Վրաստանի կառավարությունը Եվրոպայի խորհրդի համար արդին դատաստում է Կոնվենցիայի դրույթների կատարման ու էթնիկական փորձամասնությունների դատավանության ոլորտում ժիրող իրավիճակին վերաբերվող առաջին դեսական գեկույցը, որը դեմք է ներկայացվի մինչև 2007թ. ապրիլի 1-ը:

Դրա հետ մեկտեղ, դեմք է հաւաքի առնել, որ 2005թ. հոկտեմբերի 13-ին ընդունած **Ազգային փորձամասնությունների դատավանության շքանակային կոնվենցիայի վավերացման բանաձեւում** Վրաստանի խորհրդարանը փորձեց առավելագույնս խոսափել ԱՓԾԿ-ի դրույթների լիարժեք կենսագործումից (Տե՛ս՝ **Հավելվածը**): Մասնավորապես՝ համաձայն վրացական խորհրդարանականների կողմից ընդունված բանաձեւի **Շքանակային կոնվենցիայի** գործողությունը կարող է տարածվել միայն էթնիկական փորձամասնությունների այս ներկայացուցիչների վրա, որոնք «համախումք քնակլում են վրացական տարածում գՏնվող քնակավայրերում»: Դրանով, կարծես թե, սասցում է, որ Վրաստանի էթնիկական փորձամասնություններին դատականող անձանց գրեթե կեսի նկատմամբ, որոնք քնակլում են ցրված

<sup>5</sup> Վրաստանի կառավարությունը դատաստում է առաջին գեկույցը ազգային փորձամասնությունների դատավանության Եվրոպական շքանակային կոնվենցիայի վերեւոյալ // ИА «Новости – Грузия», [www.newsgeorgia.ru](http://www.newsgeorgia.ru), 16.06.2006.

(այսինքն, ոչ համախումք կերպով), նոված փաստաքուղքը չի գործում<sup>6</sup>: Վրաստանի խորհրդարանի բանաձեկի նոված դրույթը հակասում է միջազգային իրավական իրավունքում նորմերին, քանի որ միջազգային եւ եվրոպական իրավունքում փորձամասնությունների իրավունքների իրականացման տակ առաջին հերթին հասկանում են հենց էքսիլիական փորձամասնությունների անհատական իրավունքները: Էքսիլիական փորձամասնությունների դաշտանության ողջ նորմատիվ-իրավական համակարգն առաջին հերթին իրեն սվյալ խմբին դասող յուրաքանչյուր կոնկրետ անձի որուակի անհատական իրավունքների եւ արտնությունների երաշխավորման եւ իրացման մէխանիզմներն են, առանց որեւէ սարգերության, սվյալ անձը միայնակ է բնակվում, քեզ որեւէ տօքանում իր խմբի այլ անդամների հետ համախումք կերպով: Այս դրույթը հսկողութեան ձեւակերպված է Ծրանակային կոնվենցիայի 3.2 հոդվածում, ինչողես նաեւ Ազգային, էքսիլիական, կրոնական եւ լեզվական փորձամասնություններին դատկանող անձանց դաշտանության մասին 1992թ. ՍԱԿ-ի հոչակագրում: Ինչողես ընդգծվում է այլ հետինակավոր միջազգային կազմակերպության՝ ԵԱՀԽ-ի մարդկային չափանիշի խորհրդադողութիւն 1990թ. Կողենիագենի խորհրդակցության փաստաքուղքում «Ազգային փորձամասնություններին դատկանող անձինք կարող են իրականացնել իրենց իրավունքները եւ օգսվել դրանցից անհատաղես, ինչողես նաեւ իրենց խմբի անդամների հետ միասին: Ազգային փորձամասնությանը դատկանող անձի համար չղետք է առաջանան անբարենպաստ հետևանքներ այս իրավունքներից որեւէ մեկի իրականացման կամ չիրականացման դաշտառով» (կետ 32.6):

Հիւեցնենի նաեւ, որ դեռւս 1990-ական թվականներին Ծրանակային կոնվենցիայի դատարանման եւ ընդունման ընթացքում, ժեւսն առաջին հերթին դրույթ էքսիլիական փորձամասնությունների անհատական իրավունքների դաշտանության վրա, քանի որ նրանց կողեկիցի իրավունքների ավելի մանրամասն ու լիարժեք ամրագրման դեմ արտահայտվեցին իրենին մասնակից-դեռությունները: Դա ենթարկում էր ավելի լայն ծավալով, այդ թվում բաղադրական, դարտավորությունների սահմանում, ինչին նրանք այդ ժամանակ դատարան չեն: Այսուհետով, ԱՓԸԿ-ի 2005թ. հոկտեմբերի 13-ի վավերացված

6 Ի դեպ, դա վրացական որոշ փոռձագենների եւ բաղադրական ուժերի կողմից երկրում բնակվող փորձամասնությունների նկատմամբ տանձնած միջազգային նորմատիվ-իրավական եւ բաղադրական դարտավորությունների կատարմանց խոսափելու նորմակող «ազգային փորձամասնություն» եղին իրենց ենթավայսական բնորոշումը տակ առաջին վիճը չէ: Տե՛ս մանրամասն՝ *Минасян С.* Комментарий на статью «Распределение государственной власти между центральными и местными уровнями» // Процесс конституционно-политической реформы в Грузии, в Армении и в Азербайджане: политическая элита и голос народа. International IDEA & CIPDD: Тбилиси, 2005. С.85-90.

փաստաթղթի հետ այնողիսի կացություն է առաջանում (անզամ առանց դրա դրույթների միջազգային-իրավական կոռեկտուրյան դիտարկման), երբ խորհրդարանականները, փորձելով, ըստ երեսույթին, նվազեցնել էրնիկական փոփրամասնությունների նկատմամբ իրենց իրավական դարտավորությունների ծավալը նրանց կարգավիճակի տարբերակման ձևանադրահով («սարածելով» այդ կարգավիճակը միմիայն համախումք կերպով բնակվող էրնիկական փոփրամասնությունների ներկայացուցիչների վրա), իրականում միմիայն որակադիմ մեծացնում են իրենց դարտավորությունները, բանի որ ձևանաձևով առաջին հերթին էրնիկական փոփրամասնությունների կողեկից իրավունքները, նրանից էրնիկական փոփրամասնությունների նկատմամբ սահմանում են ոչ միայն իրավական, այլ նաև խաղաքական դարտավորություններ:

Նոյն փաստաթղթում Վրաստանի խորհրդարանը փորձեց նաև սահմանափակել ԱՓՃ-ի 10-րդ հոդվածի (փոփրամասնությունների համախումք բնակության վայրերում տեղական ինքնակառավարկան մարմինների հետ շփումներում, ներին դատավարության եւ գործադրության մեջ փոփրամասնությունների լեզուների օգտագործման մասին) գործողությունը, նելով, որ դեռությունը միայն «ընդունում է ազգային փոփրամասնություններին դատկանող անձանց համար վարչական եւ դատարավական մարմինների հետ շփումներում թարգմանչի աջակցությունը երաշխավորելու իր դարտավորությունները»:

Վրացական խորհրդարանականները փորձեցին չեղուացնել նաև **Ծրածակային կրնվենցիայի** 16-րդ հոդվածի գործողությունը, որը դարտավորեցնում է դեռություններին ձեռնողան մնալու այնողիս գործողություններից «որոնի փոխում են բնակչության կառուցվածքային կազմն այն տարածեներում, որոնի բնակեցված են ազգային փոփրամասնություններին դատկանող անձանցով»: Ճշում էր մասնակի սվյալ հոդվածը չի տարածվում այն գործընթացների վրա, որոնի կարող են տեղի ունենալ երկրի տարածենում Էկոլոգիկան կամ տեխնիկական աղետներից տուժած անձանց, ինչպես նաև կյանքի եւ առողջության համար վտանգավոր գոտիներում բնակվող անձանց վերաբնակեցման արդյունքում: Դրանից բացի նեվում էր, որ հոդվածը չի վերաբերվում փախատականների ու բռնի տեղահանված անձանց ժամանակավոր կամ մշտական բնակավայրերին: Հիշեցնենք, որ էրնիկական փոփրամասնությունների համախումք բնակության տրամադրության (մասնավորապես, Քվեմո-Փարբի նահանգի տրամադրության) ու Ասամի գործական կառավարության կողմից իրականացվում են Ազարիայում եւ Ավաներիայում

«Էկոլոգիական եւ տարերային աղետներից» տուժած անձանց, ինչդես նաև Արխագիայից փախստականների վերաբնակեցման անհարժեւության դատըլակով:

Փոփոխանությունների հարցերում վրացական հասարակության եւ բարդական ընտրախավի մոտ առկա մտահոգություններն ու կարծահոգերը հստակորեն արտահայտվել են Վրաստաճի խորհրդարանի ԱՓԸ-ի վավերացման մասին բանաձեի այն դրույթներում, որտեղ ասվում է, որ Վրաստաճը «նոյատակահարմար չի համարում վեր նոված խնդիրների ուրաջ միջազգային այլ համաձայնագրեր սուրագրելու»: Տվյալ դեղուում խոսք զնում է **Ծրանակային կոնվենցիայի** 18-րդ հոդվածի մասին, որտեղ նոված է, որ «համադաշտական ազգային փոփոխանություններին դատարանող անձանց դատադարությունն ապահովելու համար, անհրաժեւության դեղուում, Կողմերը դեսֆ է զան զործադրեն, այլ դեւությունների, մասնավորապես, հարեւան երկրների հետ, երկողմ եւ բազմակողմ համաձայնագրեր կնելու համար»:

Սակայն, չնայած Բանաձեի բոլոր վերուժյալ դրույթներին, ինչդես նույն են Վրաստաճի բազմաթիվ բարձրասիճան դատավորական օրինակ, մարդու իրավունքների դատավան U.Սուլարին), ինչդես նաև 2006թ. հոնվարին Եվրոպայի խորհրդի առջև Վրաստաճի դարտավորությունների կատարման մասին զեկույց դատարանած ԵԽԽՎ զեկույցներ<sup>7</sup>, վրացի խորհրդարանականները հավասիացրել են նրանց, որ տվյալ վերադարձնը նախատեսված է միայն «ներքին օգտագործման համար», դատանական փաստարութը չէ եւ չի կցվելու Ծրանակային կոնվենցիայի կատարման մասին Վրաստաճի հաշվետվությանը: Այս բոլորի հետ մեկտեղ, **Ազգային փոփոխանությունների իրավունքների դատադարության մասին 1995թ. Ծրանակային կոնվենցիայի** վավերացումը վրացական իշխանությունների կողմից էթնիկական փոփոխանությունների դատադարության ոլորտում եվրոպական նորմատիվ-իրավական չափանիշների ներքին օրենսդրության մեջ կիրառելու ուղղությամբ առաջին լուրջ բայլն է:

Էթնիկական փոփոխանությունների դատադարության ոլորտին վերաբերող Եվրոպայի խորհրդի մյուս կարեւորագույն մեխանիզմը **Տարածաշրանային եւ փոփոխանությունների կողմերի եվրոպական խարժանության մասին** է: Վրաստաճն սուրագրել է տվյալ Խարժան, սակայն դրա

7 Implementation of Resolution 1415 (2005) on the Honouring of Obligations and Commitments by Georgia. Report, Committee on the Honouring of Obligations and Commitments by Member States of the Council of Europe (Monitoring Committee). Co-rapporteurs: Mr. Matyas Eorsi, Hungary, Alliance of Liberals and Democrats for Europe and Mr. Evgeni Kirilov, Bulgaria, Socialist Group. Parliamentary Assembly of the Council of Europe, Doc.107795, 05.01.2006. (available on [www.coe.int](http://www.coe.int)).

վավերացումն արդեն երկար ժամանակ հետաձգվում է: Ենթադրվում էր, որ այն վավերացվելու էր 2005 թվականին, սակայն Վրաստանի բաղաբանական ուժերի մի մասի եւ հանրության հակազդեցության դաշտով դա տեղի չունեցավ<sup>8</sup>: Ընդ որում, որու Վրացական փորձագետների կարծիքով «...խարժիայի վավերացման ռուց բանավեճը հիմնված չէր իրավիճակի սրափ զնահատման վրա եւ խարժիային հակաբարդեներից շատերը իրականում ծանոր չէին փաստարդի հետ: Ընդդիմությունը հիմնականում կառչած է այն համոզմունքին, որ դեռությունը կարող է ունենալ միայն մեկ լեզու, եւ բազմաթեզվայնությունը խոչընդոտելու է համարկմանը»<sup>9</sup>: Այնուամենայնիվ, Վրաստանի կողմից սվյալ փաստարդի վավերացման հարցը տարունակում է մնալ եվրոպական կառույցների ուժարության կենտրոնում եւ, չնայած բոլոր դժվարություններին, դեռ է հուսալ, որ Վրաստանի խորհրդարանի կողմից Խարժիան կվավերացվի ու կդառնա այդ երկրու բնակվող էքնիկական փորձամասնությունների լեզվական իրավունքների նկատմամբ առավել առարկայական մոնեցման նորմատիվ-իրավական հիմք:

2005թ. հուլիսին Վրաստանը վավերացրել է **Եվրոպական սոցիալական խարժիան (լրացուցիչ)** եւ նրան կից **Հավելվածը**: Դա բոյլ է սալու ավելի արդյունավետ կերպով կենսագործելու Վրաստանի էքնիկական փորձամասնությունների սոցիալ-տնտեսական իրավունքների դաշտամասնության ոլորտում դրա որոշ դրույթները:

Եվրոպայի խորհրդի Երգանական գոյություն ունեն նաև մի շարժ այլ մեխանիզմներ եւ միջազգային-իրավական նորմեր, որոնց վավերացումը կրարելավի սարքեր ոլորտներում մարդու եւ էքնիկական փորձամասնությունների իրավունքների դաշտամասնության իրավական երաշխիքների օրենսդրական ամրակայումը Վրաստանի ներդեսական իրավական համակարգում: Եվրոպայի խորհրդում դրա համար առկա է բավարար իրավական հիմք: Մասնավորապես, դա **Տեղական ինքնակառավարման 1985թ. Եվրոպական խարժիան** է (Վրաստանի կողմից վավերացվել է 2004թ.): Դրան նաև նոյանում են Եվրոպայի Խորհրդի այլ կարենութագործ նորմատիվ-իրավական մեխանիզմներ, որոնց Վրաստանը դեռ չի միացել, մասնավորապես՝ **Տարածքային համայնքների եւ իշխանությունների անդրամասնային համագործակցության մասին 1980թ. Եվրոպական Երգանակային կոնվենցիան, Լրացուցիչ արձանագրությունը (1995թ.) ու սվյալ կոնվենցիային կից Թիվ 2 արձանագրությունը (1998թ.)** եւ են մի բանի այլ փաստարդեր:

8 <sup>13</sup> *Мекрависи и С. Опасны ли требования Совета Европы? // Свободная Грузия, 07.10.2005.*

9 *Korth B., Stepanyan A., Muskhelishvili M. Language Policy in Georgia. Policy Paper. Cimera: April, 2005. P.27-28.*

## **Գլուխ 2.**

**Մարդու և էքնիկական փորձամասնությունների  
դաշտանուրյանը վերաբերվող Վրաստանի ներքին օրենսդրական  
նորմերը և դրանց բաղադրական իրականացման դրակիսիկան**

### **2.1. Ընդհանուր դրույքներ**

Մարդու և էքնիկական փորձամասնությունների ոլորտում Վրաստանի օրենսդրությունը, չնայած բազմաթիվ ընդհանուր եւ հոչակագրային ձեռակերպումների առկայությանը, այնուամենայնիվ, դեռ բնութագրվում է ժողովրդավարական իրավակիրարկությունը ու արդյունավետ գործնական իրականացումից կտրվածությամբ: Թեև էքնիկական փորձամասնությունների դաշտանուրյան հիմնական սկզբունքներն իրենց արտահայտությունն են գտել Վրաստանի 1995թ. սահմանադրության ու ճյուղային օրենսդրության մեջ, այնուհետեւ երկրում առ այսօր փորձամասնությունների իրավունքներն ու դարտականությունները անմիջականորեն եւ արդարացիոնրեն կարգավորող ու նրանց կարգավիճակը որոշող օրենք չի ընդունվել: Հաւաքի առնելով էքնիկական ու կրնական փորձամասնությունների հետ կաղված խնդիրների կարենությունը՝ երկրում փորձասանությունների իրավունքների դաշտանությունը երաշխավորող կարգավիճակն օրենսդրուեն ամրագրելու Վրաստանի բաղադրական ուժերի շարունակական չկանությունը վկայում է բաղադրական կամքի բացակայության կամ էլ այս հարցի նկատմամբ հանրային անհանդուժողականության մասին:

Խնդիրն առավել համակողմանիորեն դասկերացնելու համար դիտարկենք ոլորտին վերաբերվող ընդհանուր նորմերը, որոնք ամրագրված են Վրաստանի սահմանադրության մեջ:

Սահմանադրության 3-րդ հոդվածը նախատեսում է, որ «Վրաստանի քանդագործ դեւական մարմինների բացառիկ իրավասությանն է վերաբերվում ա) մարդու իրավունքների եւ ազատությունների մասին... օրենսդրությունը»: Դրանով դիտությունը ոչ միայն մարդու իրավունքների եւ ազատությունների ոլորտում հասարակական հարաբերությունների կարգավորման իրավասություն ունի, այլ նաև դարտավորում է նման կարգավորում իրականացնել՝ հաւաքի առնելով այն հանգամանքը, որ վրացական դետությունն իր բաղադրական կառուցվածքով ժողովրդավարական հանրադեսություն է (մաս 2, հոդված 1):

6-րդ հոդվածն ամրագրում է Վրաստանի օրենսդրության համադրասախանությունը միջազգային իրավունքի համընդիմանուր սկզբունքներին ու նորմերին, ինչպես նաև նույն, որ «Վրաստանի սահմանադրությանը չհակասող, Վրաստանի կողմից ստորագրած միջազգային դայմանագրերը կամ համաձայնագրերը ներդեսական ակտերի նկատմամբ

օժված են գերակա իրավական ուժով»:

Մեր կողմից բննվող հարցի համար կարեւոր է համարքել Սահմանադրության 6-րդ և 7-րդ հոդվածները,որ ասվում է, որ Վրաստաճը ձանաչում ու դադանում է մարդու համընդիանուր իրավունքներն ու ազատությունները «որպես հավերժ եւ բարձրագույն մարդկային արժեքներ»: Ավելին, «իշխանությունն իրկանացնելիս ժողովուրդն ու դեսությունը սահմանափակված են անմիջականորեն գործող այս իրավունքներով ու ազատություններով» (հոդված 7): Իրոք եթե Վրաստաճը ձանաչում ու դատավանում է մարդու համընդիանուր իրավունքներն ու ազատությունները, եւ Վրաստաճի օրենսդրությունը համադատասխանում է միջազգային իրավունքի համընդիանուր նորմերին ու սկզբունքներին, աղաքական փոփրամասնությունների իրավունքներն ու ազատությունները, որպես մարդու համընդիանուր իրավունքների և ազատությունների մաս, անմիջականորեն գործող են, քանի որ դրանք «ներդեսական ակտերի նկատմամբ օժված են գերակա իրավական ուժով» (մաս 2, հոդված 6): Սակայն իրականությունը (ինչպես եւ հետխորհրդային դեսությունների մեծամասնությունում) հեռու է Վրաստաճի սահմանադրությունում ամրագրված նորմերից եւ կայանում է նրանում, որ փոփրամասնությունների իրավունքներն ու ազատությունները ոչ միայն չեն համադատասխանում միջազգային իրավունքի համընդիանուր սկզբունքներին եւ նորմերին, այլ նաև գրկված են վրացական օրենսդիր եւ, առավել եւս, գործադր իշխանությունների ուժադրությունից:

Այսուհետեւ, Սահմանադրության 14-րդ հոդվածում հայտարարվում է անկախ ռասայական, լեզվական, կրոնական, ազգային եւ էթնիկական դատկանելիությունից բոլոր մարդկանց օրենքի առջեւ հավասարության մասին: 19-րդ հոդվածը երաշխավորում է խոսի, կարծի, խորհի, դաշտի, դաշտականի եւ համոզունքի ազատությունը: Վրաստաճի բաղադրական իրավունքներից է «բաղադրական կուսակցություններ եւ այլ բաղադրական միավորումներ ստեղծելու եւ դրանց գործունեությանը մասնակցելու իրավունքը» (հոդված 26): Յուրաքանչյուր ու կրթություն սահմանում է կրթության ձեւի ընթացքային իրավունք ունի, ընդ որում «դեսությունն աղակովում է կրտական ծրագրերի միջազգային կանոններին եւ չափանիշներին համադատասխանությունը» (հոդված 35): Ենթալով Սահմանադրության 38-րդ հոդվածից, որն ամրագրում է բաղադրական իրավահավասարությունն անկախ լեզվական, ազգային, էթնիկական եւ կրոնական դատկանելիությունից՝ Վրաստաճի բոլոր բաղադրական ունեն հավասար իրավունքներ եւ կրթի սոցիալական, սննդական, մշակութային եւ բաղադրական կյանքում: Նույն հոդվածում ասվում է, որ բոլոր բաղադրական իրավունք ունեն «ազատ, առանց որևէ խորականության եւ միջնորդության, զարգացնելու սեփական մշակույթը,

անձնական կյանքում եւ հրադարակայնորեն օգտագործելու մայրենի լեզուն»: Վրաստանի Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասում ընդունվում է, որ «փոփառմանությունների իրավունքների իրականացումը չղետի է հակասի Վրաստանի իննիւժանությանը, դեւական կառուցվածքները, տարածության ամրողականությանը ու բաղաբանական անկախությանը»: Հետաքրի է ներ այն փասթը, որ Սահմանադրության 3-րդ գլխի նույնականացներից եւ ոչ մեկի համար նախատեսված չեն Վրաստանի հիմնական օրենքի 46-րդ հոդվածում ամրագրած արտակարգ կամ ռազմական դրույթան ժամանակ գործող սահմանափակումները:

Ներկայում Վրաստանում դեռ ընդունված չէ օրենք, որը փոփառմանությունների դաշտանության հարցերում ընդհանրացնում է ներքին իրավական դաշտը: Մի շարք հասարակական-բաղաբանական կազմակերպությունների ջանելով դատրասվեց էթնիկական ու կրոնական փոփառմանությունների կարգավիճակի մասին համադատասխան օրենքի նախագիծ, որի ընդունումը բույլ կտար մաներանամել եւ խորացնել առկա իրավական բազան: Որու միջազգային կազմակերպություններ, մասնավորապես, Փոփառմանությունների խնդիրների եւլողական կենցորնի վրացական գրասենյակը, վրացական խորհրդարանին նույնութեա առաջարկեցին ընդունել նման օրենք, սակայն, Վրաստանի խորհրդարանում ներկայացված բաղաբանական ուժերի մեծամասնությունը, ինչպես եւ երկի կառավարությունը, առ այսօր նման փաստարդի ընդունման խնդրին բավականին բնադրանքնեն են մոտենու:

Այսուաննենայնիվ, Վրաստանի խորհրդարանի Մարդու իրավունքների եւ բաղաբանական համարկման հանձնաժողովը երկում փոփառմանությունների իրավական կարգավիճակը կարգավորող օրենսդրական կաղադարների հաւաքումը դիմարկում է որպես իր առաջնահերթ խնդիրներից մեկը: Հանձնաժողովը, մասնավորապես, ներկայում դատրասել է «Ազգային փոփառմանությունների դաշտանության ու համարկման բաղաբանության հայեցակարգի» նախագիծ<sup>1</sup>: Թե՛ նույնական փաստարդութը գոյություն ունի դեռ օրինագծի տեսքով, հայտարարութ է, որ այն ունենալու է հետեւյալ բաժինները.

1. Ներածություն.
2. Հայեցակարգի սկզբունքներ.
3. Ընդհանուր դրույթներ.
4. Ազգային փոփառմանությունների ինֆնանսույնացմանը նվիրված քայլին.

1 Towards Ratification: The Conference on the Framework Convention for the Protection of National Minorities. Report on the International Conference, 19 September 2005 in Tbilisi // ECMI Report #57, December 2005. P.20-21.

5. Լեզվին, կրոնին, կրթությանը, ԶԼՄ-ներին, սոցիալ-սնտեսական, հասարակական եւ իրադարակային կյանքին, արդարադատության եւ դատաժական համակարգերին վերաբերվող բաժիններ.

6. Եզրափակիչ դրույթներ:

Նախագծի եւ նրա վերաբերյալ Վրաստանի խորհրդարանի փորձագետների մեկնաբանությունների վերլուծությունը բոյլ է տալիս դնդելու, որ նեված փաստարդի ընդունումը նշանակալից բայլ կլինի երկրում փորձամասնությունների դաշտանության հարցերում ընդիհանուր օրենսդրական տրամադրության ձեւավորման ուղղությամբ<sup>2</sup>: Դրա հետ մեկտեղ, դեռ է նշել, որ օրինագիծը փորձամասնությունների լեզվական եւ կրթական ոլորտներում առավել կենսական խնդիրների լուծման, ինչդեռ նաև երկրի հասարակական-քաղաքական գործընթացներում, մշակութային ու նաև սահմանական կյանքում փորձամասնությունների առավել լայն ընդգրկման դայմանների ստեղծման իրավական հստակ տրամակերպությունը: Օրինագծում չեն կարգավորվում նաև ենդական ինինականական խնդիրները նրանց համախումբ բնակության տրամադրությունը:

Ինչ վերաբերվում է «ազգային փորձամասնություն» եզրի սահմանմանը, աղաս օրինագծում տրվում է հետեւյալ ձեւակերպությունը, որի հիմքում ընկած է Ազգային փորձամասնությունների իրավունքների դաշտանության տրամակային կոնվենցիայի վավերացման Վրաստանի խորհրդարանի 2005թ. հոկտեմբերի 13-ի թիվ 1938-Ի բանաձեւը (Տե՛ս Հավելվածը). «...անձանց խմբին կարող է տրվել ազգային փորձամասնության կարգավիճակ միայն այն դեղուում, եթե՝

- նրա անդամները Վրաստանի քաղաքացիներ են.
- նրանի սարեւրվում են բնակչության մեծամասնությունից իրենց լեզվական, մշակութային եւ էթնիկական ինքնությամբ.
- նրանի երկար ժամանակ են բնակվում Վրաստանի սարածքում.
- նրանի Վրաստանի սարածքում են բնակվում համախումբ կերպով (հողված 1.3):

Դրա հետ մեկտեղ, օրինագծի հեղինակները փորձեցին որոշ չափով մեղմացնել այն դրույթները, որոնի վերաբերվում էին էթնիկական փորձամասնության կարգավիճակի սարածմանն այն անձանց վրա, որոնի երկրում համախումբ կերպով չեն բնակվում: Դա արտահայտվեց հողված 1.4-ում, որտեղ նշվում է՝ «միեւնույն ժամանակ, որտեղ հակասություն չկա այն փաստի մեջ, որ մարդկանց խմբերը, որոնի համադարասավանում են վերը նեված չափանիշներին,

---

2 Տե՛ս մանրամասն՝ Svanidze G. Concept on the Policy Regarding the Protection and Integration of Persons Belonging to National Minorities in Georgia // ECMI Georgia Occasional Paper #2, Tbilisi, June 2006.

եւ, միեւնոյն ժամանակ, համախումք կերպով չեն բնակվում, կարող են համարվել փոփրամասնություն և օգսվել Վրաստանի սահմանադրությամբ երաշխավորված դատավանության կարգից։ Այս հստակեցումն էլ ավելի կարեւոր է, եթե հաւաք առնենք, որ Վրաստանի էքսիլիական փոփրամասնությունների ներկայացուցիչների գրեթե կեսը բնակվում է խառը կամ ցրված կերպով։

Օրինագծի լեզվական հարցերին վերաբերվող բաժնում էքսիլիական փոփրամասնությունների լեզվական հիմնարար իրավունքների մասնանշման հետ մեկտեղ, ամրագրված է նաև համախումք բնակության վայրերում ևլյալ էքսիլիական փոփրամասնության լեզվով ցուցանակներ, հայտարարություններ և մասնավոր բնույթի այլ տեղեկատվություն փակցնելու իրավունքը (հոդված 5.5)։ Նշում է նաև, որ «ազգային փոփրամասնությունների համախումք բնակության արածքներում եւ ցշաններում, բնակավայրերի ու փողոցների անունները, ինչպես նաև այլ տեղանունները, կարող են նշվել ինչպես վրացերենով..., այդպես էլ ևլյալ փոփրամասնությունների լեզուներով, եթ դա հնարավոր է եւ անհրաժեշտ» (հոդված 5.6)։

Կրնական հարցերին վերաբերվող բաժնում, հավանաբար, զիտակացարար ցշանցված է փոփրամասնությունների կրնական միավորումներին համադաստախան իրավական կարգավիճակ ընորենու ու գրանցելու հարցը եւ տրվում է հետևյալ բավականին լորձուն ձեւակերպությունը. «ազգային փոփրամասնություններին դատկանող անձինք իրավունք ունեն օրենքին համադաստախան հիմնելու կրնական հաստատություններ, կազմակերպություններ ու միություններ» (հոդված 6.2)։

Կրույքան հարցերին վերաբերվող բաժնում, մասնավորաբես, նշվում է. «Ազգային փոփրամասնությունների համախումք բնակության ցշաններում դեռությունը փոփրամասնության լեզուն ներառում է տեղական դրանցներում դասավանդվող առարկաների ցանկում։ Պետությունը դեմք է համարժեք հնարավորություններ ստեղծի ուսուցիչների մասնագիտական դատարանության եւ դասագրերի մատչելիության համար» (հոդված 7.2)։ Փոփրամասնություններին վերաբերվող ուսումնական ծավագրերը դեմք է մշակվեն փոփրամասնությունների ներկայացուցիչների մասնակցությամբ (հոդված 7.3), քոյլատրվում է նաև էքսիլիական փոփրամասնությունների լեզուներով մասնավոր ուսումնական հաստատությունների ստեղծումը (հոդված 7.4 եւ 7.5)։ Միեւնոյն ժամանակ նշենք, որ էքսիլիական փոփրամասնությունների դրանցների բնականոն գործունեության համար անհրաժեշտ է ամրագրել այն փաստը, որ փոփրամասնությունների լեզուն նման դրանցներում (ներկայում Վրաստանում գործում է շուրջ 450 նման դրանց) դեմք է լինի ուսուցման հիմնական լեզուն։ Վրացերենի ուսուցման համար համակարգած ժամանակ ավելացումն, անկասկած, անհրաժեշտ է, սակայն, դա

չղետ է արվի հայերենի, ադրբեջաներենի, ռուսերենի կամ էթնիկական այլ փոնքամասնության լեզվի հաւաքիս: Վրաստանում կրթական համակարգի գործունեության ողջ հետխորհպային փորձը ցույց է տալիս, որ վրացերենի ուսուցնականը համապատասխած ժամերի ավելացումը (ի հաշիվ այլ առարկաների) ինֆինիտ բացառականություն է համապատասխած դրական արդյունավետության մակարդակը բացառականություն չի բարեկանական դաշտունության մակարդակը բացառականություն չի բարեկանական դաշտունություն է:

Առաջարկվող օրնագիծի արդյունավետ իրականացման համար (Վրաստանի խորհրդարանի կողմից դրա ընդունման դեմքում) կարեւոր նշանակություն ունի այն հանգամանքը, թե դրանում որքանով է համադրամասախանելու բաղադրական իրողություններին եւ իրավաբանութեն ամրագրված լինելու երկի հասարակական-բաղադրական լյամբին էթնիկական փոնքամասնությունների ներկայացուցիչների ներգրավման խնդիրը: Հայեցակարգի նախագծում կարեւոր տեղ է համապատասխան էթնիկական փոնքամասնությունների ներկայացուցիչների կողմից հասարակական կազմակերպությունների եւ այլ միավորումների ստեղծմանը (հոդված 10.2), սակայն, ոչինչ չի ասկում բաղադրական միավորումների կազմավորման գործում փոնքամասնությունների մասնակցության մասին: Միայն խոսվում է էթնիկական փոնքամասնությունների մասնակցությամբ նրանց համախումբ բնակության վայրերում իշխանության մարմիններին կից նրանց վերաբերվող հարցերի բննարկմանը մասնակցող որոշակի խորհրդակցական մարմինների ձեռագործական հնարավորության մասին (հոդված 10.7): Սակայն միմիայն խորհրդակցական մարմինների առկայությունը, որոնք փոնքամասնությունների խնդիրների վերաբերյալ որոշումների կայացման գործընթացի վրա կունենան բավականին սահմանափակ ազդեցություն, չի նոյասելու նշված խնդիրների լիարժեք եւ արդյունավետ լուծմանը: Ինչդեռ առաջացուցում է առաջատար եվրոպական երկների փորձը, Վրաստանում փոնքամասնությունների իրավունքների դաշտանության արդյունավետ համակարգի կայացման դայմաններից մեկը կարող է լինել համադրամասնության մակարդակով լայն իրավասություններով օժտված հատուկ անկախ մարմնի (օրինակ՝ «Էթնիկական եւ կրոնական փոնքամասնությունների դաշտանի գրասենյակի») ստեղծումը: Նշված մարմինը, բնականաբար, չղետ է կրկնօրինակի Վրաստանի մարդու իրավունքների դաշտանի գործառույթները, այլ ոետ է մասնագիտանա երկի էթնիկական եւ կրոնական փոնքամասնությունների կոնկրետ իրավունքների մեջ: Այդ են առաջարկում նաև փոնքամասնությունների իրավունքների դաշտանության խնդիրներով զբաղվող առաջատար միջազգային կազմակերպությունները, օրինակ՝ Ռասիզմի եւ անհանդուրդականության դեմ եւլողական հանձնաժողովը (ECRI) իր

1997թ. ընդունած «Ընդհանուր բաղաբանության թիվ 2 հանձնարարական՝ ազգային մակարդակում ռասիզմի, այլացյացության, հրեատեացության ու անհանդուժողականության դեմ դայքարող հասուկ մարմինների վերաբերյալ» փաստարդություն: Նման մարմինների գործունեության բավականին հաջող օրինակներ կան բազմաթիվ եվրոպական երկրներում: Օրինակ, Ֆինլանդիայում սլյալ հարցերով զբաղվում է Փոնրամասնությունների հարցերով օմքուսմենի գրասենյակը եւ Խորականության ազգային ասյանը, Ըստիհայում Էթնիկական խորականության դեմ օմքուսմենը, Ֆրանսիայում Խորականության դեմ դայքարի եւ հավասարության աղահովման ազգային մարմինը (HALDE), Խորական Ռասայական խորականության դեմ գրասենյակը (UNAR), իսկ Ըստիհայում Ռասիզմի դեմ դաշնային հանձնաժողովը (CFR)<sup>3</sup>: Զնայած Վրաստանում ժողովրդավարացման գործընթացների զարգացմանը՝ Էթնիկական փոնրամասնությունների եւ բաղաբանության համարկման խնդիրներով զբաղվող դաշտույթաները (խորհրդականի կամ նախարարի դաշտում) բավարար արդյունավետությանը չեն գործում, բանի որ գործադիր իշխանության ներկայացուցիչներ են եւ, ելեւով իրենց կարգավիճակից, չեն կարող դահղանել լիարժեք անկախություն եւ անկողմնակալություն: Բացի դրանից, ժամանակակից Վրաստանում դաշտամենատիզմի թերզարգացածության դայմաններում, նույնականացնելու ոչ բավարար կերպով է համարդատասխանում նաեւ բաղաբանության համարկման հարցերով խորհրդարանական հանձնաժողովը, որն իր աշխատանքում բախվում է որոշակի բաղաբանության խնդիրներին եւ հաճախ սիմված լինում հաւաքի նաև վիճակում փոնրամասնությունների նկատմամբ վկերկող մեծամասնության տրամադրությունների հետ: Այդ դաշտառով, ելեւով առաջատար եվրոպական երկների փորձից, վերոնշյալ մարմինը դեմք է գործադիր իշխանությունից որոշակի անկախություն ունենա եւ իր կազմի մեջ ընդգրկի, ցանկալի է ընտրության կարգով, էթնիկական փոնրամասնությունների ներկայացուցիչներ, ինչպես նաեւ իր գործունեության մեջ հենվի համարդատասխան նորմատիվ-իրավական բազայի վրա: Ինչդեռ նույն է Ռասիզմի եւ ռասայական խորականության դեմ եվրոպական հանձնաժողովը Վրաստանի նվիրված իր հատուկ գեկույցում. «ՈՒԽՀՀ-ն հավատում է, որ այս խնդիրները չեն կարող համարժեք լուծում ստանալ առանց օրենսդրական լիարժեք երշանակների ձեւավորման, որոնց միջոցով յուրաքանչյուր ու հնարավորություն կունենա անօրինական խորականության դեմքերի դեմքունքներ ներկայացնելու: Հակաբարական օրենսդրության լիարժեք համակարգի

3 Examples of Good Practice: Specialised Bodies on Combat Racism, Xenophobia, Antisemitism and Intolerance at National Level // European Commission against Racism and Intolerance, CRI (2006)5. Strasbourg, January 2006. (available <http://www.coe.int/ecri>).

հնարավոր ընդունման կաղակցությամբ, Հանձնաժողովը գտնում է, որ դեսք է դիտակի հատուկ լիազորություններով օժշված մասնափասցված մարմնի ստեղծման հնարավորությունը, որն զրադիկելու է ընդունված օրենքների կիրառման վերահսկողությամբ եւ անհատական բողոքներին ընթացք տալու համար արդյունավետ միջոցների աղահովմամբ»<sup>4</sup>:

Հայեցակարգի սվյալ բաժնում (հոդված 10) ակնհայտ է նախագծի եւս մեկ կարեւոր բացրողում, այն է՝ էրեխիկական փոփրամասնությունների շահերը ներկայացնող բաղադրական միավորումների եւ կուսակցությունների գրանցման հարցում իրավական տշանակների եւ մեխանիզմների բացակայությունը, ինչը Վրաստանի հասարակական-բաղադրական կյանքին փոփրամասնությունների մասնակցությունը զայռող լուրջ զործոն է (դրա մասին տես ստորեւ՝ մեր աշխատանիք Բաժին 2.5-ում): Հայեցակարգի նախագծում ձեռականութեն նեվուում է նաև ոլետական մարմիններում եւ հաստատություններում էրեխիկական փոփրամասնությունների ներկայացուցիչների մասնակցության երաշխիքների մասին: Խորհրդարանական համանաժողովի ներկայացուցիչները նախադես հայտարարում էին, որ փոփրամասնությունների համախումք բնակության տշաններ վարչական մարմիններում փոփրամասնությունների լեզուների օգտագործումը նախատեսվում է միայն «հասարակական բննարկումների» ընթացքում. «...փոփրամասնության լեզուների օգտագործումը հասարակական բննարկումներում երաշխակորպելու է, սակայն նեված բննարկումներին վերաբերող գրավոր փաստարդերը քարգմանվելու են ոլետության դաշտնական լեզվով»<sup>5</sup>: Նման մոնեցումը հակասում է համախումք բնակության տշաններում աղբող փոփրամասնությունների շահերին, բանի որ, տեղական բնակչության գերակշռող մեծամասնության կողմից վրացերենին չփրադեսելու դայմաններում, եթե ներին զործավարությունը չի տարվելու հասկանալի լեզվով, աղա զործականում անհնարին է դատնակու նաև ներգրավումը տեղական իննականառավարման զործներացների մեջ: Այլ բան է, որ արդեն նահանգներից (օրինակ Սամցխե-Զավախիսից) Վրաստանի իշխանության կենտրոնական մարմիններ ներկայացվող փաստարդերը դեսք է լինեն վրացերեն լեզվով:

Այնուամենայնիվ, հարկ է արձանագրել, որ օրինագծի վերջին սարքերակի 10.6 հոդվածում արդեն որոշակի կերպով նախատեսվում է այդիսի հնարավորություն. «Ազգային փոփրամասնությունների համախումք բնակության վայրերում փոփրամասնության լեզուն, վրացերենի հետ միասին, կարող է

4 Report on Georgia. European Commission against Racism and Intolerance, CRI (2002)2, Adopted on 22 June 2001. Strasbourg, 23 April 2002. P.11.

5 Towards Ratification: The Conference on the Framework Convention for the Protection of National Minorities. Report on the International Conference. P.24.

օգտագործվել տեղական ինքնակառավարման մարմիններում ներփակելու նողատակեների համար»: Վրացական օրենսդրության մեջ եւ, անզամ, ենթաօրենսդրական ակտերում նշված դրույթի ամրագրումը բույլ կտա այդ ոլորտում վերացնել փոփոխամասնությունների ներկայացուցիչների եւ վրացական իշխանությունների միջեւ բախումների ու աւրածայնությունների մեծ մասը: Համանման դայմաններ դեսք է ստեղծվեն դասական եւ դասմական ոլորտներում, սակայն օրինագի 11-րդ հոդվածի դրույթները ոչ բավարար մակարդակով են համադրատասխանում սլյալ հարցերում փոփոխամասնությունների իրավունքների դաշտում առաջարկված իրողություններին:

Հայեցակարգի ներկայացված սարքերակը դատարան էր եւ ներկայացվել էր Վրաստանի խորհրդարանի բնարկմանը դեռևս 2005թ. դեկտեմբերի վերջերին<sup>6</sup>: Այնուամենայնիվ, դեռ դարձ չէ, թե երբ է նշված օրինագիծն ընդունվելու:

Վրաստանում մարդու և էթնիկական փոփոխամասնությունների հիմնարար իրավունքների ու ազատությունների դատավանական խնդիրներն արտացոլված են նաև ճյուղային օրենքներում եւ նորմատիվ ակտերում, որոնք առավել մասնամասնորեն կֆենարկվեն սոսրեւ:

## 2.2. Խոսի և մայրենի լեզվի օգտագործման ազատություն

Վրաստանի 1995թ. սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն, երկրի դեսական լեզուն վրացերենն է: Վրաստանի սահմանադրությունը երաշխավորում է, որ Արխազիայի սարածում, վրացերենի հետ մեկտեղ, արխազերենը եւս համարվում է դեսական լեզու: Վարչական կառավարման մեջ լեզվի օգտագործումը կարգավորվում է Վարչական օրենսգրքի 14 եւ 73 հոդվածներով (1999թ., գործողության մեջ է մտել 2000 թ.): Համաձայն 14-րդ հոդվածի, «Վարչական գործառակարության դատավանական լեզուն վրացերենն է: Արխազիայում վարչական գործառակարության լրացուցիչ դատավանական լեզուն արխազերենն է»: Ընդ որում, համաձայն 73.4 հոդվածի, եթե դիմումը կամ որեւէ այլ փաստարությունը դեսական լեզվով չէ, տահարգի կողմը դարտավոր է ներկայացնել նույնի կողմից վավերացված փաստարորի թարգմանությունը:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերում վրացերենի օգտագործումը կարգավորվում է նաև Քաղաքացիական ծառայության մասին 1998թ. օրենքով: Համաձայն օրենքի 12-րդ հոդվածի, Վրաստանում դեսական կառավարումը սարվում է վրացերենով, բացառությամբ Արխազիայի, որտեղ կարող է օգտագործվել նաև արխազերենը: Համաձայն հոդված 98.1-ի, վրացերենին չփրադիտելը կարող է

6 Towards Ratification: The Conference on the Framework Convention for the Protection of National Minorities. Report on the International Conference. P.26:

իհմֆ հանդիսանալ դետական ծառայողի աշատանից ազատման համար: Տվյալ օրենքը նաև նեռում է, որ դետական կառավարման (հոդված 15) կամ Տեղական ինինակառավարման (հոդված 16) ոլորտում դետական դատաժողությունը գրադարձնել ձգող անձինք դետք է տիրապետեն վրացերենին: Հոդված 16-ը իհմնվում է նաև Տեղական ինինակառավարման մասին Վրաստանի 2005թ. օրգանական օրենքի վրա, որի 10-րդ հոդվածում ամրագրված է, որ «Տեղական ինինակառավարման մարմինների աշխատանքային եւ զործագարության լեզուն Վրաստանի դետական լեզուն է»:

Ընդհանուր իրավասության դատարանների մասին 1997թ. օրենքը կարգավորում է լեզվի օգտագործումը Վրաստանի դատական համակարգում: Տվյալ օրենքում (հոդված 10) եւս նեւում է, որ դատավարությունը, բացառությամբ Արխազիայի տարածքի, դետք է տարվի վրացերենով: Դրա հետ մեջտեղ նեված հոդվածը նախատեսում է, որ դատավարության ընթացքում դետական լեզվին չտիրապետող յուրաքանչյուր անձի դետք է դետական բյուջեի հաւաքին թարգմանիչ տաճարովի: Այդ հոդվածը կրկնում է Վրաստանի սահմանադրության դրույթը (հոդված 85), որտեղ նեւում է, որ «դատավարությունը դետք է տարվի դետական լեզվով: Պետական լեզվին չտիրապետող անձին կարող է թարգանիչ տաճարովի».<sup>7</sup>

Գովազդի մասին 1998թ. օրենքով Վրաստանում օրենսդրություն կարգավորված է նաև լեզվի օգտագործումը գովազդային ցուցանակներում եւ հայտարարություններում: Գովազդային ցուցանակների վրա արված գրություններում եւ հայտարարություններում այլ լեզուների օգտագործումը հնարավոր է միմիայն այն դեմքում, եթե դրանց վրա Տեղադրված է նաև վրացերեն ընթերթի թարգմանությունը:

Միեւնույն ժամանակ, Վրաստանի միասնականացված ընտրական օրենսգիրքը (առ 2003թ. օգոստոս ամիսը կատարված փոփոխություններով) մասնակիորեն թույլ է տալիս ընտրական գործընթացներում օգտագործելու փոփոխանությունների լեզուները: Համաձայն 51.1 հոդվածի «ֆվեաթերիկլը դետք է տաղարվի վրացերենով, իսկ Արխազիայում՝ արխազերենով, եւ, անհրաժեշտության դեմքում ցանկացած այլ լեզուներով, որոնք հասկանալի են Տեղական ընակչությանը»: Սակայն, ըստ Ընտրական օրենսգրքի, խորհրդարանում ընտրված անձինք դետք է անդայման տիրապետեն վրացերենին (հոդված 92.1): Տվյալ դրույթը դետք է ուժի մեջ մտնել 2005թ. հունվարի 1-ից, եւ, հետեւարա, կիրառվելու է հաջորդ խորհրդարանական ընտրությունների ժամանակ՝ 2008 թվականին (հոդված 129.1): Ավելին, համաձայն Ընտրական օրենսգրքում

7 Wheatley J. The Status of Minority Languages in Georgia and the Relevance of Models from Other European States. ECMI Working Paper #26, Flensburg, March 2006. P.8-9.

2005թ. աղբյիին կատարած փոփխությունների (հոդվածներ 27.4 և 33(գ).5) Կենտրոնական ընտական հանձնաժողովի եւ Շշանային ընտական հանձնաժողովների բոլոր թեկնածուները դեմք է ազատուեն ժրադետեն վրացերեն լեզվին<sup>8</sup>:

Դեռ նախքան «Վարդերի հեղափոխությունը», Լեզվի դետական տեսչությունը դատաստեց Լեզվի մասին օրենի նախագիծ, որը, սակայն, առաջ բերեց հասարակական լայն հակազդեցություն, հատկապես՝ որու ՈԿԿ-ների (մասնավորապես, «Քազմազգ Վրաստան» կազմակերպության, որը միավորում է մի շարժ հասարակական կազմակերպություններ) կողմից, եւ ուղարկվեց վերամշակման: Նրանց կարծիքով, օրինագիծը բովանդակում էր Վրաստանում բնակվող փոնքամասնությունների համար անընդունելի եւ խորական մի շարժ դրույթներ: Մասնավորապես, առաջին արքերակի ներածականում, բացի վրացերենից, բոլոր լեզուները միավորված էին «օսար» եղրի տակ: Տվյալ եղրի օգտագործումը շատ լուրջ մտահոգություն առաջարեց փոնքամասնությունների ներկայացուցիչների մոտ, որոնք դրա մեջ նախադրյալներ տեսան իրենց՝ որոշես օսարերկրացի կամ դուենցիալ վարաւանդի դիմարկելու համար: Օրինագիծի ուղղված արքերակում «օսար լեզուներ» եղրը փոխարինվեց «ոչ դետական լեզուներ» բառակարգակցությամբ: Ինչին, այս եղրը ես ոչ լիարժելի, սակայն, ըստ երեսույթի, նման ձեւակերպում առաջարկուները փորձում էին հատկադիր խոսափել «արածաւրացանային լեզու» կամ «էթնիկական փոնքամասնության լեզու» եղրերի օգտագործումից:

Այն, որ սվյալ մնտեցումը բավական տարածված է Վրաստանի խորհրդարանականների եւ քաղաքական ընտախավի որու ներկայացուցիչների մոտ, վկայում են, մասնավորապես, «Վրաստանի լեզվական բաղադրականությունը» գեկույցի հեղինակները<sup>9</sup>. «Այն տեսակետը, որ փոնքամասնությունները ներգաղթյալներ են, արտահասվում է նրանց կողմից, ովքեր ընդիմանում են Սամցխե-Զավախի հայախոս եւ Քվեմո-Զարթլիի աղքածանախոս բնակչությանն առավել լայն լեզվական ինֆնուրույնություն տալուն: Օրինակ, Կրտության հարցերով խորհրդարանական հանձնաժողովի դեկանակար Նոդար Գրիգորյանը մերժում է որու տշաններում դաշնային մնտեցման եւ արածաւրացանային երկլեզու կամ եռալեզու լուծնան հնարավորությունն իսկ՝ վկայակոչելով եվրոպական միալեզու ազգ-դետուրունները»: Նոյն գեկույցում հիշատակում է, որ Զաղարսիական կրթության եւ մարդու իրավունքների խորհրդարանական հանձնաժողովի դեկանակար Ելենա Թելերաձեն հայտարարում

8 Wheatley J. The Status of Minority Languages in Georgia and the Relevance of Models from Other European States. ECMI Working Paper #26, Flensburg, March 2006. P.10:

9 Korth B., Stepanyan A., Muskhelishvili M. Language Policy in Georgia.

է, որ միայն աբխազերենը Աբխազիայի տարածքում կարող է ձանաչվել երկրորդ լեզական լեզու, որովհետև այն բնիկների լեզու է: Հս բանախոսի, հայերենն ու ադրբեջաներենը չեն կարող բնիկ համարվել եւ, այդտիսով, նրանց չի կարող տրվել հասուկ կարգավիճակ<sup>10</sup>:

Միեւնոյն ժամանակ, ինչու ընդգծում են զեկույցի հեղինակները, «Վիճելի է, թե (ոչ միայն Վրաստանի դարագայում) եր եւ ինչ հանգամանեներում կիրառելի են «քնիկ» եւ «եկվոր» եզրերը: Նոված լեզվական փոքրամասնությունները բնակվել են ներկա Վրաստանը կազմող տարածքներում հայութավոր տարիներ: Փաս է, որ նրանի ունեն ազգակից-դեսուրյուններ կամ ազգակից-համայնքներ Վրաստանից դրւու, որոնց հետ նրանի դահդանում են սեր փոխհարաբերություններ (իմա՞ Հայաստանն ու Ադրբեջանը), եւ դա սնուցում է նրանց որդես ներգաղթյալների ընկալել»<sup>11</sup>:

Լեզվի մասին օրենքի նախագծում վեճեր հարուցած երկրորդ դրույքը դարւոնակիում է 11-րդ հոդվածում, որտեղ ամրագրվում է, որ «Վրաստանի յուրաքանչյուր բաղադրայի դարսավոր է շիրայետել վրացերենին»: Ընդդիմախոսները նույն էին, որ օրենքը չի կարող որեւէ մեկի նկատմամբ նման իրավական դարսավորություն սահմանել, այլ կարող է միայն դարսավորեցնել ու բաջանելու սուլուրելու լեզուն: Այնուհետև, օրինագծում ոչինչ չի ասվում վրացերենին չշիրայետող անձանց նկատմամբ իրավական հետևանքների մասին: Արդյո՞ք, նրանի կկրցնեն բաղադրացիությունը: Արդյո՞ք, նրանի կդառնան երկրորդ կարգի բաղադրացիութեր: Ահա այն մահողությունները, որոնք առաջ են բաւում վրացերենին չշիրայետող անձանց կրողմից: Ավելին, օրինագծում սահմանված չէ, թե ինչու դեմք է չափվի լեզվի իմացությունը եւ դրա ինչողիսի ասիձանը կարող է համարվել «շիրայետում վրացերենին»<sup>12</sup>:

Ընդհանուր առմանը այդտիսին է Վրաստանում լեզվի օգտագործմանը վերաբերվող նորմատիվ-իրավական բազան (կրության եւ մշակույթի բնագավառներում լեզվական խնդիրները մենք կիննարկեն առանձին):

Խոսի ազատությունը հասարակական կյանքի բոլոր կողմերի ժողովրդագույն վրա ազդեցության լայն դաշտ ունի: Էքնիկական փոքրամասնությունների համար մայրենի լեզվի օգտագործման իրավունքի հետ կաղված, այդ ազատությունն օծված է բաղադրական, մասնական եւ մշակութային կենսագործունեության բոլոր հարցերի շուրջ սեփական կարծիքի ազատ արտահայտման բնույթով: Պետության բաղադրական-իրավական

10 Korth B., Stepanyan A., Muskhelishvili M. Language Policy in Georgia, P.26-27:

11 Նոյն ժեղում:

12 Նոյն ժեղում:

դաշտում ազատութեն կողմնորութելու համար, և վյալ դեռության բաղադացիներ հանդիսացնող էթնիկական փոխանասնությունների ներկայացուցիչներին անհրաժեշտ է իրենց եւ սվյալ էթնիկական փոխանասնություններին դատկանող այլ անձանց համար հասկանալի լեզվով տեղեկատվություն ստանալ ու աշարծել: Այստիւվ, մայրենի լեզվի օգտագործման եւ կածիքի արտահայտելու իրավունքները փոխվաղակցված եւ փոխայինանափորված են: Առաջին իրավունքը կրում է անձնական բնույթ, ունի «անձնական ծանրաբեռնվածություն» (ընտանիք, կրորություն), երկրորդ ազատությունը էթնիկական փոխանասնության իրավունքների եւ ազատությունների դատավանական համատեսում ձեռք է բերում հրադարակային, բաղադական երան:

Ընդ որում, էթնիկական փոխանասնությունների լեզվական իրավունքների դատավանական ընթացքում է կարեւորագույն միջազգային փաստարդերում ամրագրված երկու հիմնարար սկզբունքների վրա, որոնք են՝ մարդու իրավունքների իրականացման ընթացքում ոչ խորական վերաբերմունքի դրսության եւ սվյալ փոխանասնության լեզվի, մշակույթի եւ կրոնի ազատության միջոցով անհատի զարգացման աջակցելու իրավունքները: Առաջին սկզբունքն առլա է, մասնավորաբեր ԵԱՀԽ-ի 1990թ. Կողենիազենյան փաստարդում (դարագրաք 31), Քաղաքացիական եւ բաղադական իրավունքների մասին 1966թ. միջազգային դայմանագրում (հոդվածներ 2 (1) եւ 26), Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների դատավանական մասին 1950թ. Եվրոպական կոնվենցիայում (հոդված 4), Ազգային փոխանասնությունների իրավունքների դատավանական մասին 1995թ. Եվրոպական Եվանակային կոնվենցիայում (հոդված 4) եւ միջազգային-իրավական այլ փաստարդերում: Երկրորդ հիմնարար սկզբունքն ամրագրված է ԵԱՀԽ-ի 1990թ. Կողենիազենյան փաստարդում (դարագրաք 32), Քաղաքացիական եւ բաղադական իրավունքների մասին 1966թ. միջազգային համաձայնագրում (հոդվածներ 27), Ազգային փոխանասնությունների իրավունքների դատավանական 1995թ. Եվրոպական Եվանակային կոնվենցիայում (հոդված 5):

Արացական հանրության ու ընտախավի մոտ ամենամեծ մտահոգությունն է հարուցում, գուցե, փոխանասնությունների ներկայացուցիչների դետական լեզվին չհրադետելու փաստը: Լեզվական խնդիրը նաև դեռության եւ էթնիկական փոխանասնությունների փոխարարերություններում առավել սուր հարցերից մեկն է: Ինչպես նույն են փորձագետներ՝ «Թեեւ վրացական հասարակությունը կազմված է անքիվ լեզվական խմբերից, որոնք դարձ ի վեր կրում են իրենց լեզվական ինքնությունը, փոխանասնությունների նկատմամբ տարվող բաղադականությունը տառապում է ակնիայ «Վրացականացմանը»: Թեեւ

փոնքամասնությունների լեզուները հանդուժվում են, դրանք, այնուամենայնիվ, դիմում են որպես խոչընդոտ վրացական միավելու հասարակության ստեղծման համար: Վրացական հասարակության մեջ համարկումն ընդհանրապես ընթանվում է որպես ձուլում միտրոսակիր էքսուժին»<sup>13</sup>: Բացի դրանից, այն փաստը, որ այրբեջանցիներն ու հայերը չեն խոսում վրացերենով, հաճախ մեկնաբանվում է որպես անհարգալից կամ ոչ օրինալահ վերաբերմունքի դրսւորում<sup>14</sup>:

Զնայած վրացական կառավարության եւ միջազգային դրսորկազմակերպությունների բայերին, փոնքամասնությունների ներկայացուցիչների կողմից դեւական լեզվին միավայր կազմությունը (ավելի ճիշտ՝ չիրադիտելու) հարցում ամբողջ հետխորհրդային ժամանակաշրջանում որևէ ռուսակի արդյունք չի նկատվում: Սակայն, Վրաստանի հայ փոնքամասնության դարագայում դեւական լեզվին չի միավայր կազմությունների հետին համայնքի ընդհանուր թվի միայն 30-40 %-ը (փաստում, միայն Զավախսի բնակչությունը), իսկ այդ փաստից բխող հայ փոնքամասնության նկատմամբ վրացական հասարակայնության եւ բարեկարգացման ընդհանուր բացասական տաճարությունները տարածվում են համայնքի բոլոր ներկայացուցիչների վրա<sup>15</sup>:

Վրաստանի բաղադրական դաշտի հետինակավոր ուսումնասիրություններից մեկում<sup>16</sup> մատնանշվում են լեզվական ոլորշի հետևյալ խնդիրները:

- Քարդանում են վրաց դեւության հետ էքսիլիական փոնքամասնությունների փոխհարաբերությունները: Ըստ հաճախ փոնքամասնություններն ստիլված են սարքեր մակարդակի դեւական հաստատությունների հետ հաղորդակցվելու քարգմանչի միջոցով:
- Երկրի ներսում լուրջ դժվարություններ են առաջանում սարքեր ազգություններին դաշտանող բաղադրական համայնքների ու էքսիլիական փոնքամասնությունների միջև: Խնդիրը սրվում է երիտասարդության կողմից ոռուաց լեզվի (որը խաղում է ազգամիջյան

13 Korth B., Stepanyan A., Muskhelishvili M. Language Policy in Georgia, P.25:

14 Նով. աշխ., էջ 29-30:

15 Գոյություն ունի կայուն մոլորդություն, որ վրաց մեծամասնության գրուսակոր վերաբերմունքը եւկրման բնակվող հայ փոնքամասնության նկատմամբ կատալած է հիմնականում Զավախսում լարված իրադրության եւ կրկնվող միջադիմերի կամ էլ այս տարածաշրջանի բնակչների վրացերենի շիմացության հետ: Սակայն, այդ գործոնների հետ մեկտեղ, դեմք նաև նույն էւել, որ ավելի շուրջ Զավախսի հայերը դարձան վրացեների մոտ 19-րդ դարի վերջերին - 20-րդ դարի սկզբներին առաջացած Թթվիլիսի հայ համայնքի բացասական ընկալման «դաշտանդներ»: Զավախսի հարց հայենեց ներկայական խալաֆական օրակարգում (այս էլ ուր ձևով) միայն 1980-ական թթ. առաջին կեսին հոգհարդային Վրաստանում ազգայնական եւ հակախորհրդային շարժման հղուածանը գուգընեաց:

40 Տվյալ փաստը արձանագրում է նաև արտասահմանյան փորձագետները. «Ավագլաւաֆի ու Նիմոնդինայի շրջաններում բանակիր հարդրակցության մեջ օգտագործվող լեզուն գրեթե բացառապես հայերենն է: Անզան տեղափակ վրացիների մեծամասնությունը նոյնակա խոսում է այլ լեզվով» - Տե՛ս մանամասն՝ Wheatley J. The Status of Minority Languages in Georgia and the Relevance of Models from Other European States. P.7.

41 Korth B., Stepanyan A., Muskhelishvili M. Language Policy in Georgia. P.30-31.

42 Գաբունյա Կ. Содействование преподаванию грузинского в качестве второго языка в регионах Грузии, компактно заселенных национальными меньшинствами // Языковая политика и образование в многоязычных обществах. Материалы конференции, Тбилиси, Грузия, 2 марта 2006 г. Женева: Cimera, Сентябрь 2006. С.22.

օգտագործելու հիմնարար իրավունքի իրականացումը, բնականաբար, կախված է այն իմանալու նրանց հնարավորություններից: **Հապայի հանձնարարականների** համաձայն «ազգային փոնքամասնություններին դատկանող անձանց ինքնորոշման դահլյանման իրավունքը կարող է ամբողջովին իրականացվել, եթե նրանի ուսուցման գործընթացի ընթացքում ստանում են մայրենի լեզվի համադասախան գիտելիքներ» (կետ 1): Ավելին, փոնքամասնությունների համախումբ բնակության շրջաններում փոնքամասնությունների լեզուներով արդյունավետ եւ ընդլայնված կրթությունը կարող է դառնալ բաղադրյալ համարկման կարեւուր սար միայն այն դեմքերում, եթե այն տարվում նաև այն անձանց համար, որոնք չեն դատկանում երնիկական փոնքամասնություններին: Դա օժանդակում է հանդուժողականությանը, հաղորդակցության ընդլայնմանը եւ փոնքամասնության ու մեծամասնության միջեւ փոխըմբռման մթնոլորտի հաստատմանը: Ըստ որում, ինչողեւ նույն է ԵԱՀԿ-ն, փոնքամասնության լեզվով վարչական եւ դատական մարմինների հետ հաղորդակցվելու իրավունքի լիարժեք իրականացման դեմքում «լեզվի ուսուցումը դեմք է տարվի նաև փոնքամասնության խմբից դուրս»<sup>43</sup>: Եվրոպայի խորհուրդն իր հանձնարարականներում նոյնականացնելու համապատասխան է մեկից ավելի լեզուների իմացության կարեւուրությունը որպես միջմշակութային սփման, երկխոսության եւ հանդուժողականության առավել լավ միջոց<sup>44</sup>: Քացի դրանից, նշանակալից թվով երնիկական փոնքամասնություններ ունեցող երկրների հանրակրական դրամությունը փոնքամասնությունների մշակույթի, դասմության եւ կրոնի դասավանդումը նախադրյալներ է ստեղծում ներքին կայունության եւ ներդաշնակության համար՝ օժանդակելով հաճախ երնիկական փոնքամասնությունների մշակույթը ներքին անտեղյալությունից կամ աղաքաղաքացիությունից բխող ազգային անհանդուժողականության եւ խորականության դրսուրումների նկատմամբ կայուն, հանդուժողական բազմաէրնիկ հասարակության կառուցմանը<sup>45</sup>:

Այստեղով, անհրաժեշտ է ավելի լուրջ ու դատասխանատու վերաբերմուն դրսուրությունների կամ կայունությունների լեզուներով տարվող հանրային ու բարձրագույն կրթության խնդիրների նկատմամբ, ինչը դեմք է իր հսկությունում:

43 Report on the Linguistic Rights of Persons Belonging to National Minorities in the OSCE Area. OSCE HCNM, 1 March 1999.

44 Council of Europe Committee of Ministers, Recommendation No R (98) 6 Concerning Modern Languages, 17 March 1998.

45 Council of Europe, Explanatory Report on the Framework Convention for the Protection of National Minorities, para 71.

ձեւակերպումը գտնի սվյալ ողորշին վերաբերվող Վրաստանի նորմատիվ-իրավական ակտերում։ Լեզվական իրավունքների դաւադանության համար իրավական շրջանակների ստեղծումը կարեւորագոյն դայման է փոփոխականությունների հիմնարար իրավունքների մեջ հայեցողական միջամտության բացառման եւ միջազգային չափանիւնների ամրողական ներդրման համար։ Էքսիլիական փոփոխականությունների լեզուներով ուսուցումը դժուս է դիմակի որդես փոփոխականությունների ներկայացուցիչներին Վրաստանի ընդհանուր մշակութային եւ կրթական դատարանական ներգրավելու անհրաժեշտ դայման։

## 2.4. Կրոնի ազատություն

Կրոնի ազատության իրավունքը մարդու իրավունքների եւ ազատությունների իրավական փարերի մասն է։ Եթզ որեւէ երկրում խախսվում են էքսիլիական փոփոխականության կրոնական իրավունքները, աղա դա վկայում է սվյալ դիտության ոչ իրավական եւ ոչ ժողովրդավարական բնույթի մասին։ Կրոնական համբուժողականությունը հատկադիր այժմեական ու անհրաժեշտ է մեր ժամանակներում։ Կրոնական իրավունքները չճանաչելը կամ դրանց սահմանափակելը<sup>46</sup>, եթե, իհարկե, դա չի կատարվում ներքին օրենադրության շրջանակներում եւ միջազգային իրավունքի համբուժիանուր սկզբունքներին ու նորմերին համադատասխան<sup>47</sup>, անթույլաւուելի է։

**Կրոնի եւ համզամունքների հիման վրա անհանդուժողականության եւ խորականության բոլոր ձևերի վերացման մասին հոչակագրում** (ընդունվել է ՍԱԿ-ի 36/55 քանակեալ 1981թ. նոյեմբերի 25-ին) ասվում է. «Ոչ ոք չուժութեալ է ենթարկվի խորական վերաբերմունքի կրոնի կամ համազմունքների հիման վրա որեւէ դիտության,

46 Համաձայն Կրոնի կամ համզամունքների հիման վրա անհանդուժողականության և խորականության բոլոր ձևերի վերացման մասին 1981թ. հոչակագրի 6-րդ հոդվածի՝ մսի, խոդի եւ կրոնի կամ համզամունքի ազատության իրավունք ներառում է, մասնավորապես, հետեւյա ազատություններ՝ կատարել դաւամունք կամ կրոնի ու համզամունքների հիմունքով հավաքնել կազմակերպել, ստեղծել ու դահել դրա համար նախատեսված հասուն վայրեր, համադատասխան ծավալով արարել, ձևով բերել եւ օգտագործել կրոնական ծեսերին ու ստորոտյուններին առնչվող անհրաժեշտ առարկաներ ու նյութեր, գրել, տպագրել ու տարձել այդ բնագավառներին վերաբերող համադատասխան նյութեր, կրոնի կամ համզամունքների հարցերով դրա համար նախատեսված ժեղեսում ուսուցում կատարել, դասել կրոնով և համզամունքներով կարգադրող հանգստյան օները, ներէ տնեներ, կատարել դաւամունքը, հաստատել եւ դահել կատեր կրոնի եւ համզամունքների բնագավառի առանձին անհանդին համայնքների հետ ազգային ու միջազգային մակարդակներում եւ այլն։

47 Զի իրականացվում կրոնական անհանդուժողականության, դիտության սահմանադրական կարգի սաղավածն եւ բարոգություն եւ այլ դայմաններ, նոված, օրինակ, Մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների դաւամության 1950թ. եվրոպական խարտիայի 2-րդ մասի 9-րդ հոդվածում։

հաստատության, անձանց խմբի կամ առանձին անձանց կողմից» (հոդված 2) նաև «Արոնի կամ համոզնունքների հիման վրա մարդկանց նկատմամբ խրական վերաբերմունքը մարդ անհատի արժանադաշտության դեմ վիրավորանք է ու ՄԱԿ-ի կանոնադրության սկզբունքների մերժում եւ դատադարտվում է որպես Սարդու իրավունքների համբնդիանու հոչակագրով ամրագրված եւ նարդու իրավունքների միջազգային համաձայնագրերում ճանամասն շարադրված ճարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների խախտում եւ որպես խոչընդուն դեսուրյունների միջեւ բարեկամական եւ խաղաղ հարաբերությունների համար» (հոդված 3):

**Սարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների դաւադանության 1950թ. եվրոպական խարիսխան ամրագրում է.** «1. Յուրաքանչյուր ու ունի մՏՔ, խղձի եւ կրոնի ազատության իրավունք. այդ իրավունքն իր մեջ ներառում է իր կրոնն ու համոզնունքները փոխելու ազատություն եւ սեփական կրոնն ու համոզնունքները, ինչպես անհատապես այդուն էլ այլ մարդկանց հետ միասին հրամարակայնորեն եւ մասնավոր կարգով, ծխակարգով, ուսմունելով եւ կրոնական ու արարողակարգային ծխակարարությունների միջոցով դավանելու ազատություն: 2. Սեփական կրոնն ու համոզնունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այսուհիս սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ հասարակական անդրութի, հասարակական կարգի, առողջության եւ բարյականության դաւադանության տակածության տակերից ելնելով կամ այլ անձանց իրավունքների եւ ազատությունների դաւադանության համար» (հոդված 9):

**Ազգային փոնքամասնությունների իրավունքների դաւադանության մասին 1995թ. ցանքակային կոնվենցիան ամրագրում է դեսուրյունների դատավախանակությունը կրոնի ազատության դաւադանության ոլորտում. «Կողմերը դարսավորվում են ճանաչել ազգային փոնքամասնության դատկանող յուրաքանչյուր անձի՝ սեփական կրոնը կամ հավաքը բացահայտ դավանելու, ինչպես նաև կրոնական հաստատություններ, կազմակերպություններ եւ միավորումներ ստեղծելու իրավունքը» (հոդված 8):**

Սակայն, հետխորհրդային Վրաստանի ներին նորմատիվ-իրավական դաշտի եւ խաղական իրողությունների վելուծությունը ցոյց է տալիս, որ այդ երկրում խղձի ազատության եւ էքնիկական փոնքամասնությունների իրավունքների դաւադանության ոլորտում ֆերու իրավիճակը ամբարեհաջող է:

Թեև համաձայն 1995 թ. սահմանադրության (հոդված 9) դեսուրյունը ճանաչում է Վրաստանի ուղղափառ եկեղեցու բացառիկ դեր երկրի դատադանության մեջ, բայց, մասմանակ, հայտարարվում է դավանանի լիակատար

ազատության եւ ղետությունից եկեղեցու անկախության մասին: Սակայն Վրաստանը հետխորհրդային միակ երկիրն է, որը չունի կրոնի կամ կրոնական միավորումների մասին առանձին օրենք, ինչը մեծ չափով բացատրվում է ՎՈՒԵ-ի հակագրեցությամբ, որն օժշված է հատուկ կարգավիճակով եւ խուռա ազրեցություն ունի երկրի հասարակական-խաղաքական գործընթացների վրա: Դրա հետ մեկտեղ ՎՈՒԵ-ն ունի նեանակալից արտնություններ, այդ թվում հարկերի վճարման եւ զույգի սեփականության հարցերում, այն դեղբում, երբ երկրի այլ կրոնական միավորումները գործնականում գործ են նման արտնություններից:

ՎՈՒԵ-ի հատուկ, կարելի է ասել սահմանադրական, կարգավիճակն ամրագրված է 2002թ. հոկտեմբերի 14-ին սուրագրված այսպես կոչված Կոնկորդատով (Պատմութեան՝ «Վրաստանի ղետության եւ Վրաստանի Առաքելական Ինֆնիտիսան ՈՒղղափառ Եկեղեցու միջեւ սահմանադրական համաձայնագիր»): Հատկանշական է, որ այդ համաձայնագրի սուրագրման նախադարձատության առնչությամբ Վրաստանի խորհրդարանը հատուկ օրենք ընդունեց «Վրաստանի սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացուներ կատարելու մասին», որով Սահմանադրության 9-րդ հոդվածում հայտնվեց 2-րդ կետը, որով կանոնակարգվում է ՎՈՒԵ-ի հատուկ կարգավիճակը:

Միենանուն ժամանակ, Վրաստանի բոլոր այլ կրոնական միավորումների համար շատ սուր կերպով է դրված անզամ նրանց գրանցման խնդիրը: Վրաստանում կրոնական կազմկերպությունների ստեղծման հետ կաղաքած հարցերը ղետք է կանոնակարգվեն 1997թ. ընդունած Քաղաքացիական օրենսգրքով, որի 1509-րդ հոդվածում նշվում է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձին են հանրական օրենսդրության համաձայն ստեղծված ոչ ղետական կազմակերպություններ (բաղադրական կուսակցություններ, կրոնական միավորումներ եւ այլն): Սակայն, Հանրային իրավունքի իրավաբանական անձանց մասին օրենքը չի նախատեսում կրոնական միավորնան գրանցումը որպես իրավաբանական անձի: Ըստ այդ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի, իրավաբանական անձ կարող է ստեղծվել 1. օրենքին համապատասխան, 2. Վրաստանի նախագահի հրամանագրով, 3. ղետական կառավարման մարմնի վարչական ակտով: Բնականաբար, նեված դեմքերից եւ ոչ մեկը կիրակելի չէ կրոնական միավորնան գրանցման կամ հիմնադրման դեղբում: Վրաստանում կրոնական միավորումների գրանցման հարցն էլ ավելի է խճճվել «Եհովայի վկաների» գրանցման հարցով Վրաստանի գերազուն դատարանի կայացրած վճիք հետո, որի համաձայն կրոնական միավորումները ղետք է ունենան հանրային իրավունքի սուրյեկտի կարգավիճակ եւ անքույլատելի է կրոնական միավորումների գրանցումը որպես միություն (միավորում), այսինքն՝ Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված

մասնավոր իրավունքի իրավաբանական անձ<sup>48</sup>:

«Վարդերի հեղափոխությունից» հետո կրոնական ոլորտում իրավիճակն սկսեց որոշակիորեն փոխվել, սակայն, ակնհայտորեն, ոչ բավարար չափով: 2005թ. առջիկի 5-ին Խորհրդարանը փոփոխություններ կատարեց Վրաստանի ֆալաքրական օրենսգրքի 1509 հոդվածում, որոնց համաձայն կրոնական կազմակերպություններին, առաջին անգամ վրացական ղետության դատմության մեջ, որդես մասնավոր իրավունքի շահույթ չհետաղնդող իրավաբանական անձեր գրանցվելու հնարավորություն տրվեց: Զնյայած դրան, մի բանի կրոնական միավորումների գրանցման հարցը դեռևս մնում է զուծված, բանի որ, անընդունելի համարելով որդես հիմնադրամ կամ միություն գործելը, նամանավանդ, երբ Վրաստանի ուղղափառ եկեղեցին իրենից ներկայացնում է հանրային իրավունքի իրավաբանական անձ, Կարոլիկ Եկեղեցին, Հայ առաքելական Եկեղեցին եւ Լյութերանական-ավետարանչական Եկեղեցին հրաժարվում են մասնավոր իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակից: Համադատասխանաբար, նրանք դահանջում են կամ կրոնական միավորումների մասին հստակ օրենքի ընդունում կամ յուրաքանչյուր կրոնական համայնքի հետ առանձին համաձայնգրի ստորագրում (Կոնկորդացի օրինակով): Հետաքրիր է, որ նոյնանձան դիրքորոշում ունեն նաև վրացական առաջատար իրավադաստանական ու փորձագեները, մասնավորապես, Վրաստանի մարդու իրավունքների դաշտան U. Սուրբարին<sup>49</sup>:

Վրաստանում կրոնական միավորումների գրանցման հարցը սերուեն կապված է մի շարժ ավանդական ոչ ուղղափառ դասանաների, մասնավորաբեն՝ Հռոմի կարոլիկ եւ Հայ առաքելական Եկեղեցիների, որոնք խորհրդային ժամանակաշրջանում զրկվել են իրենց Եկեղեցական կառույցներից եւ սամաների մեջ մասից, գոյքային իրավունքների հետ: Գրանցված իրավական կարգավիճակի բացակայության դայմաններում այս Եկեղեցիները չեն կարող աղահովել մի շարժ կրոնական եւ դասանական հուտարձանների վերաբերյալ, անգամ եթե վրացական իշխանությունները մոտ աղազայում ի վիճակի լինեն դրսեւորել բաղադրական կամ եւ համաձակվեն վերաբերյալ այդ ժեներն իրենց նախկին տերերին:

Խորհրդարանում Վրաստանի մարդու իրավունքների դաշտանի սկած զեկույցում այդ առնչությամբ նշվում էր. «Համաձայն վրացական ղետության եւ Ուղղափառ Եկեղեցու միջև ստորագրված Սահմանադրական համաձայնագրի՝ ուղղափառ հոգեւորականներն ազատված են զինվորական ծառայությունից, ղետությունը ձանաչում է Եկեղեցական դասակարգությունը, դաշտանում

48 Խանձրավ Ի. Պերков в современной Грузии // Центральная Азия и Кавказ, №5, 2003. С.29-30.

49 Հայսնի վրացի փորձագետ Պ. Զաբարեհելիի կողմէ (07.02.2006) եւ Վրաստանի մարդու իրավունքների դաշտան U. Սուրբարի (06.02.2006) հետինակի գրույցներից:

խոսովանության գաղտնիքը, մեծ կրնական տոները հայտարարում ոչ աշխատամիային օրեր, դեռույթում ու եկեղեցին համագործակցում են ընդհանուր հետարքություն ներկայացնող տարբեր ոլորտներում, եկեղեցին օգտվում է հարկային արտնություններից, դեռույթում դարձավորվում է մասնակիորեն փոփսիատունը 19-20-րդ դդ. եկեղեցուն հասցված վճաները եւ այլն: Պետությունն այդ արտնությունները տալիս է միայն Ուղղափառ եկեղեցուն: Դրանով, փասորեն, խախտվում է Սահմանադրությամբ (հոդված 38) ու միջազգային դայմանագրերով ճանաչված հավասարության հիմնարար սկզբունքը: Մինչեւ դեռույթունը նոյնանման արտնություններ չշրամադրի այլ Եկեղեցիներին, վերջիններս գտնվելով ոչ հավասար վիճակում կենքարևլեն անուղղակի խորականության»<sup>50</sup>:

Պետք է նշել, որ մինչեւ Կոնկորդափառ սուրբարքումը Վրաստանի բազմաթիվ իրավադատության եւ ոչ-կառավարական կազմներություններ ակտիվութեան հանդես էին գալիս նման իրավական ակտի ընդունման դեմ, իսկ երբ ընթրնեցին նման դիրքորոշման անարդյունավետությունը, փորձեցին գոնես խոչընդոտել այնուիս ձեւակերպումների ընդունմանը, որոնք կատող էին լրջորեն սահմանափակել Երկրում խղճի ազատության իրավունքը: Ինչոքս խոսովանում են իրենի վրացի փորձագետները, կրոնական բազմակարծությունն էական խսնդիր է Վրաստանի համար, ու թեեւ կրոնական փոնտամասնությունների ներկայացուցիչների ֆիզիկական անվտանգությունը ընդհանուր առմամբ Երաշխավորված է, այնուամենայնիվ, իրենց կրոնական դատկանելության դաշտառով նրանից հաճախ կարող են գրկել աշխատանիցից կամ ենթարկվել հասարակական օսրակիզմի:

Ավելին, չնայած այն բանին, որ Կաքողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը բոլոր դատաժողություններին, որոնք «ազգի հոգեւոր հայր», կանգնած է Երկրի նախագահի կողմին, այնուամենայնիվ, ներկա վրացական իշխանությունների եւ Ուղղափառ եկեղեցու միջեւ հակասություններ գոյություն ունեն: Դա բացառվում է նրանով, որ ՎՈՒԵ-ի որոշակի ցանակներ, ներկա վրացական իշխանությունների կողմից որոշես գերակա կողմնորոշչներ հայտարարած ու վրացական ընտրախավի մեծամասնության կողմից կիսվող, ազատական արժեները ընկալում են որոշես Ուղղափառ եկեղեցու հիմքերին հակասող բացահայտ սղանալիք: Վրացի ուսումնասիրողի վկայությամբ «Վրաստանում ձեւավորվել է դարադրսային իրավիճակ՝ վրացական ազգայնականությունը, որին բնորու եւ կրոնին ու ուղղափառությանն ադապտինելը, հակառական եւ ու արեւմտամետ դիրքորոշում ուներ, իսկ Վրաստանի ուղղափառ եկեղեցու ներում հոգեւականության աշխարհայացքի

50 Տե՛ս մանեամասն «Спорные церкви», манифестация греков и пропавший Молла: Доклад Народного Защитника Грузии // <http://www.regnum.ru/news/569444.html>, 07.01.2006.

ձեւավորումը տեղի էր ունենում հիմնականում հակազատական ու հակասարենմյան ռուսական ավանդույթների հիման վրա: ...Փորձագետների ու ազատական արժեքներ դավանող հոգեւորականության կածիfnվ, Վրաստանի ուղղափառ եկեղեցու հիմնական ներքին խնդիրը հենց ուղղափառ կրոնական ազգայնականությունն է, որը հանգեցնում է կրոնական ու էրիկական փորձամասնությունների իրավունքների նկատմամբ խորականության եւ ուղղափառության այլասերման»<sup>51</sup>: Դրա հետ մեկտեղ, վրացական բաղադրական ընտարախավի բազմաթիվ արևմտամետ գործիչների մոտ կայուն համոզմունք կա, որ ՎՈՒԵ-ն շարունակում է ակտիվորեն համազործակցել Վրաստանի եւ ԱՄՆ-ի ու Եվրոպական Երկրների միջեւ հարաբերությունների վարչարացմամբ շահագրգուված Ռուսաստանի որոշակի ուժերի հետ. «Դա եկեղեցական ցանցները վերածում է Վրաստանուն հակասարենմյան տրամադրությունների ներուժով օծված զիսխավոր կրվաններից մեկի, թեև, դաշտնադես, եկեղեցին որեւէ խնդիր չի հարուցում Վրաստանի Եվրոպական ու Եվրասիանմյան համարկման կողմնորոշման նկատմամբ»<sup>52</sup>.

Վրաստանում խղճի ազատության եւ կրոնական փորձամասնությունների իրավունքների ղաւառմանության խնդիրը ոչ միայն սերութեան կաղված է ՎՈՒԵ-ի հասու կերի կամ կրոնական ոլորսը կանոնակարգող ներքին օրենսդրության անկատարության հետ: Ծաս սալելի վասնեզավոր է այն իրողությունը, որ կրոնը ու կրոնական կառուցները, էրիկական փորձամասնությունների հետ կապված հարցերում եւ, համապետ, նրանց համախումք բնակլության շրջաններում, դաշել են ներկացական բարեփական առձակագույն գործններ ու դերսկատարներ: Օրինակ, Սամցխե-Զավախի բազմաթիվ բնակիչների մոտ այն տրավորությունն է ստեղծվում, որ բացասական միջադեղները հաճախ առաջանում են ոչ այնքան կենտրոնական իշխանությունների հաղթելու կամ ոչ արհեստավարժ գործողությունների հետեւանենք, որքան տարածացանում ՎՈՒԵ-ի առաջնորդարանի հետևողական դիրքորոշումից, որը դարձարդում է իշխանությունների ներկայացուցիչներին ավելի արմատական բայցեր ձեռնարկելու: Տեղացիները որդես օրինակ բերում են, մասնավորապես, Ախալքալաքի ցանքի Սամասար գյուղի հայկական եկեղեցու շուրջ միջադեղին ՎՈՒԵ-ի ներկայացուցիչների մասնակցությունը, Նիմոնձինդայի ցանում վրացազգի երեխանների հանար որբանոցի կառուցումը եւ այլ դեղբեր, որոնք

51 Կելովզ Ա. Этнический национализм в духовенстве Грузинской Православной Церкви // Южный Кавказ: Территории. Истории. Люди. Сборник статей, №2. Тбилиси: Фонд Г.Белля, 2006. С.137.

52 Nodia G., Scholtbach A.P. The Political Landscape of Georgia. Political Parties: Achievement, Challenges and Prospects. P.80.

հաճգեցրել էին կամ կարող էին հաճգեցնել տեղի բնակչության և Ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչների միջեւ բացահայտ ընդհարումների<sup>53</sup>:

Ընդ որում, խնդիրը բացարձակադիմում չէ, որ Վրաց ուղղափառ և Հայ առավելական եկեղեցիների միջեւ գոյություն ունեն կրոնական խորքային որեւէ հակասություններ: Թեեւ Վրաց և Հայ եկեղեցիների հետեւրդների համար, հնարավոր է, գոյություն ունի զուս ասվածաբանական բանավեճի առարկա, սակայն նրանց փոխհարաբերություններում զիսավոր խնդիրն այսուհետեւ կոչված «վիճելի» եկեղեցիների եւ էքսիլիական փոխանակությունների կրոնական համայնքների իրավաբանական կարգավիճակի հարցերում տարբեր մոնեցումներ ունենալու եւ, դրա հետեւանոնք, հոգեւոր առաջնորդների կողմից նեված հարցերի ավելորդ խաղաղականացված ընկալման մեջ է:

Ներկայում Վրահայոց թեմը բախվում է մի շարժ դժվարությունների: Եթե 1920-ական թթ. Վրաստանում կար ավելի քան 600 հայկական եկեղեցի եւ դաւանումքային կառույց, աղայ ներկայում դրանցից մնացել է ընդամենը շուրջ երկու տասնյակը: Խորհրդային տարիներին գրեթե բոլոր եկեղեցիները, բացառությամբ մեկ-երկուսի, փակվեցին: Վրաստանի անկախության հոչակումից հետո վերաբացվեց միայն մի քանի հայկական եկեղեցի, հիմնականում Սամցխե-Զավախսի եւ Քվեմո-Փարթիի Ծալկայի տրամադրությամբ: Սակայն, ինչպես արդեն նշվել է, շատ սուր կերպով է դրված իրավաբանական գրանցման խնդիրը, չկա կրոնական հարցերը կարգավորող օրենք: Թեմի առջեւ նաև խորհրդային ժամանակ բռնագրավված կամ ՎՈՒԵ-ին փոխանցված հայկական եկեղեցիները եւ կրոնական կառույցները հետ ստանալու դժվարին խնդիրն է ծառացած: Առաջնային է եկեղեցիների եւ դաւանական հոււարձանների վերականգնման խնդիրը: Վերջին ժամանակներում Վրաստանում նաև դիմում են հայկական եկեղեցիները դդելու կամ վնասելու դեմքեր<sup>54</sup>:

Ինչողև այդ առիթներով նեվում է Վրաստանի օմքությամենի գեկույցում. «Խորհրդային ժամանակաշրջանում Հայ առավելական եկեղեցին թքիլիսիում ժամերգություն էր կատարում միայն երկու եկեղեցիներում: Նման վիճակ է եւ այսօր: ....Վիճելի եկեղեցիների դասձառով զգալիորեն լարվել են Վրաստանի դատիրաբարաններ և Հայ առավելական եկեղեցների միջեւ հարաբերությունները: Տվյալ փոլում Հայ առավելական եկեղեցն Վրաստանի թեմը սուր կերպով է դնում թքիլիսում՝ Նորաւեն եւ Ախալցխայում՝ Սր. Նուան եկեղեցիները հետ ստանալու խնդիրը: Պատրիարքանը հայտարարում է, որ սվյալ եկեղեցիների

53 «Паломники» хотели обосновать в Джавахети грузинский монастырь – подробности инцидента // www.regnum.ru/news/485545.html, 18.07.2005.

54 В Ахалцихе (Грузия) неизвестные осквернили армянскую церковь // www.regnum.ru/news/640941.html, 16.05.2006.

հարցն ուսումնասիրող հանձնաժողով կարող է ստեղծվել միայն կրոնական միավորումների մասին օրենքի ընդունումից հետո, իսկ այդ օրենքի վերաբերյալ խորհրդարանն արդեն արտահայտել է իր բացասական կարծիքը: Պատրիարքարանի դիրքորոշումը ... հաւաքի է առնում կառավարությունը, որը եկեղեցիներն իրենց դասմական տերերին վերադարձնելու, կամ չվերադարձնելու հարցով չի կարող միակողմանի կարգով որոշում ընդունել»<sup>55</sup>:

Միջազգային իրավադաստան կազմակերպություններ եւ մի շարք երկրների կառավարություններ եւս լուրջ ուժադրություն են դարձնում երկրում կրոնական ազատության խնդրին եւ կոչ են անում Վրաստանի իշխանություններին արդարացի կերպով լուծելու սվյալ հարցը<sup>56</sup>: Վրաստանում խղճի ազատության ոլորտում միրող կացությանը նվիրված ԱՄՆ դեժբարութարության 2005թ. զեկույցում մասնավորապես նշվում է, որ Հռոմի կարողիկ եւ Հայ առաքելական եկեղեցիներն ի վիճակի չեղան առահովելու խորհրդային ժամանակաշրջանում փակված եկեղեցիներ եւ այլ կառույցներ վերադարձնելը, որոնցից շատերը հետազոտմ դեմության կողմից փոխանցվեցին Վրաստանի ուղղափառ եկեղեցուն<sup>57</sup>:

Զնայած միջազգային հանրության ու բազմաթիվ վրացի իրավադաստանների հստակ գնահատականներին եւ հանձնարարականներին, հաևկանական է, որ Վրաց ուղղափառ եկեղեցին շարունակում է բացասարա վերաբերվել «վիճելի եկեղեցիների» խնդրին՝ սվյալ հարցն ընկալելով որդես «զրյական գումարով խար» («zero sum game»). այսինքն, Հայ եկեղեցուն դատկանող կրոնական կառույցները վերադարձնելը Պատրիարքարանի որոշ ներկայացուցիչներն ընկալում են զրեք որդես «վրացական կողմի դարսություն», եւ, համադրասախանաբար, այդ հարցը տեղափոխվում է այլեւայլ հրադարակային հայտարարությունների եւ անզամ բաղադրական դայլարի գինանոցից վերցված «հակաֆայլերի» ոլորտ, ինչը բացաձակակապես չի շաղկադրվում երկու կրոնական միավորումների փոխարքարերությունների շրամաբանությանը<sup>58</sup>:

55 Տե՛ս նաև մասնամաս՝ «Спорные церкви», манифестация греков и пропавший Молла: Доклад Народного Защитника Грузии // [www.regnum.ru/news/569444.html](http://www.regnum.ru/news/569444.html), 07.01.2006.

56 Տե՛ս նաև մասնամաս՝ Problems of Religious Freedom and Tolerance in Selected OSCE States. Report to the OSCE Supplementary Meeting on Freedom of Religion or Belief. International Helsinki Federation for Human Rights (IHF). Vienna, July 17-19, 2003. P.25; Annual Report of the United States Commission on International Religious Freedom. Washington, May 2005. P.87-90.

57 Georgia. International Religious Freedom Report - 2005 // Released by the Bureau of Democracy, Human Rights, and Labor. US Department of State. Washington, November 8, 2005.

58 Հրազդական պատրիարքարերությունների մասնական միավորումների փոխարքարերությունների շրամաբանության // [www.regnum.ru/news/603949.html](http://www.regnum.ru/news/603949.html), 11.03.2006.

Քարերախտաբար, վերջին ժամանակներում կրոնական խնդիրների հասարակական են խաղաքական ընկալման մեջ որոշակի դրական փոփոխություններ են նկատվում: 2005թ. հունիսի 15-ին և 16-ին ստեղծվեցին միանգամից երկու Կրոնական խորհուրդներ, որոնք կրոնական ոլորտում հարցերի համաձայնեցման նոյատակով միավորեցին երկու գործող իիմնական կրոնական միավորումների ներկայացուցչներին: Առաջին Կրոնական խորհուրդն ստեղծվեց Վրաստանի դատիքարքի նախաձեռնությամբ, իսկ երկրորդի նախաձեռնողը Վրաստանի նարդու իրավունքների դատավանն է: Ավելին, 2006թ. փետրվարի 6-ին Մարդու իրավունքների դատավանին կից գործող Կրոնական փոխանակությունների իրավունքների խորհուրդը կոչ արեց Վրաստանի կառավարությանը «հասվի առնելով Հայ առաքելական եկեղեցու անվիճելի իրավական, դատմական եւ այլ իրավունքներ» նրան հստակ իրավական կարգավիճակ տալ և օժանդակել խորհրդային ժամանակներում առգրավված 6 հայկական եկեղեցիները վերադարձնելուն<sup>59</sup>:

Իր 2005թ. դեկտեմբերի 23-ի գելույցում Վրաստանի օմբուդմանն առաջարկեց երկու գործող կրոնական կազմակերպությունների գրանցման ընթացակարգում փոփոխություններ կատարել. «Այս կրոնական միավորումների հետ, որոնք չեն ցանկանում գրանցվել ըստ գործող ընթացակարգի, դեռք է ստորագրվի համաձայնագիր, որով որոշվելու է նրանց իրավական կարգավիճակը եւ նախատեսվելու է Ուղղափառ եկեղեցու արտնությունների տարածումը նաև այդ եկեղեցների վրա»<sup>60</sup>: Իր հարցարդյույններից մեկում Ս. Սուրարին, նկատի ունենալով Թիֆլիսի Նորաւեն եկեղեցին, հետեւյալն է նշել. «Պետությունը դեռք է ձեռնարկի բոլոր միջոցները եկեղեցներն իրենց դատմական ժերերին վերադարձնելու նոյատակով:...Ես երբեք ի վիճակի չեմ լինելու ինձ խսկական իրավունյա զգալ, եթե տարածներն ու եկեղեցները, որոնք դատմականորեն դատկանել են որոշակի կրոնական խմբին, անօրինական ճանապարհով օսարված մնան»<sup>61</sup>:

Պետք է նկատի ունենալ, որ թեև Ս.Սուրարին վայելում է Վրաստանուն ներկայացված բազմաթիվ միջազգային կազմակերպությունների, վրացական կառավարության, կառավարող խորհրդարանական մեծամասնության, ինչպես նաև մի շատ ոչ-կառավարական կազմակերպությունների եւ փորձագետների աջակցությունը, սակայն դա առավելադեպ արտահայտվում է մարդու

59 Հեղինակի հանդիպումը Խորհրդի անդամների եւ Վրաստանի օմբուդմանն Ս.Սուրարին հետ (06.02.2006):

60 Տի՛ն մանեցաման՝ «Спорные церкви», манифестация греков и пропавший Молла: Доклад Народного Защитника Грузии // www.regnum.ru/news/569444.html, 07.01.2006.

61 Basilata E. Majority Rule or Respect for Diversity? // The Messenger, 20.01.2006.

իրավունքների դաշտանության ընդհանուր խնդիրներում, բայց էթնիկական կամ կրոնական փոփամասնությունների դաշտանությանը վերաբերվող կոնկրետ հարցերում: Դրա հետ մեկտեղ, Վրաստանի գործող օմբուդմենտն իր ազատական հայացքների եւ ՎՈՒԵ-ի նկատմամբ բռնած իր կոչ դիրքորոշման դաշտառով բավականին բացասակարա է ընկալվում վրացական հանրության եւ բաղադրական ընտրախսավի որոշակի հատվածի կողմից, ինչը բավականին կասկածելի է դաշտում կրոնական ոլորտում իրավիճակի արագ փոփոխման հնարավորությունը, որը դահանջում է վրացական դեսության կողմից ավելի հսակ բաղադրական կամի դրսեւում եւ վրացական հանրության մեջ առկա որոշ կարծրացիոն չեզոքացում:

Վրաստանում կրոնական հանդուժողականության, խղճի իրական ազատության հաստատման եւ Վրաստանի դաշտիարքարանի եւ Հայ առաքելական եկեղեցու վիրահայոց թեմի միջեւ փոխհարաբերությունների նորմալացման ուղղությամբ իրավիճակի զարգացման հեռանկարները շարունակում են որոշել հետեւյալ գործունները.

- Զավախսում ՎՈՒԵ թեմի գործունեության ակտիվացման հետևանքով այնտեղ իրավիճակի բարդացման կայուն գործընթացները: Թեեւ այդ ակտիվացումը տեղի հայ բնակչության կողմից բավականին սուր եւ բացասաբար է ընկալվում, այս միաժամանակ վրացական հանրության եւ ընտրախսավի որոշակի ցջանակների ընկալումներում ամրացնում է վրացական կառավարության հետ փոխհարաբերություններում Ուղղափառ եկեղեցու դիրքերը.
- Հայկական հասարակական-բաղադրական կազմակերպությունների եւ վրացական մի շարք ոչ կառավարական կազմակերպությունների դիրքորոշումների արմատականացումը, որը կարող է արտահայտվել հայկական եկեղեցիների հարցը հանգուցալուծելու ձգտմամբ՝ «անկախ այն գործընթացից, որն անարդյունավետ կերպով արդեն մի բանի տարի ընթանում է Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի թեմի, Վրաստանի ուղղափառ եկեղեցու եւ դեսության միջեւ»<sup>62</sup>.
- Կրոնական հանդուժողականության հարցերի եւ «վիճելի եկեղեցիների խնդիր» նախորդ գործուններից խթանված բացասական ընկալումը ներվրացական հասարակական-բաղադրական բնաւրկումներում.
- Հայկական եւ վրացական ակադեմիական ու եկեղեցական ցջանակների փոխադառն դահանջների ու մեղադրաների

62 Արմանական գործունեության համար առաջարկ կատարելու մասին // www.regnum.ru/news/561893.html, 17.12.2005.

ուրունակվող գալարաձեւ զարգացումը<sup>63</sup>, որը խորացնում է խնդրի իրարամերժ ընկալումը Թիֆլիսում, Երեւանում և Սամցխե-Զավախում:

Սակայն, իհմեր կան հուսալու, որ չնայած բոլոր այդ գործոններին, Վրաստանում կրնական խնդրների արդարացի լուծման հրամայականը վրացական իշխանությունների գործողություններում եւ մոտեցումներում աստիճանաբար ձեռք կրելի ավելի մեծ կարեւորություն եւ առջանահերթություն, ինչը ոչ դակաս չափով կախված է նաև այդ հարցում երկրի հանրության, ոչ-կառավարական եւ հասարակական-բանական (հասկաղես, էքնիկական ու կրնական փոնքամասնությունների շահերը ներկայացնող) կազմակերպությունների, ինչողեւ նաև Վրաստանում խղճի ազատության մքնոլորշի հաստամամք մտահոգված միջազգային կազմակերպությունների եւ ողեսությունների սկզբունքային դիրքորոշումից:

## 2.5. Քաղաքական իրավունքներ և տեղական ինքնակառավարման զարգացում

Էքնիկական փոնքամասնությունների կարգավիճակին ու դաշտամասնությանը վերաբերվող իմանական իրավական նորմերը կարելի է բաժանել երկու խմբի: Մեկ խմբի մեջ կարելի է դասել էքնիկական փոնքամասնությունների կարգավիճակն ամրագրող նորմերը, որոնք ուղղված են սյայլ կարգավիճակի երաշխավորմանն ու խորականության կանխարգելմանը, ինչողեւ նաև փոնքամասնություններին կոնկրետ իրավունքներով ու ազատություններով օժող նորմերը: Մյուս խմբի մեջ կարելի է առանձնացնել տեղական ինքնակառավարման ու բաղադրական իրավունքների ոլորտի նորմերը, որոնք, մի կողմից, բխում են առաջին խմբի նորմերից, իսկ, մյուս կողմից, հանդես են զայխու որդես էքնիկական փոնքամասնությունների դաշտամասնությանը վերաբերվող նորմերի ամրողության առավել իրական ու շուշափելի արգասիք, այսինքն՝ որդես փոնքամասնությունների իրավական կարգավիճակի փաստացի գործողության արդյունք:

Քաղաքական իրավունքներով եւ ազատություններով իրական օժշվածությունը, ինչողեւ նաև իշխանական սարքեր մակարդակներում որոշումների ընդունման գործընթացներում մասնակցությունը կարող է իրողություն դառնալ միայն էքնիկական փոնքամասնության կողմից գոնե նրանց համախումք բնակության վայերում տեղական նշանակության իշխանական լժակների գործուն եւ արդյունավետ ժրադեման դեմքում:

63 Грузинские историки возмущались работами армянских авторов // www.regnum.ru/news/637604.html, 10.05.2006.

Վերջինը ենթադրում է էքնիկական փոնֆրամասնությունների կողմից կոնկրետ սարածիում հանրային գործերի որոշ մասի վարժան ստանձնում: Խոսքը գմում է էքնիկական փոնֆրամասնության սարածվային ինֆնակառավարման մասին, ինչի օգնությամբ այն ներդրեական բաղաբական-իրավական նոր սուբյեկտ է դառնում: Տվյալ դեպքում էքնիկական փոնֆրամասնությանը կվերաբերվեն ոչ թե որդես միայն սեփական իրավունքների եւ ազատությունների անհատական դաշտում հավակնող առանձին անհանձն գումարելիի, այլ որդես համակարգի, բաղաբական-իրավական կոլեկտիվի, իր իրավասություններից բխող լիազորություններով եւ իր կարգավիճակին հարիր կառավարման համար դատասխանաւորությամբ:

Տարածվային ինֆնակառավարման իրավունքը սերտուն կատված է բաղաբական իրավունքում ստեղծելու իրավունքի հետ: Էքնիկական փոնֆրամասնություններին դատական անձանց համար այդ ազատությունը եւաշխավորված է **ԵԱՀԽ-ի Կողենիակենյան փաստարդի** 32.6 կետով, **Ազգային փոնֆրամասնությունների իրավունքների դաշտում մասին 1995թ. ուղանակային կոնվենցիայի** 7-րդ հոդվածով, **Մարդու իրավունքների եւրոպական կոնվենցիայի** 11-րդ հոդվածով եւ **Քաղաքացիական եւ բաղաբական իրավունքների դաշտում միջազգային կոնվենցիայի** 11-րդ հոդվածով: **ԵԱՀԽ-ի Հելսինյան համաձայնագրի** 24-րդ կետում նշվում է մասնակից դեւորյունների դարտավորություն «առահովելու ազգային փոնֆրամասնություններին դատական անձանց կողմից անհատական հիմունքներով կամ այլ անձանց հետ միասին մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների ազատականացումը, ներառյալ լիարժեք կերպով, ըստ յուրաքանչյուր դեւորյան կողմից որոշումների ընդունման ժողովրդավարական ընթացակարգի, սեփական երկրների բաղաբական, սնտեսական, սոցիալական եւ մշակութային կյանքին մասնակցությունը, այդ թիվում՝ ազգային, սարածաշրջանային եւ տեղական մակարդակներում դեկավար եւ խորհրդավական նարմնների աշխատանքներում, մասնավորապես՝ բաղաբական կուսակցությունների եւ միավորումների ուղանակներում ժողովրդավարական մասնակցության հիմունքներով»:

Դրանով մենք մոտենում ենք **Վրաստանի հասարակական-բաղաբական կյանքին էքնիկական փոնֆրամասնությունների համարկման այնուիսի կարեռագույն գործոնին եւ նախադաշտանին, ինչուիսին փոնֆրամասնությունների կամ կոնկրետ ուղաների բնակչության շահերը ներկայացնող բաղաբական կուսակցությունների գրանցումը եւ ընտրություններին մասնակցությունն է:** Վրացական բաղաբական փոնֆրամասնությունների բաղաբական բացասաբար է վերաբերվում էքնիկական փոնֆրամասնությունների բաղաբական

կուսակցությունների գրանցմանը: Դրանց ստեղծումն ընկալվում է որպես սարածային կամ հոգեբանական անջատողականությանն ուղղված գոյլ<sup>64</sup>: Սակայն այն դայմաններում, երբ էթնիկական փոփոխականությունները մշտադիմ են վրացական հասարակությունից դուրս, երբ նրանց հաճար բաղադրական առողմով այժմեական եւ դահաճօջած չէ զործող համավրացական բաղադրական կուսակցություններից եւ ոչ մեկը, սարածային բաղադրական կուսակցությունների ու շարժումների (ինչպես, օրինակ Զավախիք «Վիրք») գրանցման արգելվող գրկում է տեղական բնակչությանը որոշումների ընդունման գործընթացներին եւ իր երկրի կառավարմանը մասնակցելու իր սահմանադրական իրավունքի իրականացման հնարավորությունից: Ինչպես արդարացիորեն նշում է զերմանացի փորձագետ Ստեփան Օքերը «Առաջ որդես «որոշակի» խումը կազմակերպվելու և սեփական անկախ կազմակերպության, ներառյալ հասուկ կուսակցության միջոցով, սեփական խմբային մասնավոր շահերն առաջ սանելու հնարավորության, փոփոխականությունների համարկումը կմնա տեսլական»<sup>65</sup>:

*Հրասանի ներկա բաղադրական դաշտի այլ վասնավոր անսպառնակմ է այն փաստը, որ ներկա պայմաններում էթնիկական կուսակցությունների արգելվող հավելթացման է այն իրավիճակը, երբ էթնիկական փոփոխականությունների ներկայացուցիչները միայն անվանապես ու չեն կանոնադրական ինչը հիմք է ստեղծում Սամցիխ-Զավախիքի և Քվեմն-Քարթլիի սարսածաշրջաններում բյուրոկրատիայի, ժողովրդականական ինսիսուսների թերզարգացվածության, կոռումպացվածության եւ կանայնության երևույթների արմատավորման համար:*

Եթե իրենց համախումբ բնակության վայրերում էթնիկական փոփոխականությունների շահերը ներկայացնող բաղադրական ուժերը դաշտում չեն դրանով չեներառվեն բաղադրակիրք բաղադրական գործընթացների մեջ, մասնակցելով տեղական եւ խորհրդարանային ընտրություններին, առաջ դա կամրագի ոչ դաշտում բաղադրական բաղադրական շահերում ստեղծման բավականին բացասական դրակիլական, որներ գնալով

64 Нодда Г. Полиэтничность Грузии: факт, отношение к нему и политическая стратегия. С.86.

65 Oeter S. Minderheiten im Institutionellen Staatsaufbau // Das Minderheitenrecht Europäischer Staaten. Teil 2, Berlin 1994. P.496. Սեղմերում ըստ Frowein J.A., Bank R. The Participation of Minorities in Decision-Making Processes // Expert Study Submitted on Request of the Committee of Experts on Issue Relating to the Protection of National Minorities (DH-MIN) of the Council of Europe by the Max-Planck-Institute for Comparative Public Law and International Law, Heidelberg / Secretariat of the Framework Convention for the Protection of National Minorities, Council of Europe, DH-MIN (2000) 1, November 2000. P.4.

արմատականանալու են: Զրկված լինելով բնականոն բաղաբական դայլարին մասնակցելու եւ բնակչության որոշակի հատվածի համար հրատապ բաղաբական դայլարին առաջ բաւելու հնարավորությունից՝ դրանք սփորված կլինեն (Եթ կսանան դրա համար բոլոր բարոյական հիմքերը) բաղաբական դայլար տանելու «փողոցում»՝ առանց սահմանափակվելու սահմանադրական եւ ինսիստոցինալ տրամակներով: Բնական է, որ, օրինակ, Զավախում դա կհանգեցնի միայն բացասական ներուժի կուտակմանը, ընդ որում, դա բացաձակորեն կատված չի լինի տարածատրանում որեւէ «իրենենիսիսական» կամ «ազգայնական» տրամադրությունների աճի հետ: Ինչդես խոսուվանում է Գիա Նոդիան՝ չնայած այն բանին, որ Վրաստանում էքնիկական փոնրամասնությունները հիմնականում բնակվում են իրենց «էքնիկական հայրենիքներին» կից տարածներում, «խնդիրը էքնիկական անջատողականության եւ իրենենիսիզմի մեջ չէ»: «Թեեւ վրացիներից ոմանք կասկածում են, որ փոնրամասնությունների համայնքների ներսում գոյություն ունեն բանված անջատողական ձգումներ, վերջիններս չեն արտահայտել որեւէ անջատողական դասանցներ կամ կազմակերպել իրենենիսիսական տարծումներ: Մահոնգվելու հիմնական խնդիրը այդ փոնրամասնությունների սոցիալ-բաղաբական համարկման դական է եւ Վրաստանի զարգացող ժողովրդականական հաստատություններին նրանց մասնակցության ցածր մակարդակը», - եզրափակում է փորձագիրը<sup>66</sup>:

Ինչեւէ, վերջին ժամանակներում էքնիկական եւ տարածատրանային հատկանիւով բաղաբական կուսակցությունների ստեղծման եւ գրանցման հարցի նկատմամբ մի շարք անվանի վրացական փորձագենների մուտքումների փոփոխություն է նկատվում: Գիտակցվում է, որ Վրաստանի բնակչության զգալի մասը (ոչ դակաս՝ բան 16-17 %-ը) գործող բաղաբական կուսակցությունները արդեն վաղուց չի դիտում որոյն երկրի բաղաբական կյանքին մասնակցելու մեխանիզմ: Միեւնույն ժամանակ, որու նախկին սոցիալիստական երկրների, օրինակ Բուլղարիայի, փորձը «ցոյց է տալիս, որ էքնիկական կուսակցությունների ստեղծումը չի հանգեցնում աշխարհի վերջին եւ անխուսափելիներն չի տանում առանձին հմբերի անջատողականությանը»<sup>67</sup>: Ընդ որում, վրացական փորձագենները հիմնավոր կերպով դնդում են, որ Վրաստանում ընտրությունների ժամանակ գործող յոթուկոսանոց ժեմը լուրջ խնդիրներ է ստեղծում խորհրդարանում էքնիկական կուսակցությունների ներկայության համար, անգամ ըստ օրենի նրանց գրանցման դարավայում: Դա

66 Nodia G., Scholtbach A.P. The Political Landscape of Georgia. Political Parties: Achievement, Challenges and Prospects. P.72.

67 Процесс конституционно-политической реформы в Грузии, в Армении и в Азербайджане: политическая элита и голос народа. IDEA & CIPDD: Тбилиси, 2005. С.241-242.

արդեն անհրաժեշտություն է ստեղծում ընտրական ժեմք նվազեցնելու մինչեւ 5%-ի, որը ես զի Վրաստանի խուռագրությունների ներկայացողությունը կարողանան իրադես ներկայացված լինել երկրի խորհրդարանում:

Ենչում ենում են եվրոպական փորձագետները, քազմաէքնիկ երկրներում էթնիկական փորձամասնությունները ներկայացնող կուսակցությունների կազմակերպման, ֆինանսավորման եւ ընտրական գործընթացներում արդյունավետ կերպով մասնակցության համար անհրաժեշտ է սահմանել հասուկ արտնություններ, այդ բվում հետևյալ ուղղություններով.

- Խորհրդարան մուտք գործելու համար ընտրական ժեմք նվազեցում,
- էթնիկական փորձամասնությունների ներկայացողությունների համար խորհրդարանում տեղերի վերաբահում,
- կուսակցության գրանցման համար վլորումի նվազեցում,
- ընտրատարածքների նյութատարություն սահմանագծում, մասնավորապես, մեծամասնական բվեարկության դեմքում,
- փորձամասնությունների կուսակցություններին արտնոյալ դայնաներով դրամաշնորհների համարություն<sup>68</sup>:

*Համապատասխան պետական մոտեցման բացակայության պայմաններում, երբ բաղադրիչների հասարակության ինսիսուսներ չեն չենալու վեց սպահովվում օրենքի գերակայությունը, էթնիկական փորձամասնությունների իրավունքներն արտսիսայուղ բաղադրիչների համար կարելի բացառել նաև այն, որ բարենպատ դայնաների առկայության դեմքում նման կուսակցություններն այնողիս արդյունավետ դերակատարություն կարող են ունենալ էթնիկական փորձամասնությունների Վրաստանի հասարակական-քաղաքական կյանքին նրանց համարկման համար: Ընդ որում, չի կարելի բացառել նաև այն, որ բարենպատ դայնաների առկայության դեմքում նման կուսակցություններն այնողիս արդյունավետ դերակատարություն կարող են ունենալ էթնիկական փորձամասնությունների Վրաստանի հասարակական-քաղաքական կյանքին համարկման գործում եւ դառնալ երկրի «քաղաքական դաշտի» այնողիս բնական իդենտիվականից, որ հետաքայում որոշումների ընդունման բաղաքական գործընթացում փորձամասնությունների մասնակցության խնդիրների լուծման նկատմամբ դետական հանդուժողական մոտեցման հաջող օրինակ կծառայեն նաև այլ երկների համար: Սյուս կողմից, նման կուսակցությունների ստեղծման նախաձեռնություններն անկում կապրեն, եթե էթնիկական փորձամասնություններն զգան իրենց կարգավիճակի օրենսդրական դատավանականության իրողությունը, այդ կարգավիճակի առահովման ներդետական մեխանիզմների գործուն լինելը: Այդ դեմքում, էթնիկական փորձամասնությունների կուսակցությունները կսկսեն վերածվել*

հասարակական միավորումների, որոնք ձեռավորված բաղաբացիական հասարակության մեջ օգնում են բննարկելու իրենց խնդիրները և իրավական ժողովրդավարական դետուրյան համար էթնիկական փորբամասնությունների իրավունքների եւ ազատությունների դաշտանության ոլորտում տրող իրավիճակի ցուցիչներ են հանդիսանում:

Սակայն, Վրաստանի բաղաբացիական դաշտի իրողություններն ու էթնիկական փորբամասնությունների ոչ բավարար իրավական աղահովվածությունն ու դաշտանավածությունը վկայում են, որ բազմազգ դետուրյան համար առավել օրինաչափ այդ կացությանը հասնելու համար դեռ երկար ժամանակ է դահանջվելու: Բնակչության վեցշին մարդահամարների միջեւ ընկած 13 տարիների ընթացքում, էթնիկական փորբամասնությունների տեսակարա կշռը նվազել է գրեթե երկու անգամ՝ բնակչության 30%-ից իշխելով մինչեւ 16%-ի: Խորհրդարանում դաշտամափորների միայն 6%-ն են ներկայացնում էթնիկական փորբամասնություններին: Թթվիխսիի սակրեպուլոյում (բաղաբային խորհուրդ) դրանք ընդհանրաբեր բացակայում են: Փորբամասնությունների համախումք բնակության տարածաշրջանների տեղական օրենսդիր մարմիններում, լավագույն դեմքում, մեկ-երկու դաշտամավոր է ընդգրկված<sup>69</sup>: Վրաստանի 1999թ. գումարման խորհրդարանում էթնիկական փորբամասնություններից էր 14 դաշտամավոր (նոյն 6%-ը), ընդ որում, նրանք բոլորն եւ «Վրաստանի բաղաբացիների միություն» իշխող կուսակցությունից էին, եւ խորհրդարանական կյանքուն նրանց իրական մասնակցության մակարդակը նվազագույն էր<sup>70</sup>: Նոյն իրավիճակը դահողանվել է նաև 2003-ի «Վարդերի հեղափոխությունից» հետո: Ինչողեւ նույն են որու վրացի փորձագետներ՝ «մինչ այժմ վաշչական ու իրավադական կառույցներում իրականացված բարեփոխումների արդյունքում փորբամասնությունների ներկայացնեցիչների թիվը, հակառակ սրբառների, եւ ավելի է նվազել, ինչը հաստատում է այն միտուները, որոնք վկայում են, որ էթնիկական փորբամասնությունների մեծամասնության համար հեղինակավոր սոցիալական որմնախորհեր փակ են»<sup>71</sup>:

Վրաստանի ընթարկան ընթացակարգը նոյնուես առանձնանում է էթնիկական փորբամասնությունների նկատմամբ իր ոչ ժողովրդավարական բնույրով: Այդ դաշտառով, ինչողեւ եւ էթնիկական փորբամասնությունների արդյունքում

69 გვენაძე Մ. Բიլიնგվալիզմ – языковая политика Грузии? // Многонациональная Грузия, № 2 (февраль), 2005.

70 Հօձա Շ. Полиэтничность Грузии: факт, отношение к нему и политическая стратегия. С.65.

71 Ածեսիվili Ա. Для представителей этнических меньшинств престижные социальные ниши закрыты // Многонациональная Грузия, № 2 (февраль), 2005.

դաշտանության բոլոր այլ ոլորտներում, անհրաժեշտ է միջազգային իրավական նորմերի ավելի խորը եւ իրական կիրառում։ Եվրոպական իրավական չափանիշները մասնաւում են դեսուրյունների դարտավորությունները՝ երաշխավորել էքսիլիական փոփոխականություններին դատկանող անձանց դեսական կառավարմանը մասնակցելու իրավունքը՝ ներառյալ ձայնի եւ ոչ խորական հիմքով ընտրվի դատուններում թեկնածություն դնելու իրավունքը։ **Ազգային փոփոխականությունների իրավունքների դաշտանության մասին 1995թ. տօքանակային կոնվենցիայի** 16-րդ հոդվածում հրահանգվում է հետևյալը. «Կողմերը դեմք է ձեռնողան մնան այնպիսի միջոցներից, որոնք փոխում են բնակչության կառուցվածքային կազմը այն սարածներում, որոնք բնակեցված են ազգային փոփոխականություններին դատկանող անձանցով եւ նղատակ ունեն սահմանափակել սույն տօքանակային Կոնվենցիայի սկզբունքներից բխող իրավունքները եւ ազատությունները»։ **ԵԱՀԿ-ի Լուսի 1999թ. հանձնարարականներում** նշվում է, որ «փոփոխականությունների համախումք բնակության վայրերում իրենց բավարար ներկայացչությունը կարող է առահովել միամանդաւային տօքանների ստեղծման միջոցով»։ Փոփոխականությունների ներկայացուցչությանը կարող են նղատել նաև համաշխական ընտրական համակարգերը (կետ 9):

Մինչեւ 2001թ. Տեղական ինֆնակառավարման մարմինների մասին օրենքում փոփոխություններ կատարելը, տեղական ինֆնակառավարման մարմիններ թեկնածություն առաջարելու հնարավոր էր միայն կուսակցական ցուցակներով, ինչը բույլ չէր տախս համախումք բնակվող էքսիլիական փոփոխականություններին տեղերում առաջարելու իրենց թեկնածուներին։ Սակայն, նոր խմբագրմանը օրենքը, վերացնելով այդ բացը, սահմանեց ընտրական տօքանների ձեռավորնան այնպիսի համակարգ, ըստ որի, օրինակ, Ասմալիաաքի տօքանում յուրաքանչյուր վրացական բնակավայրն ունի մեկ սակրեպուլ (գյուղական խորհուրդ), նույնան՝ որին 4-5 հայաբնակ զյուղեր։ Տվյալ անհամաշխափությունն ազդրում է տեղական կառավարման իրական իրավունքների վրա, բանի որ տօքանային մակարդակի կառավարման մարմինը (տօքաչակազմն) ստեղծվում է բոլոր զյուղական սակրեպուլների նախագահներից։ Այսիսով, տեղի է ունենում տօքանային մակարդակում հայ դատավագործների թվի արհեստական նվազում<sup>72</sup>։ Նման դրակիլական հակասում է համընդիանու միջազգային եւ եվրոպական նորմերին։

Հնդիակառավակը, բոլոր եվրոպական ժողովրդավարական երկներում

72 Տե՛ս մանրամասն՝ *Минасян С.* Социально-экономическая и политическая ситуация в Джавахахе на современном этапе (на арм. языке) // 21-й век (информационно-аналитический журнал фонда «Нораванк»), №1, 2005.

դիմում է ուղարկի հակառակ մոտեցում, որի նորագու է ընտրական գործընթացի համաղատասխան դայմանեների սեղման միջոցով օժանդակել փոքրամասնությունների տեղական ինֆնակառավարման մարմիններում ավելի լայն մասնակցությանը: Օրինակ, ԵԱՀԿ-ի Ժողովրդավարական ինսիստուտների եւ մարդու իրավունքների բյուրոն ընտրություններին վերաբերվող **Լուսնի հանձնարարականների** հիման վրա մշակել է սեփական գործնական հանձնարարականներ, որոնցում հսակորեն նշվում է. «Ընտրական տրամադրությունը սահմանագծման հարցում հիմնական սկզբունքն այն է, որ այդ սահմանագծումը դեմք է իրականացվի արդարացի կերպով եւ չդեմք է ունենա բացասական ազդեցություն, որը կանգնեցնի փոքրամասնության որեւէ կոսակցության կամ խմբավորման ներկայացուցչության նվազմանը: Որու դեմքներում ընտրական տրամադրությունը է սահմանագծվեն այնպես, որդեսզի փոքրամասնությունների խմբերի համար աղահովվի առավել ներկայացուցչություն»<sup>73</sup>:

Տվյալ օրինակից երեսում է, որ վրասական իշխանությունները, մի կողմից՝ օգտվելով ներին օրենսդրության բացըողումներից եւ եվրոպական ժողովրդավարական նորմերին անհամաղատասխանություններից, եւ մյուս կողմից՝ կանայական կերպով մեկնարանելով գործող նորմերը, իրականացնում են խսրական բարեկալանություն երկի երնիկական փոքրամասնությունների ընտրական իրավունքների նկատմամբ: **Տարածաւրանային եւ փոքրամասնությունների լեզուների 1992թ. եվրոպական խարժանի դարտավորեցնում** է դեռություններին հարգելու յուրաքանչյուր տարածաւրանային լեզվի կամ փոքրամասնության լեզվի աշխարհագրական տրամադրությունը, որդեսզի «գոյություն ունեցող կամ նոր վաշշական բաժանումը չստեղծի խոչընդոտներ սվյալ լեզվի տարածման համար» (մաս 1, հոդված 7): **Տեղական ինֆնակառավարման 1985թ. եվրոպական խարժայի «Տեղական ինֆնակառավարման իրականացման տարածելու սահմանների դաշտավանություն»** խորագիրը կրող 5-րդ հոդվածում նշվում է, որ «տեղական ինֆնակառավարման իրականացման տարածելու սահմանների փոփոխությունը թույլատրելի է միայն համաղատասխան տարածելու բնակչության կարծիքը հաւաքի առնելու դեմքում, այդ բվում հանրավելի անցկացման միջոցով այնտեղ, որտեղ դա թոյլ է տրվում օրենքով»: Թեև հանրավելի իրականացումը կախվածության մեջ է դրվում ներին օրենսդրությունից, այնուամենայնիվ, հոդվածի իմաստը կայանում է տեղական բնակչության կարծիքը հաւաքի առնելու դարտավորության մեջ:

73 Рекомендации, способствующие участию национальных меньшинств в избирательном процессе. Бюро по демократическим институтам и правам человека ОБСЕ, Варшава, Январь 2001. С.32.

Տեղական ինքնակառավարման հարցում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ երկի ղետական-տարածային կառուցվածքը որում չէ սահմանադրական նորմերով: 1995թ. սահմանադրությունը միայն ձեւակերպել է դրա հնարավոր որոշման սկզբունքը. «Վրաստանի ղետական-տարածային կառուցվածքը կսահմանվի սահմանադրական օրենքով՝ լիազորությունների սահմանազաման սկզբունքի հիման վրա, երկի ողջ տարածում Վրաստանի իրավասությունների ամրողական վերականգնումից հետո» (մաս 3, հոդված 2): Կարելի է ենթադրել, որ երկի ղետական կառուցվածքի աղաքա ձեր կներառի ինչողես ունիտար, այդպես էլ դասնային տարրեր, ընդ որում դասնային սկզբունքով լիազորությունների սահմանազատումը կիրառվելու է այն տարածուների նկատմամբ, որոնք այսօր, փաստուն, չեն վերահսկվում կենտրոնական իշխանությունների կողմից: Կենտրոնական եւ տեղական իշխանությունների լիազորությունների սահմանազաման կարեւորությունը տեղական ինքնակառավարման արդյունավետության համար մատնանում է **Տեղական ինքնակառավարման 1985թ. եւլողական խարժիան**. «Հանրային լիազորությունների իրականացումը, որուես օրենք, ղետք է առավելադես դրվի բաղաքացիներին առավել մոտ կանգնած իշխանության մարմինների վրա: Ուեւէ գործառույթի փոխանցումը որեւէ իշխանության մարմնի ղետք է իրականացվի հաւելի կոնկրետ խնդրի ծավալն ու բնույթը, ինչողես նաև արդյունավետության եւ սնէսման դահանջները» (մաս 3, հոդված 4):

Դա են մատնանում նաև **Լունդի 1999թ. հանձնարարականները**. «Եվլողայում եւ նրանից դրւու կուտակված փորձը մատնանում է օրենսդիր եւ գործադիր իշխանությունների որու լիազորությունների կենտրոնական մակարդակից տօջանային մակարդակ փոխանցման վրա, ինչը չղետք է սահմանափակվի ղետական աղաքատի հասարակ աղակենտրոնացմամբ եւ նրա գործառույթները տօջանային կամ տեղական ստորաբաժնումներին փոխանցմամբ», եւ այնուհետև. «Սուրաբիդավորման սկզբունքից ելնելով՝ ղետությունները ղետք է դրականորեն ընկալեն լիազորությունների տարածային դասվիրակնան հնարավորությունը, ներառյալ տեղական ինքնակառավարման կոնկրետ գործառույթները, հասկադես այն դեմքերում, երբ դա ընդլայնում է իրենց վերաբերվող հարցերն ինքնուրույն կերպով լուծելու փորձանասնությունների հնարավորությունները» (կետ 19):

Սակայն չղետք է մոռանալ, որ կենտրոնի եւ տօջանների միջև լիազորությունների բաշխման հարցերը չղետք է կրտսեն գերակշռող բնակչության էքսիլիական շահերից: Տեղական, տօջանային կամ, հասկադես, ինքնակառավարման վարչական մարմինները ղետք է ձեւավորվեն՝ հաւել առնելով կոնկրետ էքսիլիական փորձանասնության դասմական ու տարածային

յուրահասկությունները (**Լունդի հաճճարարականներ**, 20-րդ կես): Այսինքն, այդ կառույցների ձեւավորման գործընթացում չղետք է խախտվեն էրթիկական փորձամասնության, որը հատուկ կերպով դաշտանված լինելու համար ունի տարածված եւ դատակական առարկայական հիմքեր, իրավունքներն ու ազատությունները: Միայն ժողովրդավարական եղանակով կազմակութած տարածվային ինքնակառավարման կառույցները կարող են արդյունավետ կերպով իրականացնել իրենց վերաբահված լիազորությունները:

**Էթնիկական փորձամասնության իննակառավարումը, որը կարող է ունենալ տարածվային կամ ոչ տարածվային բնույթ, փորձամասնություններին պատկանող անշանց իրավունքների ու ազատությունների իրական պաշտպանվածության եւ ապահովման կարտուր գործիք է:**

Եթելով հետեւյալ կարենրազույն գործոններից՝ թե բաղադրական, եւ թե իրավական առումով, փորձամասնության ընդլայնված ինքնակառավարման իրավունքով օժտելը, դետք է որ գրավիչ լինի այն դեսության համար, որտեղ նրանի բնակվում են.

- Իրական ինքնակառավարման առկայությունն ավելի աղահով կերպով է երաշխավորում փորձամասնությունների համախումբ բնակության վայերում իրենքնիւտական ու անջատողական տրամադրությունների առաջացումից՝ վերացնելով դեմության եւ(կամ) ժիղոսակիր էրնոսի կողմից բռնի ուժացման կամ էրթիկական մարդարություններին ենթարկվելու մասհորդությունները, նվազեցնելով փորձամասնությունների կողմից խսդիրների բաղադրական ու էրնոկենտրոն ընկալման եւ բոլացնելով իրենց դահանջների արմատականացման վասնգները.
- Ընդլայնված ինքնակառավարումը ավելի լայն հնարավորություններ է տալիս փորձամասնությունների ներկայացուցիչներին առավել արդյունավետ եւ իրենց շահերին ու դահանջնունքներին համադատասխանող տեղական իշխանություններ ստեղծելու համար: Դա բույլ կտա բարելավել սոցիալ-տնտեսական դայմանները նրանց համախումբ բնակության վայերում վերացնելով հասարակության մեջ բացասական տրամադրությունների կուտակման ամենավտանգավոր ազրակներից մեջը.
- Իրական ինքնակառավարման առկայությունը, էրթիկական փորձամասնությունների հիմնարար իրավունքների երաշխավորվածությունը եւ բաղադրական որոշումների ընդունման գործընթացում ներգրավվածությունը փորձամասնությանը բաղադրական միասնականության զարգմունք է ներարկում եւ դրանով խրանում է դեսության հասարակական-բաղադրական կյանքին փորձամասնության

ակտիվ համարկումը.

Ընդպայմված ինքնակառավարումը փոփռամասնություններին հնարավորություն է տալիս դահղանելու իրենց մշակութային ու լեզվական ինքնուրույնությունը, ինչը կարեւոր ավանդ է դեռության ընդհանուր մշակութային բազմազանության մեջ, եւ, միաժամանակ, խրան՝ առանձին անհաների ստեղծագործական եւ մասնագիտական զարգացման համար, քանի որ տալիս է նրանց ինքնադրսեւորման ու անհարական նորագույն համար համարակական նշանակությունը գիտակցելու այլընտրանիային հնարավորություններ:

Առկա միջազգային ակտերում էքսիլիական փոփռամասնությունների ընդդանված ինքնակառավարման իրավունքի աղահովման հարցում նկատվում է համալիր մոտեցում: Ի՞րա մեջ ներառում են.

38 Dafflon D. Managing Ethnic Diversity in Javakheti: Two European Models of Multilingual Tertiary Education. P.6.

39 Նշվ. աշխ., էջ 7.

բննություններին, այն անցան միայն երկուար (sic!): Թեև Կրթության նախարարությունը 2006-ին մտադիր է սահմանել ավելի դյուրին բննություններ, Զավախիքի հայերի համար համալսարան մուտք մնում է անորոշ: Յանկացած զիջումներ ոչ Վրացախոսներին, եթե դրանք չեն ուղեկցվելու ավելի լայնածավալ միջոցառումներով, անբավարա են հայ երիտասարդներին երկրից արտագրելու որոշումից հետ դահելու համար»<sup>40</sup>:

Ինչպես նույն է զեկույցի հեղինակը՝ Վրաստանի բանագույն կրթության համակարգին երնիկական փոնքամասնությունների ներկայացուցիչներին ներգրավելու եւ համարկելու համար կենսականորեն անհրաժեշտ է կրտառել այլ մուտքումներ եւ իրականացնել այլ խաղաքականություն: Ելեկով դրանից՝ հեղինակը վերլուծում է Մակեդոնիայում եւ Ռումինիայում երկլեզու ԲՈՒՀ-երի ստեղծման եւ գրձունելության փորձը եւ առաջարկում է բավականին ռացիոնալ լուծումներ Զավախիքի դայմաններուն կրտառելու համար:

Հեղինակը սալիս է հետեւյալ հանձնարարականները Զավախիքում բանագույն ուսումնական հաստատությունների ստեղծման եւ զարգացման համար.

- Հարավ-արևելյան եւլուսական եւ Babes-Bolyai համալսարանների օրինակով բազմալեզու ուսումնական ծրագրերի սահմանումը փոնքամասնություններով բնակչության Վրաստանի շրջանների համար: Նման ծրագրերը կարող են կառուցվել յուրաքանչյուր ֆակուլտետի ուսումնական դլաններուն սարքեր լեզուների օգազորումն իհման վրա,
- Դասախոսական կազմի եւ համալսարանի կառավարման մարմինների ձեւավորում երնիկական համաշափ ներկայացության սկզբունքով,
- Ընդունելության համազգային բննությունների, որոնք (եթե անզամ ոչ միտունավոր) երնիկական փոնքամասնություններին դաշտանող ուսանողների համար խորական են, տեղայնացում: Քանի որ փոնքամասնությունների լեզուներով դրանցական կրթություն բույլ է տրված, բավականին նոյանակահարմար կլինի այդ տջանավարժների բանագույն կրթություն հասանելիությունն աղահովելու համար հասուն միջոցներ նախատեսել:

Հետաքրություն է ներկայցնում ՓԽԵԿ-ի նաեւ մեկ այլ զեկույց, որը նվիրված է երնիկական փոնքամասնությունների լեզուների կարգավիճակին եւ Վրաստանում եվրոպական երկներում սահմանված մոդելների

40 Dafflon D. Managing Ethnic Diversity in Javakheti: Two European Models of Multilingual Tertiary Education. P.7.

41 Նոյն ժեղում:

կիրառելիությանը<sup>42</sup>: Զեկույցի հեղինակը Զոնաբան Ուիթլին է: Հենվելով Ռումինիայի եւ Խորվաթիայի փորձի վրա՝ հեղինակը ներկայացնում է Սամցխե- Զավախսի տարածաշանում լեզվական խնդրի լուծման իր մոտեցումները: Ինչողքու նույն է Զ. Ուիթլին «Առանցքային հարցադրումը, որին կոչված է դատասխանելու սյալ գելույցը, այն է, թե արդյո՞ք Վրաստաճի տարածում խոսակցական այլ լեզուները, հասկաղես՝ հայերենն ու ադրեզաներենը, այս կամ այլ միջոցով կարող են ձանաշվել՝ առանց նրանց դաշտական դետական լեզվի լիարժեք կարգավիճակ ընորհելու: Այս հարցադրումը հասկաղես տեղին է Փոնրամասնուրյունների իրավունքների դաշտանուրյան մասին տրամադրության կոնվենցիայի վավերացման (2005թ. դեկտեմբերի 22-ին) եւ Տարածաշանային ու փոնրամասնուրյունների լեզուների եվրոպական խարժայի սղասղող վավերացման... լրիսի ներքո»<sup>43</sup>:

Ինչողքու ընդգծում է հեղինակը՝ գելույցի նոյատակն է վելուծել, թե ինչողեւ է գոյություն ունեցող սատու վիճն, որով վրացերենը միակ դաշտական լեզուն է Արխազիայից բացի Վրաստաճի անքորդ տարածում, ազդում Զավախսի դատարանների, դետական կառավարման տեղական մարմինների, լրատվամիջոցների եւ կրթական համակարգի գործունեության վրա: Արդյո՞ք ներկա իրավիճակը կայուն է: Խնդիրը նրանում է, որ գոնե ներկա դահին, Զավախսում դետական մարմինների կողմից կիրառվող լեզվի հարցը կարգավորվում է ոչ դաշտական դայմանավորվածուրյունների միջոցով, այլ ոչ թե օրենքներով: Պահղանել սատու վիճն նշանակում է ավելի արմատավորել այս ոչ դաշտական դրակիլական, ինչը կարող է խոչընդոտել, այլ ոչ թե նոյաստել համարկմանը: «Զեկույցում այնուհետև բննարկվում է, թե արդյո՞ք հնարավոր է ինչ-որ փոփոխուրյուններ կատարել օրենսդրության մեջ, որուսի կարձ ժամանակամիջոցում մեղմացվեն այդ անցանկալի հետեւանները՝ կամ դահղանելով վրացերենի, որուս միակ վարչական լեզվի, կարգավիճակը կառավարման բոլոր մակարդակներում, կամ, գուցե, փոնրամասնուրյունների լեզուներին, նրանց համախումք բնակվության տրամադրում (օրինակ՝ Ասալվալանում ու Նինոծմինդայում), որուակի վարչական կարգավիճակ ընորհելով»<sup>44</sup>: Դրանով, գելույցում բննարկվում է, թե ինչողիս դրական ներդրություն կարող է ունենալ տեղական ինքնակառավարման, դատական համակարգի, ինչողքու նաև դետական հակասարմագրում ունեցող ուսումնական հաստատուրյունների զարգացման վրա Ասալվալաֆի եւ Նինոծմինդայի

42 Wheatley J. The Status of Minority Languages in Georgia and the Relevance of Models from Other European States. ECMI Working Paper #26, Flensburg, March 2006.

43 Նույն աշխ., էջ 5:

44 Նույն աշխ., էջ 6:

Եղանակում հայերնին իրավական կարգավիճակը ընորհելու փաստը:

Հեղմակը նշում է, որ այն իրողությունը, երբ վրացերենին լիսկատար չշիրապիտելով, Զավախի տեղական իշխանության մասնինները սխալված են դատավարությունն ու գործավարությունը տանել միմիայն վրացերենով, և այն կոռուպցիայի զանգվածային աճի պատճառը է դատնում, եւ, մյուս կողմից, մարդու հիմնարար իրավունքների ուղղակի իսպանում է ու հակասում է բոլոր հիմնարար միջազգային-իրավական նորմերին<sup>45</sup>:

Այս կազմակերպության այլ նյութերից ու գեկույցներից որոշակի հետարքություն կարող է ներկայացնել նաև Զավախիում սոցիալ-սեսսական ներկա իրավիճակի մանրամասն վերլուծությանը նվիրված Ախալքալաքում ECMI գրասենյակի նախկին աշխատակից Մայթ Հերոնֆրի ուսումնասիրությունը<sup>46</sup>:

### **3.7. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն**

Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն Եղանակներում 2002թ. սկզբներին դատարանը է «Արաստանի բախումնայնության զնահատում» խորագիրը կրող գեկույցը: Զեկույցը հետարքություն է ներկայացնում այն առումով, որ Զավախի բախումնային ներուժը վերլուծության է ենթակլում ոչ միայն մարդու եւ երեխական փոփանականությունների իրավունքների դաշտանության, այլ նաև այդ կազմակերպության կողմից ամբողջ Վրաստանի մաստարով տարեր սոցիալ-սեսսական ծրագրերի իրականացման այժմեականության ու ռիսկայնության մակարդակի զնահատման տեսանկյունից: Դրանից ելեւլով՝ «Սցենարներ եւ օրինակներ. բախումնային ներուժն աղազայում» գլխում, ի թիվս Զվեն Քարլիի, Աջարիայի եւ Սամեգրելոյի, առանձին բաժին է նվիրված նաև Զավախին:

Զեկույցում, 2002թ. սկզբի դրույքամբ, Զավախիում ռիսլի մակարդակը զնահասվում էր որպես «միջին», իսկ ռիսլի կարգավիճակը՝ «անդ»: Զեկույցում նաև նշվում է, որ «Միջազգային համուրայունը Զավախիը հաճախ դիմարկում է որդես անջառողական ներուժով օժշված Վրաստանի հաջորդ տարածաշրջան»<sup>47</sup>: Այնուհետև տրվում են բաղադրական եւ տնտեսական իրավիճակի ընդիանուր զնահատականներ:

Ծա ավելի հետարքիր է Զավախիում սիրող իրավիճակի համադաշերը

45 Նով. աշխ., էջ 12:

46 Hertoft M. Javakheti: The Temperature 2005. ECMI Georgia Occasional Paper #1, Tbilisi, April 2006.

47 Robertson L., Phillips A., Kay B., Farrell W.B. Georgia Conflict Assessment. Submitted to Cate Johnson USAID/Tbilisi. Burlington, Vermont. 23 January 2002. P.39.

միջազգային դռնոր կազմակերպությունների ներգրավվածության եւ ՈԿԿ-ների գարզացածության տեսանկյունից. «Միջազգային կազմակերպությունների ու դռնոր-կազմակերպությունների գործունեությունը Սամցխե-Զավախսում խփս սահմանափակ բնույթ ունի: Տարածաշանում գործող ամենախոռոշ դռնոր-կազմակերպություններն են ԱՄՆ միջազգային գարզացման գործակալությունը, ԱՄՆ զյուղանետեսության դեղարտամենտը, Մեծ Բրիտանիայի միջազգային գարզացման գործակալությունը, Միջրացիայի միջազգային կազմակերպությունը եւ ԱՄԿ-ի կառույցները (ՅՈՒՆԻՄԵՖ, ԱՄԿ-ի համաշխարհային դարենային ծրագիր, ԱՄԿ-ի հումանիտար հարցերի համարման վարչություն, ԱՄԿ-ի կամավորների ծրագիր): Նրանց գործունեությունը հիմնականում կենտրոնացած է մարդասիրական օգնության, ՈԿԿ-ների հզորացման, համայնքների գարզացման, կրթության, կառավարման, եկամուտների մակարդակի բարձրացման, ենթակառույցների վերանորոգման եւ տեղեկատվական ոլորտներում: ... Զավախսի ՈԿԿ-ները սակավաթիվ են եւ կախված միջազգային օժանդակությունից: ՈԿԿ-ները բացահայտուեն ընկալվում են որոշես ցածր աշխատավաճից բացի հավելյալ եկամուտ ստանալու միջոց, բանի որ որոշ համայնքների ՈԿԿ-ների դեկավարները միաժամանակ դաշտուներ են զրադեցնում դեսական կառավարման բյուրոկրատական մարմիններում»<sup>48</sup>:

Ինչպես նշվում է գելույցում զիսավոր խնդիրն այն բանում է, որ թեև Զավախսի ներկայում կայուն է, բազմաթիվ դերակատարներ իրավիճակի վրա ներազելու հսկայական հնարավորություններ ունեն: Անկայունության ոխսկն ավելանում է ռազմաբազմության փակման կամ բուրֆ-մեխանիզմների հայրենադարձության օրը մնտենալու հետ: Մեծագույն վտանգն այն բանի մեջ է, որ դերակատարներից մեկը կարող է գտնել, որ իրավիճակի սրման միջոցով նա հնարավորություն կունենա ավելացնել իր բաղադրական ազդեցությունը կամ ձեռք բերել նյութական այլեւայլ լծակներ: Լուրջ բախում ստեղծելու համար վառելափայտի դակաս չի զգացվում»<sup>49</sup>:

### 3.8. ԱՄՆ դեժաւրանուղարություն

ԱՄՆ-ի դեժաւրանուղարությունը յուրաքանչյուր տարի գելույցներ է հրատարակում աշխարհի սարքեր երկրներում մարդու իրավունքների ոլորտում սիրող կացության վերաբերյալ: Դրա հետ մեկտեղ ԱՄՆ արտաքին գերատեսչությունը, նոյն համախականությամբ, նաև հրատարակում է աշխարհի գրեթե բոլոր երկրներում կրոնական ազատության մակարդակի մասին հենինակավոր գելույցներ: Սույն

48 Նույն աշխ., էջ 43:

49 Նույն աշխ., էջ 45:

զեկույցներն աշխարհում մարդու իրավունքների, էքնիկական ու կրոնական փոփամասնությունների իրավունքների ղաւումանության ոլորտում ժիրող կացության իրական դատկերը ներկայացնող բավականին կարենու աղբյուր են եւ այդ դաշձառով հետագայում օգտագործվում են բազմաթիվ հետազոտական կազմակերպությունների կողմից:

Պետարևութարության ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ աշխատանի խնդիրների բյուրոն 2004թ. հրատարակեց աշխարհում մարդու իրավունքների ղաւումանության խնդիրներին նվիրված իր հերթական ամենամյա զեկույցը: Վրաստանի մասին բաժնում կարենու տեղ էր հատկացված երկրի հասարակական եւ բաղական կյանքում Ուղղափառ եկեղեցու ունեցած չափազանց մեծ դերակատարության հետ կարգված հարցերին<sup>50</sup>: Մասնավորապես, անդրադառնալով Սահմանադրական համաձայնագրով (Կոնկրետատով) Եկեղեցուն տված արտնություններին՝ նշվում է, որ «քեզեւ մի բանի Եկեղեցիներ ստորագրեցին Կոնկրետատին դեմ չինելու ձեւական փաստարդեր, նրանի նշեցին, որ խնդրահարույց հոդվածը, որտեղ ՎՈՒԵ-ին տվում է Եկեղեցիների կառուցման ու դրանց նկատմամբ իրավունքների վերականգնման հարցերը սարդինելու իրավունք, բացակայում էր նախօրն համաձայնեցված փաստարդություն»:

Զեկույցում նաև դիմարկվում էին այլ Եկեղեցիների, դավանանեների ու կրոնական միավորումների գրանցման եւ իրավական կարգավիճակի տրամադրման հարցերը: Նշվում էր, որ գոյուրյուն չունի կրոնական կազմակերպությունների մասին որեւէ օրենք, եւ ՎՈՒԵ-ն մնում է իրավական կարգավիճակը ունեցող միակ դավանանելը, թեև որու կրոնական միավորումներ գրանցվել են որպես ՈՎԿ-ներ: «Իրավական կարգավիճակի այս բացակայությունը խոչընդոտում է կրոնական միավորումներին վարձակալելու կամ գնելու անշարժ գույք, բազմաթիվ խմբեր ունեցվածքը գրանցել են անհանդերի կամ ՈՎԿ-ների վրա, ինչը խիս խճանում է գոյքային հարաբերությունները: Զեկույցում արձանագրվում էր, որ չգրանցված կրոնական կազմակերպություններին ղաւունադրես չի բոլորարվում վարձակալել գրասենյակային տարածքներ, ձեռք քերել ժինարարություն իրականացնելու արտնություն, ներկրել զրականություն, կամ ներկայացնել միջազգային Եկեղեցիներ, թեև բազմաթիվ կրոնական միավորումներ հասնում են այս նյատակներին իրենց կողմից գրանցված ՈՎԿ-ների միջոցով»: Զեկույցում նաև անդրադարձ է արվում Խորհրդային Միության տարիներին ոչ ուղղափառ դավանանեներից բռնագրավված (կամ ՎՈՒԵ-ին փոխանցված) գույքի ու կառուցման խնդրին. «Հռոմի կաթոլիկ Եկեղեցին եւ Հայ առաքելական Եկեղեցին չկարողացան աղահովել Խորհրդային Միության տարիներին փակված կամ

<sup>50</sup> Georgia. Country Reports on Human Rights Practices - 2004 // Released by the Bureau of Democracy, Human Rights, and Labor. Washington, February 28, 2005.

**ՎՈՒԵ-ին փոխանցված եկեղեցիների վերադարձ»:**

Ժողովրդավարության, նարու իրավունքների եւ աշխատանի խնդիրների բյուրոյի Վրաստանին նվիրված 2005թ. գեկույցում դարձյալ անդրադարձ է արվում երկրի հասարակական եւ բաղաբական կյանքում ՎՈՒԵ-ի ունեցած հասուկ դերակատարության եւ դրա հետ կապված այլ կրոնական դավանանիների նկատմամբ ցուցաբերվող խորական վերաբերմունքի հետ առնչվող խնդիրներին: Նշվում է, որ 2005թ. դեկտեմբերին քազմաքիլ դասզամավորներ խիստ կերպով առարկեցին բոլոր կրոններին օրենքով հավասար իրավունքներ ըստրելու առաջարկ դարմունակող Մարդու իրավունքների դաստիանի գեկույցին: Պատզամավորները հայտարարեցին, որ ՎՈՒԵ-ի դատանական դերը արդարացնում է նրա արտօնյալ կարգավիճակը: Պետքարտուղարությունն արձանագրում էր, որ վրացական իշխանությունների կողմից այլ դավանանիների իրավաբանական գրանցման առաջարկվող ընթացակարգը ոչ միայն խորական էր, այլ նաև նրանց կրոնական գգացմունքները վիրավորող<sup>51</sup>:

Զեկույցում դարձյալ արձանագրվում էր, որ Կարողիկ եկեղեցին, Ճշմարիտ ուղղափառ եկեղեցին, Քաղաքացիական եկեղեցին, Հայ առաքելական եկեղեցին լուրջ խոչընդուների են հանդիպում եկեղեցական նոր ժինություններ կառուցելիս կամ նախկինում բռնագրավված եւ ՎՈՒԵ-ին փոխանցված ժինությունները հետ սահմանադրությունը<sup>52</sup>:

Առանձնակի հետարքություն է ներկայացնում ԱՄՆ Պետքարտուղարության կողմից աշխարհի երկրներում կրոնական ազատությանը նվիրված ամենամյա հասուկ գեկույցը: 2005թ. գեկույցում դարձյալ արձանագրվում է ՎՈՒԵ-ի հասուկ կարգավիճակը, ինչը այլ եկեղեցիների եւ կրոնական միավորումների համար լուրջ խնդիրներ է ստեղծում ինչողևս նրա, այդիս ել դետուրյան հետ հարաբերություններում<sup>53</sup>:

Ինչողևս Պետքարտուղարության այլ գեկույցներում, այստեղ եւս դարձյալ շետևում է, որ նախկինում բռնագրավված կամ ՎՈՒԵ-ին փոխանցված կրոնական ժինությունները ու այլ գործը հետ սահմանադրությանը Հռոմի կարողիկ եւ Հայ առաքելական եկեղեցիների կողմից գործադրված զանգերն առաջարյուն են: «Նշանակուր հայկական եկեղեցին՝ Նորաւենը մնում է փակ ինչողևս եւ չորս այլ փոքր հայկական եկեղեցիներ Թքիլիսիում եւ մեկը՝

51 «Religious groups may now register as local associations (“unions”) or foundations. ... Some religious communities were dissatisfied with the status that registering under the law provided. The Catholic Church and Armenian Apostolic Church as well as Muslims opposed registering, short of registering as a religious body, and continued to object to the GOC’s preferred status»

52 *Georgia Country Reports on Human Rights Practices - 2005*

53 Georgia. International Religious Freedom Report - 2005 // Released by the Bureau of Democracy, Human Rights, and Labor. US Department of State. Washington, November 8, 2005.

Ախալցիսայում: Բացի դրանից՝ ՎՈՒԵ-ի ձևումների հետևանքով Հռոմի կաթոլիկ եւ Հայ առաքելական եկեղեցիները դժվարությունների են հանդիմել նոր եկեղեցիներ կառուցելու բույլսվորթյուն ստանալու հարցում»:

Չեկովյան նաեւ ընդգծում են ոչ ուղղափառ եկեղեցիների գրանցման եւ իրավաբանական կարգավիճակի տամադրման հետ կապված դժվարությունները: Մանավորապես, նշվում է, որ 2005-ի ապրիլին «Խորհրդարանը փոփոխություններ մասին Քաղաքացիական օրենսգրքում՝ բոյլատելով կրոնական կազմակերպությունների՝ որդես մասնավոր միավորումների, գրանցումը եւ դրանով նրանց ընորհելով նախկինում ոչ հասու իրավական կարգավիճակ: Թեեւ բազմաքիչ կրոնական խմբեր ողջունեցին այդ ուղղումը, առավել ավանդական կրոնների ներկայացուցիչները շարունակեցին դնդել հատուկ իրավական կարգավիճակ ստանալու դահանջի վրա, որը կառանձնացնի նրանց ոչ ավանդական կրոններից: Որու կրոնական խմբեր դժողոհ են, որ Օրենսգիրքը չի տալիս տարբեր անհամերի վրա գրանցված, սակայն իրականում սվյալ կրոնական խմբերին դատկանող գույքի գրանցման հնարավորություն»:

## **Գլուխ 4.**

**Վրաստանում մարդու եւ էքնիկական փոքրամասնությունների  
իրավունքների ղաւումանության ոլորտում իրավիճակի դինամիկան  
Սամցխե-Զավախսի սարածաւության օրինակով**

Վրաստանի Սամցխե-Զավախս վարչատարածքային սարածաւությանը ղաւմական եւ աշխարհագրական առումներով բաղկացած է երկո՛ Սամցխե (Մեսխեթ) եւ Զավախս մասերից: Զավախսը, որի մեջ ներկայում ընդունված է միավորել Ախալքալաքի եւ Նինոծմինդայի տօջանների սարածքները, գտնվում է Վրաստանի հարավ-արևելքում եւ անմիջականորեն սահմանակից է Թուրքիային ու Հայաստանին: Զավախսի ժողովրդագրական յուրահասկությունը (բնակչության 95%-ից ավելին կազմում են հայերը) ղաւմականորեն դայմանավորել է այն հանգամանքը, որ սարքեր ուսումնասիրողների ու բաղաբական գործիչների զնահատականներում երկրամասը դիմում է որդես բախումնային ներուժ ունեցող գոտի: Ընդ որում, եթե վրացական ուսումնասիրողները բախումնային ներուժը տեսնում են գրեթե բացառապես տեղի հայ բնակչության հնարավոր «անջատողական» դրսեւումների առումով, առա հայ մասնագետներին Զավախսում ժրող իրավիճակը հուզում է առաջին հերթին հայ էքնիկական փոքրամասնության նկատմամբ խորականության եւ հասարակական-բաղաբական, սննդական եւ մշակութային կյանքում լիարժել մասնակցություն ունենալու նրա իրավունքների ղաւումանության տեսանկյունից<sup>1</sup>: Արտասահմանյան հետազոտությունների մեծամասնությունը սարածաւության դիմարկում է նաև Հարավային Կովկասի աշխարհագրական ոլանակում խնդիրների վերլուծության դիրքերից<sup>2</sup>:

- 
- 1 Policy Brief: Javakheti In Georgia. Problems, Challenges And Necessary Responses. CIPDD & FEWER. July 2000. <http://www.fewer.org/caucasus>; Darchishashvili D. Southern Georgia: Security Objectives and Challenges. Report Commissioned by Written for UNHCR's 'CIS Local Monitoring Project', March 1999; Der Ghoukassian Kh., Giragosian R. Javakh: Stability Through Autonomy. March 2001. <http://groong.usc.edu/ro/ro-20010326.html>; Peuch Jean-Christophe. Georgia: Javakheti Armenians' Call For Autonomy Has Tbilisi On Guard. <http://www.rferl.org/nca/features/2002/11/25112002183353.asp>; Sarkissian R. Javakhk: Socio-Economic Neglect or Ethnic Unrest? // DWA Discussion Paper N.101. April 2002 ([www.oxy.edu/dapartments/dwa/papers/](http://www.oxy.edu/dapartments/dwa/papers/)); *Дарчишашвили Д. Южная Грузия: вызовы и задачи безопасности // Центральная Азия и Кавказ, №1, 2000; Джинчарадзе Д. Некоторые аспекты ситуации в Грузии в контексте вывода российских военных баз из региона // Центральная Азия и Кавказ, №5, 2000; Новикова Г. Джавахетия: в эпицентре интересов // Грузия: проблемы и перспективы развития / Под ред. Кожокина Е.М. Т.2. РИСИ: М., 2002.*
  - 2 Kanbolat H., Gul N. The Geopolitics and Quest for Autonomy of the Armenians of Javakheti (Georgia) and Krasnodar (Russia) in the Caucasus // Centre for Eurasian Strategic Studies (AVSAM), Ankara, 28.12.2001 ([www.avsam.org](http://www.avsam.org)); Kanbolat H., Gul N. The Geopolitics and Quest

Հայ եւ վրացի հետազոտողների տեսակետների տարերությունը դրսեւովում է նաև Զավախի դատմությունը լուսաբանելիս: Հաճախ բերվում են իրարամերժ հակադրվող տեսակետներ: Վրացի գիտնականները Սամցխե (Մեսխեթ) տարածաշրջանը համարում են վրաց դեւականության օրրաններից մեկը՝ նեւով, որ հայ էքիքական տարրն այնտեղ հայնվել է միայն 1828-29ք. ռուսական դատարարության արդյունքում: Իսկ հայ դատմարաններն աղացուցում են, որ երկրի բնիկները դեռ վաղնջական ժամանակներից հայերն էին, բանի որ այն դատմական Հայաստանի բաղկացուցիչ մասերից մեկն է, իսկ 19-րդ դարի սկզբների ժողովրդագրական փոփոխությունները միայն վերականգնեցին բազմադարյա քուրքական գերիշխանության հետևանքով Զավախի աղճատված ժողովրդագրական դատկերը<sup>3</sup>:

Ներկա դաիմն տարածաշրջանում ինչպես բաղաբական, սոցիալ-սևական եւ մշակութային ոլորտներում, այդուն էլ, կոնկրետ, մարդու եւ էքիքական փորձամասնությունների իրավունքների դաշտամության հարցերում ստեղծվել է բավականին ծանր կացություն, ինչը դասանցում է մանրամասն վերլուծություն եւ խնդիրների լուծման ուղիների որոնում:

#### 4.1. Ժողովրդագրական իրավիճակ

Վարչական առունով Զավախի բաժանվում է երկու շրջանների՝ Ախալքալաքի եւ Նինոծմինդայի միջև: Նահանգը զբաղեցնում է Վրաստանի տարածքի 3,7%-ը, այնտեղ բնակչում է երկրի բնակչության մոտ 2%-ը: Սամցխե (Մեսխեթ) տարածաշրջանը Զավախի հարում է արևմուտքից, բաժանվում երեք Ախալցխայի, Աղիգենի եւ Աստիճանի շրջանների: Նահանգի կազմի մեջ է մտնում նաև հյուսիսում գտնվող Բորժոմի շրջանը: Վրացական իշխանությունների կողմից 1990-ական թթ. կեսերին իրականացվեցին վարչական փոփոխություններ, որոնց արդյունքում այս բոլոր շրջանները միավորվեցին մեկ վարչատարածքային միավորի՝ տարածաշրջանի («նահանգի») մեջ, որը ղեկավարում է նախագահի կողմից նշանակված լիազորը (կամ «նահանգադեսը»): Ինչպես շատերն են գտնում, Զավախիում սկյալ վարչատարածքային միավորի ստեղծումն իրականում նղաւակ ուներ նվազեցնելու տեղի հայ բնաշուրջյան տեսակարար կշիռը, որն արդեն ձևող մեծամասնություն չէր կազմում, սակայն 1990-ական թվականների կեսերին հաւաքվում էր երկրամասի ողջ բնակչության գրեթե 60%-ը:

for Autonomy of the Armenians of Javakheti (Georgia) and Krasnodar (Russia) in the Caucasus // Armenian Studies, Issue 2, June-August 2001; Դարանան Ամիր-Ռезա. Ռոլ արման, բնակչության գործառնությունները և պատմությունները Հայաստանում // Ամսագիր Հայաստան, 2003, Եղանակ, 13 համար, 2003 թվական:

3 Տե՛ս մանրամասն Մելքոնյան Ա., Զավախի XIX դարի վերջին եւ XX դարի առաջին հասորին, Երևան, 2003:

Խորհրդային իշխանության տարիներին, հատկապես սասլինյան ժամանակաշրջանում, Զավախում (ինչընեւ եւ ողջ Վրացական ԽՍՀ-ում) Խորհրդային Վրաստանի կառավարության նորատակասլաց բաղաբանության արդյունքում, զգալի չափերի հասավ դեռի Խորհրդային Հայաստան, Հյուսիսային Կովկաս, նախկին ԽՍՀՄ այլ շրջաններ հայ բնակչության արտաքաղքը: Դրա հետևանքով 1989թ. Ավալֆալարի եւ Բոգդանովկայի (ներկայումս Նինոծմինդայի) շրջանների բնակչության թվաքանակն ուներ մոտավորապես նույն չուցանիչը, ինչ որ 1914թ. շուրջ 100 հազար մարդ<sup>4</sup>: Խորհրդային տարիներին էքսիլիական իրավիճակի զարգացումը ընթացել է հետոյալ կերպով (տես *Աղյուսակ 3-5*):

### **Աղյուսակ 3. Սամցխե-Զավախուի բնակչության թիվը և էքսիլիական կազմը 1939թ. սլյաներով (մարդ, %)**

Շրջան	Վրացիներ	Հայեր	Թուրքեր	Ուստիներ	Քրիստոնյաց	Ընդամենը
Ախալցխայի	5.836 (10,5%)	16.454 (29,7%)	28.428 (51,2%)	1.538 (2,8%)	1.423 (2,6%)	55.490
Աղիգենի	5.466 (13,2%)	942 (2,3%)	32.928 (79,7%)	1.281 (3,1%)	69 (0,2%)	41.314
Անդինձայի	6.500 (19,9%)	1.741 (5,3%)	21.612 (66,2%)	293 (0,9%)	1.980 (6,1%)	32.644
Ախալգալարի	4.857 (7,5%)	54.081 (83,6%)	4.015 (6,2%)	1.102 (1,7%)	309 (0,5%)	64.655
Նինոծմինդայի	93 (0,3%)	27.376 (79,2%)	1.009 (2,9%)	5.862 (17,0%)	77 (0,2%)	34.575
Ընդամենը	22.752 (9,9%)	100.594 (44,0%)	87.992 (38,5%)	10.076 (4,4%)	3.858 (1,7%)	228.678

Թուրք-մեսխեթյաների, իսկ, փասորեն, երկրամասի ողջ մահմեղական ազգաբնակչության 1944թ. ժեղի ունեցած տեղահանությունը, էադես փոխեց սարածաշրջանի ժողովրդագրական իրավիճակը: Վրացական ԽՍՀ կառավարությունը, ձգելով նվազեցնել երկրամասում հայ բնակչության զերակըռությունը, հետպատրազմյան առաջին իսկ տարիներին մեկնարկեց այնտեղ Վրաստանի ներքին շրջաններից բնակչության տեղափոխման ծրագիր: Ըստ վրացի ուսումնասիրողների ամենահամես հաւաքարկների 1950-ական թթ. վրացի վերաբնակչների թիվը հասավ 32 հազարի կամ սարածաշրջանի բնակչության մեկ երրորդին<sup>5</sup>: Արյունքում, ըստ 1959թ. մարդահամարի սլյաների, 1939թ. համեմատ որոշ շրջանների վրացի ազգաբնակչությունն աճել էր մի քանի

4 Տես մասնամաս՝ *Մելիքյան Ա.*, Զավախու XIX դարի վերջին և XX դարի առաջին հարորդին, Երևան, 2003: Էջ.230-231:

5 Տես մասնամաս՝ *Darchiashvili D.* Southern Georgia: Security Objectives and Challenges.

անգամ: Այսպես, Աղիկենի տրանում վրացիների թիվն աճեց 3 անգամ՝ 5466ից (քնակչության 13,2%), մինչեւ 16 187 մարդ, ինչը (տեղական մահմեդական բնակչության տեղահանման հետևանքով) արդեն կազմում էր ազգաբնակչության 82,6%: Ախալցխայի տրանում այդ ցուցանիւրը նույնական ավելացավ ավելի բան՝ 3 անգամ (5 836 -ից (10,5%), մինչեւ 18 878 հոգի, որոնի մահմեդական ազգաբնակչության տեղահանման հետևանքով կազմում էին արդեն քնակչության 37,4%-ը): Աստիճանայի տրանում վրացի ազգաբնակչությունն ավելացավ շուրջ 1,5 անգամ՝ 6 500 -ից (19,9%) մինչեւ 9 081 մարդ (80,6%):

Դրա հետ մեկտեղ դեռև է նետել, որ Զավախսի հայ քնակչության թիվը, չնայած ծննդիության ավանդաբար բարձր նակարդակին, գործնականում չենթարկվեց որեւէ տուափելի փոփոխության: Դա հասկաղես երեսում է Ախալցխայի տրանում օրինակով, որտեղ 1939թ. հայ քնակչության թիվը կազմում էր 54 081 (83,6%), իսկ 1959թ.՝ 57 209 մարդ (90,8%): Հարկ է նաև ընդգծել, որ մահմեդական ազգաբնակչության տեղահանությունը գործնականում չի անդրադարձել երկրանասի ամենախիս քնակեցված Ախալցխայի եւ Նինոծմինդայի տրանսներին, հետևաբար, դա չի արտահայտվել այդ տրանսների հայ քնակչության գերակշռության վրա, որտեղ անգամ մինչեւ 1944թ. հայերը կազմում էին բացաձակ մեծամասնությունն:

#### **Աղյուսակ 4. 1989թ. դրությամբ Սամցխե-Զավախսի քնակչության թիվը եւ էթնիկական կազմը (մարդ, %)**

Տրան	Վրացիներ	Հայեր	Ռուսներ	Այլ ազգություններ	Ընդդամենը
Ախալցխայի	18.878 (37,4%)	25.753 (51,1%)	3.684 (7,3%)	2.115 (4,2%)	50.430
Աղիկենի	16.187 (82,6%)	1.627 (8,3%)	1.276 (6,5%)	508 (2,6%)	19.598
Աստիճանայի	9.081 (80,6%)	2.068 (18,4%)	60 (0,5%)	56 (0,5%)	11.265
Ախալցխայի	3.566 (5,7%)	57.209 (90,8%)	1.647 (2,6%)	555 (0,9%)	62.977
Նինոծմինդայի	50 (0,2%)	27.090 (84,5%)	4.616 (14,4%)	308 (1,0%)	32.064
<b>Ընդամենը</b>	<b>47.762 (27,1%)</b>	<b>113.747 (64,5%)</b>	<b>11.283 (6,4%)</b>	<b>3.542 (2,0%)</b>	<b>176.334</b>

Զավախսի հայ քնակչության զանգվածային արտագաղթը Հայաստան, Ռուսաստան եւ նախկին ԽՍՀՄ այլ տրանսներ 1960-1970-ական թվականներին ընդունեց խուռան ծավալներ: Դրա հիմնական դաշտառներն էին տեղում աշխատանք գտնելու ու կրթություն սանալու հետ կառված դժվարությունները:

Արտագաղթի հետեւանելով, չնայած Զավախիքի հայ բնակչության ժողովրդագրական դրական բարձր ցուցանիշներին, նոր թիվը երկանասում զգալիորեն չի աճել:

Միաժամանակ շարունակվում էր էքսիլիական վրացիներով երկրամասի բնակեցումը, ինչը հանգեցնում էր Սամցիսե-Զավախիքի ընդհանուր բնակչության մեջ նրանց չափաբաժնի աստիճանական ավելացմանը: Դա, հասկաղես, արտահայտվեց Աղիգենի եւ Ախալցխայի շրջաններում, որտեղ, հաւսի առնելով վրացիների մոտ ծննդիրության ավանդաբար ցածր մակարդակը, վրացական բնակչության նման զգալի աճը չէր կարող տեղի ունենալ բնակչության բնական աճի հետեւանելով: Դրա հետ մեկտեղ՝ վրացի բնակչության հանակական ցուցանիշների աճի մյուս դաշտան կարող էր լինել վրացական իշխանությունների կողմից դաշտունական մարդահամարների սվյաների արհեստական ուռացումը: Այդ միտուն էլ ավելի լայն զարգացում սացավ արդեն հետխորհրդային ժամանակաշրջանում, հասկաղես՝ 2002թ. մարդահամարի անցկացման ընթացքում, երբ Զավախիքում տեղ գտան վրացի բնակչության թվի բացահայց կեղծումներ:

Ինչու արդեն նշվեց՝ 1990-ական թվականների կեսերին Վրաստանի նախագահի հրամանագրով ստեղծվեց նոր վարչատարածքային միավոր՝ Սամցիս-Զավախիք նահանգը, որի կազմում ընդգրկվեց նաև Բորժոմի շրջանը (1990-ական թվականների սվյաներով ուներ 33,3 հազ. բնակչություն, որից միայն 10%-ն էին կազմում հայեր): Հս Վրաստանի սահմանադրության, երկրի վարչատարածքային բաժանումը որուելու է միայն դեռության անքորդ տարածքի նկատմամբ իշխանությունների վերահսկողությունը վերականգնելուց հետ (հոդված 2, կետ 3): Մինչ այդ, վարչական կառավարումը տարվում է 1994թ. ընդունած թիվ 237 հրամանագրի հիման վրա, ըստ որի սահմանվել է ոչընունելիքների (երկրամասներում նախագահի լիազոր ներկայացուցիչների) ինսիսուուրը: Սակայն այս համակարգը չունի համադրատախան իրավաբանական հիմք, սահմանադրական չէ եւ Վրաստանի նորմատիվ-իրավական փաստարթերում իշխանական վրացի միայն 1998թ. սկսած: Բացի դրանից, բանի որ Վրաստանի սահմանադրության մեջ ոչինչ չի ասվում երկրի վարչատարածքային կառուցվածքի մասին, նահանգադեմք եւ շրջանային իշխանությունների միջև գործառույթների հստակ վերաբախտումը բացակայում է:

Ինքնին վերցրած Սամցիսի (Մեսիսերի կամ Վերին Զավախիք) եւ Զավախիքի միավորում մեկ վարչատարածքային միավորի մեջ, Բորժոմի շրջանի ընդգրկմամբ, բազմաթիվ հարցեր է հարուցում: Բնական է, որ հայ բնաշությանը մտահոգում է այն հանգամանքը, որ իր ձականագիրը, փասորը, շաղկապահը է Վրաստանի նախական ինքնավարությունների հետ խնդիրների լուծնան աղոս

հեռանկարի հետ: Առավել եւս, որ սվյալ վարչատարածքային միավորը, փաստուն, հակասում է Վրաստանի սահմանադրությանը, որտեղ երկի նման վարչական բաժանում նախատեսված չէ: Կրկնենք, որ Բորժոմի շրջանի ընդգրկումը Սամցխե-Զավախսի կազմում դայմանավորված չէր ոչ դատական, ոչ էլ սնտեսական նկատումներով եւ նոյատակ ուներ միմիայն արհեստականութեն նվազեցնելով էր նիկական հաշվեկշոր տարածաւրջանում: Դրա հետ մեկտեղ՝ դեմք է հաւաքի առնել, որ ժամանակին նոյն Բորժոմի շրջանին միացվել են 3 բարձրենային՝ Մոլիթ, Տաբագոր եւ Ջխարովա հայկական գյուղերը, որոնք ընկած են Ախալքալաքի շրջանի հյուսիսում եւ նրա հետ ունեն սերտ դատական ու սնտեսական կապեր: Տվյալ փասդը տրամադրութեն համահունչ է դաշտնական բաղաբականությանը, որի նոյատակն է էր նիկական փորքանանությունների համախումք բնակության շրջանների ասիժանական վարչական մասնաւումը եւ դրանի վրացական շրջաններին կցումը (ի դեպ, նոյնանման բաղաբականություն է իրականացվել իշխանությունների կողմից եւ Քվեմո-Զարթլիում): Աղյունելում 1990-ական թվականներին կեսերին իրականացված վարչական բաժանումը եւ Բորժոմի շրջանի 30,000 վրացիներին Սամցխե-Զավախսի բնակչության ընդհանուր թվի մեջ ընդգրկելու անմիջականութեն արտահայտվեց նորասեղծ նահանգի էր նիկական դասերի վրա, որտեղ հայերն արդեն չեն կազմում ընդհանուր բնակչության շուրջ 65%-ը, ինչոր դա եղել էր 1989թ. խորհրդային վեցին մարդահանարի սվյալների համաձայն:

### **Աղյուսակ 5. Սամցխե-Զավախսի բնակչության թիվը եւ էր նիկական կազմն ըստ 2002թ. դաշտնական մարդահանարի սվյալների (հազ. մարդ)**

Ծրան	Հայեր (հազ. մարդ)	Վրացիներ (հազ. մարդ)	Ընդհանուր (հազ. մարդ)
Աղիգենի շրջան	0.7	19.8	20.7
Աստիճանայի շրջան	2.3	10.7	13.1
Ախալքալաքի շրջան	57.5	3.2	61.0
Ախալցխայի շրջան	16.9	28.5	46.1
Բորժոմի շրջան	3.1	27.3	32.4
Նինոծմինդայի շրջան	32.9	0.5	34.3
Ընդհանուր	113.3	90.0	207.6

Դրա հետ մեկտեղ՝ դեմք է ի նկատի ունենալ, որ սվյալների հավաստության նկատմամբ կան լուրջ կասկածներ, եւ հիմքեր՝ ենթադրելու, որ 2002թ. մարդահանարի ընթացքում Սամցխե-Զավախսի տարածաւրջանի հայ բնակչության թիվը Վրաստանի դաշտնական մարմինների կողմից արհեստականութեն նվազեցվել է, եւ, միաժամանակ, վրացական բնակչության համար տվել են

ուռճացված սվյաներ: Հաճախ, վրացի ազգաբնակչության երկակի հաշվառում է կատարվել: Այսպես, Աստիճանայի տրամադրության ընթացքում 1980-ական թվականների վերջերին և 1990-ական թվականների սկզբներին բնակչության են ստացել և գրանցվել Ախալքալաքի տրամադրության վրացական գյուղերում (Հոկամ, Ազմանա, Պրեմնա և այլն), մարդահամարի ընթացքում միաժամանակ հաշվառվել են նաև Աստիճանայի տրամադրության: Սամցիսե-Զավախսի հայ և վրացի բնակչության թվաբանակի վերաբերյալ սվյաների ոչ արժանահավաք լինելու մասին է նաև վկայում նախկին խորհրդային մարդահամարների ու 1990-ական թվականների ընթացուցակների սվյաների հետ դրանց համեմատությունը և այլ փաստեր:

Ախալքալաքի տրամադրության 67 գյուղերից 54-ն ամրողաբես հայաբնակ են, 5 գյուղերում՝ Գոզաւեն, Ափնիա, Կորելիա, Պրեմնա և Չումչսա, բնակվում են վրացիներ, 4 գյուղերում՝ Բարալեր, Սուրջախտեր, Հոկամ և Ազմանա, բնակչությունը խառն է՝ հայ-վրացական: Մեկ՝ Խոստիա գյուղում գերակշռությունը է հայ բնակչությունը, սակայն բնակվում են նաև վրացիներ ու հոյեր: Ախալքալաք տրամադրությունում նոյնական բացառական մեծամասնորյուն են կազմում հայերը, կան ոչ մեծ թվով վրացիներ, ինչպես նաև ռուսներ, ուկրաինացիներ, այլ ազգությունների ներկայացուցիչներ: Նինոծմինդայի տրամադրությունում բոլոր բնակչային բնակչությունը (31 գյուղ եւ Նինոծմինդա բաղադր) հայկական են, բացառությամբ Գորելովկայի (որտեղ բնակվում են հայեր և ռուս դուխորոններ) և Սղասովկայի (որտեղ միասին բնակվում են հայեր, դուխորոններ և աջաներ):

Վրացական կառավարությունը բազմաթիվ անգամներ է ձգել փոխելու աւածաւության էքսիլիական դասկերը: Դեռ 1982-83 թվականներին արձանագրվեցին Ախալքալաքի տրամադրությունում առաջին փորձերը: 1989-90 թվականներին, դարձալ Աջարիայում բնական աղետների հետևանելով կորցրած բնակչությունը փոխարեն նոր բնակարաններ սրամարտելու դաշտվակով, աջաների վերաբնակեցման նոր փորձ արվեց: Ընդ որում՝ դեսք է հասվի առնել, որ Աջարիայում կիմայական դայմանները ուստի մեղմ են, իսկ լեռնային տրամադրություն բնակչությունը ուստի ավելի մեղմ են, իսկ լեռնային տրամադրություն բնակչությունը ուստի ավելի նոր է, քան Զավախսում: Այսինքն աջաներին հենց Զավախսում վերաբնակեցնելու համար առավակական, առաջին հերթին՝ սնտեսական, դայմաններ չկային: Այդ գործողությունները նոյատակ ունեին, մի կողմից՝ նվազեցնելու աւածաւության տեսակարար կեհուր, մյուս կողմից՝ Տեղացնելու Աջարական ինքնավար հանրապետության ներուժը, ստեղծելու բարենպաս դայմաններ այն Վրաստանի ներին տրամադրության մաքուր վրացական էքսիլ սարրով՝ բնակեցնելու համար: Վրացական կառավարությունն զգայի գումարներ համարեց աջաների համար

թնակավայրերի կառուցմանը, սակայն նրանց մեծ մասը հետազայում հետ վերադարձավ:

Միաժամանակ, Վրաստանում սիրող ներփին անկայունության հետևանելով, հանրադեմուրյունից մեկնել է ռուս և ռուսալեզու բնակչության մեծամասնությունը, այդ թվում Ախալքալաքի ու Նինոծմինդայի շրջաններում համախումք բնակվող կրոնական փոքրամասնությունների՝ դրվագների ու մոլոկանների ներկայացուցիչները: Զավախի 5 գյուղերում բնակվող 3 000 դրվագներից մերկ կրոնը՝ Հայությունը մնացել է շուրջ մեկ երրորդ:<sup>6</sup> «Մերաք Կոստավայի հիմնադրամը» եւ «Զավախի վերածնունդ» ընկերությունը, Հայաստանի եւ Զավախի միջեւ վրացարնակ քափարգել ստեղծելու Վրաստանի առաջին նախագահ Զվիադ Գամսախուրդիայի կողմից սահմանած ծրագիրը կյանքի կոչելու նյատակով, սկսեցին ակտիվութեան գմել մեկնող դրվագներների բնակարանները: Հայսնի է մի դեմք, երբ Կալինինը գյուղում դրվագների կողմից 45 ռողեկի ընթացքում այդ կազմակերպությունների ներկայացուցիչներին վաճառվել է շուրջ 60 տուն: Սակայն դա հանգեցրեց նաև շրջանի հայ բնակչության ակտիվացմանը. ի դատասահման դրվագների գյուղերն աշաբներով բնակեցնելու փորձերին, այնտեղ սկսեցին բնակվել նաև Նինոծմինդայի շրջանի մուսակա՝ Փոլա, Հետշիա, Արագալ ու Սաթիս գյուղերից հայ ընտանիքներ: Դա հանգեցրեց վրացական իշխանությունների դժգոհությանը: Օրինակ, Վրաստանի Հանրադեմուրյան Մարդու իրավունքների եւ ազգամիջյան հարաբերությունների հանձնաժողովի 1995թ. օգոստոսին ընդունված որոշումներից մեկում նշվում էր, որ դրվագներների, հայ ու վրացի վերաբնակիչների, ինչպես նաև Նինոծմինդայի շրջանի դեկավարության միջեւ ստեղծվել են «անառողջ հարաբերություններ» եւ «առանց որեւէ հաշվառման տեղի է ունենում բնակարանների առելուածառք»: Դժվար չէ կոսիել, որ հանձնաժողովի մահողությունը հարուցում էր այն փասթը, որ դրվագների գյուղերի բնակեցման գրծընթացին միացան ոչ միայն «երկրամասի գաղութացման» վրացական կազմակերպությունները, այլ նաև, ինչը լիովին բնական էր, տեղական հայ բնակչությունը: Տարածաշրջանում «ժողովրդագրական իրավիճակի բարելավման» նյատակով Հանձնաժողովը նոյնիսկ խնդրում էր համադաշտախան մարմններին ուսումնասիրել սվյալ հարցը ու համուկ կերպով աջակցել հենց վրացի վերաբնակիչների աշխատանքի տեղափոխմանը ու տցիալական կացության բարելավմանը: Բացի դրանից՝ լուրջ մտահոգություն էր արտահայտվում Ախալքալաքի շրջանում վրացի վերաբնակիչների թվի նվազման փասի կադակցությամբ<sup>7</sup>:

6 Կրինաչ Ա. Բօրցի Հայություն // Հեռացուման գաղտնաբառը – Ռելիգիոն, 14.11.2001.

7 Օ социально-экономическом положении Джавахетского региона // Постановление Комитета защиты прав человека и межнациональных отношений Республики Грузия, 10.08.1995.

Արխագիայում եւ Հարավային Օսիայում հակամարտուրյունների հետևանքով այդ գոտիներից Սամցին-Զավախիի տարածաշրջան վերաբռնակեցվեցին նաև մեծ քվով վրացի փախստականներ եւ տեղահանված անձին: 2001թ. հունվարի դրույթամբ նրանց քվախանակը կազմում էր շուրջ 3 հազ. մարդ<sup>8</sup>: Հաւովի առնելով, որ վրացի փախստականների վերադարձն իրենց նախկին բնակության վայրեր ներկա բաղադրական դայմաններում դիչ հավանական է, դեսք է ենթադրել, որ նրանց մեծ մասը, ըստ երեսությին, տարածաշրջանում նշանական բնակության կիաստավի:

1990-ական քվականների կեսերից մինչեւ 2003 թ. ոչ տեսական դադարից հետո, դարձյալ տեղեկություններ են ի հայտ գալիս, որ Աջարիայի եւ Վրաստանի այլ տրամադրություններից վերաբռնակիչներով Զավախիի բնակեցման կառավարական ծրագիրը վերակենդանացվել է: Այդ նորագույն համար նախատեսվում է զգայի ֆինանսական միջոցներ տրամադրել:

Ընդ որում, դեսք է նույն, որ նույնածակաւշանում ժողովրդագրական նման նախականուրյունն առանց ընդմիջումների տարունակում էր Սամցին-Զավախի տարածաշրջանին հարեւան Ծալկայի տրամադրություն, որտեղ, հեռացած հոյսների փոխարեն, բնակեցվում էին աջարներ, սպաններ ու Արխագիայից փախստականներ: Վրաստանի կառավարությունն Արեւմսյան Վրաստանում ու Աջարիայում բնական աղետներից տուժածների համար բնակարանների գնաճան նորագույն հատկացրել է շուրջ 700 հազար դոլար: Ինչողքս նույն է «Ա-Ինֆո» լրատվական գործակալուրյունը՝ նախատեսվում է, որ տուժած ընտանիքները կտեղապորվեն Զավախիում ու Ծալկայի տրամադրություն: Ըստ լրացնական սվյաների՝ նախատեսվում է զետեղ շուրջ 220 տուն Ծալկայում, Ախալգալագում եւ Նինոծմինդայում: Ինչողքս հաղորդում է փախստականների ու վերաբռնակիչների գործերով վարչության դեկանար Զազա Խմելաշվիլին՝ հայաբռնակ Զավախիում վրացիների տեղափորման դաշտառը, իր, այնտեղ բնակարանների ցածր գինն է: Սակայն, ըստ Սամցին-Զավախիի հայկական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների միանանակ կարծիքի՝ Վրաստանի իշխանությունները ժողովրդագրական կացությունը փոփոխելու նորատակ են հետապնդում<sup>9</sup>: Ի դատասխան վրացի լրացնայաց այդ հայտարարության՝ 2006թ. մայիսի 27-ին Ախալգալագում Զավախի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցավ կլոր սեղան: Կլոր սեղանի մասնակիցները կոչ արեցին ոչ

8 Sumbadze N., Tarkhan-Mouravi G. Working Paper on IDP Vulnerability and Economic Self-Reliance. UNDP: Tbilisi, July 2003. P.84.

9 Правительство Грузии меняет демографическую картину в Джавахети? // www.regnum.ru/news/639074.html, 12.05.2006.

կառավարական տարեկ կազմակերպություններին, ինչդես նաև Զավախիքի բնակիչներին ձեռնարկել հակագրեցության համարժեք խայեր, ինչդես նաև իրենց վրդովմունքն արտահայտեցին ԲԹԶ նավթատրի անցման վայրերում անձնագրային ռեժիմի սահմաննան փաստի առիրով՝ այն գնահատելով որդես ժողովրդագրական խորականության խաղաղականության շարունակություն<sup>10</sup>:

## **4.2. Սոցիալ-սեսեսական իրավիճակ**

Զավախիքը դեռևս խորհրդային ժամանակներից Վրաստանի ամենասակավ ներդրումներ սացած մասն է: Այստեղ դակասում են երկարութային եւ ավտոճանապարհները, իսկ գյուրյուն ունեցողները գտնվում ծայրահեղ անխնամ վիճակում, խաղաքների ենթակառուցները թերզարգացած են: Դրա դաշտառներից մեկը 1950-ական թվականների վերջերին խորհրդային-թուրքական սահմանից մինչեւ 78 կմ դեպի երկրի խորքը սահմանային գոտու ընդունումն էր (այլ տեղերում այդդիմի գոտին ուներ 7-27 կմ լայնություն): Սահմանամերձ գոտում վերահսկողության հատուկ ուժեղացված ռեժիմը գործում էր մինչեւ «Վերակառուցման» սկիզբը: Սակայն տեղայի հայերն այն ընկալում էին նաև որդես Հայաստանի հետ իրենց էփումների սահմանափակմանն ուղղված խաղաղականություն: Միայն 1980-ական թվականների երկրորդ կեսին, երբ Լեռնային Ղարաբաղում հուզումներ սկիզբ առան, Վրացական ԽՍՀ կառավարությունն ընդունեց «Զավախիքի սոցիալ-սեսեսական զարգացման» ծրագիր: Հավանաբար, դա Զավախիքում Թթվիխիքի դեմ հնարավոր երույթներից աղահովարվելու փորձ էր: Սակայն, այդ ծրագրի միակ արդյունքը դարձան բնական աղետներից տուժած աջարներին Ախալքալաքի տօքանի հարավ-արեւելյան հասվածում վերաբնակեցնելու միջոցառումները<sup>11</sup>:

Ոեսք է նետել, որ խորհրդային ժամանակներում վրացական կառավարությունը Զավախիքում չի զարգացրել արդյունաբերական արտադրությունը, չնայած տարածաշրջանում բանվորական զգայի ներուժի առկայությանը: Դրա հետևանքով տարածաշրջանի հայ բնակչության ԽՍՀՄ այլ տօքաններ արտազգնա աշխատանքների մեջ մեծ տարածում սացավ: Միակ խուռը արդյունաբերական ձեռնարկությունը, որը կառուցվել է Ախալքալաքի տօքանում, ձողանոտիկների համար սարֆալորումների գործարանն էր, որն ստեղծվեց այն դաշտառով, որ լինելով միութենական ենթակայության արտադրություն, կատարում էր խորհրդային ռազմաարդյունաբերական համայիշի դաշտները, եւ նրա կառուցման որոշումն ընդունվել էր անմիջականորեն

10 «Единый Джавахет»: «Никто из сторон не имеет права на ошибку» // www.regnum.ru/news/647415.html, 27.05.2006.

11 Guretski V. The Question of Javakheti // Caucasian Regional Studies, Vol. III (1), 1998.

Սովորական: Ընդ որում, այս գործարանը, փաստուն, հնարավորություն չուներ այնողիսի արտադրանի թղթակինու, որը դահանջարկ կունենար եւ կիրացվեր անմիջապես տարածությանում: 1980-ական թվականների կեսերից, այսուհետ կոչված «կոռողերասիլ տարժման» ժամանակաշրջանում, Ախալքալաքի եւ Նիմոնձինդայի տօջաններում լայն տարածում գտավ բարի մշակման արտադրանասերի հիմնադրումը: Դրանց արտադրանն իրացվում էր հիմնականում Ռուսաստանում, ինչն անմիջապես արտահայտվեց Զավախիքի բնակչության սոցիալ-սնտեսական կացության վրա, որի բարեկեցությունը զգալիորեն բարձրացավ: Սակայն ըուսով հանրադեսական իշխանություններն սկսեցին նորատակալաց կերպով խոչընդուներ հարուցել սվյալ ձեռնարկությունների գործունեության առջեւ: Արիեսական խոչընդուներ ստեղծվեցին Վրաստանի տարածով դաշտասի արտադրանքը տեղափոխելու, դրա իրացումից սացած գումարները տարածության փոխանցելու դեմ, բարձրացվեցին սնտեսական գործունեության վրա դրված հարկերը եւ այլն:

Այդ ամենի հետ մեկտեղ, ոյսէ է նույն, որ խորհրդային ժամանակաշրջանում Զավախիք Վրաստանի ամենակարեւոր զյուղանուսական տարածությաններից էր: Գյուղանուսական արտադրության հիմնական բնագավառներն էին անասնաբանությունն ու կարտոֆիլի մշակությունը: 1980-ական թվականների վեցերին միայն Ախալքալաքի տօջանում կար 100 հազ. զբուխ խուռ եղջերավոր անասուն, կարտոֆիլի տարեկան բերքը կազմում էր 100 հազ տոննա, որից շուրջ 30-35 հազ. զննում էր մետրության կողմից<sup>12</sup>: Տարածության առաջատար դիրք էր գրադեցնում նաև դանիք, կարափի եւ այլ կարնամթերթների արտադրության գծով: Սակայն ԽՍՀՄ փլուզումից հետո սնտեսական ցուցանիւնները մի քանի նվազամ նվազեցին:

Վրաստանի կառավարությունը 1997թ. հաստեց Սամցխե-Զավախիք տարածությանի սոցիալ-սնտեսական զարգացման նոր ծրագիր, սակայն այն, ինչողեւ եւ դրան նախորդած ու հաջորդած բոլոր նախագծերը, մնաց թորի վրա: Այդ բոլորը տեղական ազգաբնակչության մոտ միայն ուժեղացնում էր այն կայուն համոզմունքը, որ երկրամասի սնտեսական խնդիրները լուծելու կենտրոնական իշխանությունների ցանկության հետևողական բացակայությունը դայմանակիրված է Զավախիքի հայերի արտաքարք խրանելու նորատակով:

Զավախիքի սնտեսության համար 1990-ական թվականների արդյունքները, նախամ ամբողջ Վրաստանում իրավիճակի վատրացանան ֆոնի վրա, չափազանց ծանր էին: Պատմության վիճակագրության սվյալները ցոյց են տալիս, որ 1999թ. վեցերին արդյունքերական արտադրության (այդ թվում տարածությանի համար առանցքային՝ զյուղանուսության ոլորտում) ծավալով

12 Ախալքալաքի տօջանի նախկին դեկազգագործական կողմից հաւաքացված սվյալներ:

Ախալքալաքի եւ Նինոծմինդայի տրամաները զիջում էին նույնիսկ նոր Սամցխե-Ջավախի վարչատարածքային միավորի հարեւան տրամաներին (տե՛ս **Աղյուսակ 8**).

#### **Աղյուսակ 6. Սամցխե-Ջավախի տարածաշրջանում արդյունաբերական արտադրության (այդ թվում գյուղատնտեսության) դինամիկան 1999-2001 թվականներին<sup>13</sup>**

Ծրագիր	1999թ. արյունաբերական արտադրության աճը՝ 1998թ. համապատական (%)	2000 թ. արյունաբերական արտադրության աճը՝ 1999 թ. համապատական (%)	2001թ. արյունաբերական արտադրության աճը՝ 1998թ. համապատական (%) <sup>14</sup>	Մայումնական արտադրության աճը՝ 1996թ. հունվար- հունիս ամիսներին (ինք. լարի)	Արյունաբերական արտադրությունը՝ 2001թ.-ի հունվար- հունիս ամիսներին (ինք. լարի)
Աղիգենի	44.8	246.5	138.0	9.6	32.3
Աստիճանայի	113.1	105.0	107.4	76.2	252.5
Ախալքալաքի	52.2	34.6	86.3	195.0	71.3
Ախալցխայի	86.9	116.4	117.4	737.7	662.6
Բորժոմի	59.0	110.9	93.2	5025.5	3245.7
Նինոծմինդայի	126.4	98.8	84.9	239.0	147.2
<b>Ընդամենը</b>	<b>63.7</b>	<b>107.2</b>	<b>95.8</b>	<b>6310.0</b>	<b>4371.6</b>

Քանակական ևլյաները վերլուծելիս, դեսք է հաւաի առնել, որ Ախալքալաքի տրամանի բնակչության թիվն զգալիորեն գերազանցում է բոլոր մնացած տրամաներից յուրաքանչյուրի բնակչությանը (տե՛ս Աղյուսակ 5), իսկ արդյունաբերական արտադրության մակարդակը ուսուփելիորեն ցածր է: Ինչողեւ խոստվանում են Վրացի փորձագետները՝ «Թեեւ սննեսական դպյամանները աճրավարա են նաև Վրաստամի այլ տրամաներում, սակայն համաձայն դաշտնական սննեսական ցուցանիւնների, Ջավախի երկրամասի Նինոծմինդայի եւ Ախալքալաքի տրամաներում դրանի ավելի ցածր են, քան անգամ Սամցխե-Ջավախի բոլոր այլ հաւածներում» (Աղյուսակ 7).

13 Antonenko O. Assessment of the Potential Implications of Akhalkalaki Base Closure for the Stability in Southern Georgia. EU Response Capacities // CPN Briefing Paper, August 2001. P.22-23.

14 1998 թ. եւ 2001 թ. առաջին կիսամյակները:

## Աղյուսակ 7. Արդյունաբերական արտադրանիք Սամցին-Զավախիֆ արտահաւաքանում 2002 և 2003 թթ.<sup>15</sup>

Ծրան	Արդյունաբերական արտադրանիք (վրացական լրարի)			
	2002	2003	%	Ընդամենը արդյունաբերական արտադրանիք 2003թ.
Աղյօնեն	174 700	129 700	74,2%	6
Աստիճանա	257 500	466 600	181,2%	35
Ախալգալափ	50 600	54 800	108,3%	1
Ախալցիսա	512 200	615 600	120,2%	13
Բորժոմի	23 211 700	27 657 900	119,2%	853
Նինոծմինդա	131 100	166 100	126,7%	5
<b>Սամցին-Զավախիֆ</b>	<b>24 337 800</b>	<b>29 090 700</b>	<b>119,5%</b>	<b>140</b>

Զավախիֆի սննդասուրյան դժվարին կացությունը, որը կառուված է ենթակառույցների գրեթե լիսակատար բացակայության, զանգվածային արտագաղթի, դեմական աջակցության ցածր մակարդակի ու տեղական արտադրության փաստացի փլուզման հետ, հսակորեն երևում է Ախալգալափի շրջանի վերջին տարիների բյուջեի բանակական ցուցանիւթերը վերլուծելիս (Տե՛ս Աղյուսակ 8):<sup>16</sup>

## Աղյուսակ 8. Ախալգալափի շրջանի բյուջեի ծավալը և բաշխումն ըստ հոդվածների 2001 -2004 թթ. (հազ. լրարի)

Տարի	Բյուջեի ընդհանուր ծավալը	Այդ թվում տեղական եկամուտներ	Տրանսֆերներ կենսունից	Այդ թվում հասկառություն կրության ու մշակույթին
2001	2.288,0	997,0	1291,0	1.185,0
2002	2.893,0	852,0	2.041,0	1.750,0
2003	3.022,2	886,0	2.156,2	1.856,2
2004	3.789,0	839,0	2.950,0	2.420,0

Այնուամենայնիվ, չնայած սննդասական բոլոր դժվարություններին, Զավախիֆում 2001թ. դրույթամբ հավաքվում էր Վրաստանի կարտոֆիլի ամբողջ բերքի շուրջ 40,2 %-ը՝ երկում միջին բերքավորության առավելագույն ցուցանիւթերով, ինչը նաև՝ ամբողջ Վրաստանում արտադրվող բանջարեղենի 5,1%-ը և ցորենի 4,5%-ը: Բացի դրանից, խուռակացնելու անասունների զլխալանակը կազմում էր 8,4%, խոզերին՝ 1,8%, ոչխաների ու այծերին՝

15 Metreveli E. The Dinamics of “Frozen Tension”: Case of Javakheti. GFSIS: Tbilisi, 2004. P.13.

16 Ըստ Ախալգալափի շրջանի վարչակազմի սվյաների:

13,7%, մեղվարնտանիբներինը՝ 12,3% և այսին քոչուններինը 5,4%<sup>17</sup>:

Արաւանի նախկին նախագահ Շեմարդնաձեն դեռ 1999թ. հայտարարեց Սամցիսե-Զավախսի զարգացման ռազմավարական ծրագրի մոտալու մեկնարկի մասին: Սակայն, ծրագրի մանրամասները տեղական իշխանությունների եւ քնակչության համար երկար ժամանակ մնում էին անհայտ: Ավելին, ի դատասան այդ ծրագրի մանրամասների եւ ժամկետների վերաբերյալ հարցին՝ Սամցիս-Զավախսի նախկին «նահանգաղեց» Գիգա Բարամիձեն հայտարարեց, որ նախագիծն ունի զարդնիության գրիփ եւ ենթակա չէ հրադարակման<sup>18</sup>: Միայն 2002թ. հոկտեմբերին նախագիծը հրաժարակվեց «Սամցիս-Զավախսի սոցիալ-սեսանական զարգացման 2002-2005թթ. միջոցառումների ծրագիր» խորագուվ<sup>19</sup>:

Ծրագիրը բաղկացած էր 15 բաժիններից, որոնցից յուրաքանչյուրը ենթադրում էր կոնկրետ ուղղություններով առանձին նախագծեր: Սակայն, ինքնին միջոցառումների բնույթը, դրանց ծավալը ու ընթացքունը միանալակորեն բույլ էին տալիս տնտեկության, որ դա հերթական բարողական ակցիա է, որը կոչված է ցույց այլու Սամցիս-Զավախսի սարածաւողակի քնակչության կարիքների նկատմամբ վրացական կառավարության ցուցաբերած «հոգատարություններ»: Ուղղակի կամ անուղղակի կերպով Ախալքալաքի ու Նինոծմինդայի տօջաններին վերաբերվող այդ ծրագրի 30 կետերից մի բանիսը մասնակիորեն իրականացվեցին միայն 2004թ. ավարտին: Դրանցից են՝ 1998-2000 թվականներին բուհական դաշտի մարումը, Ախալքալաք ու Նինոծմինդա բաղադրներում ավտոմոբիլային ճանաղարի երկու կիլոմետրանոց հատվածների վերանորոգումը, Ախալքալաքի տօջանային հիմնադասոցի նոր տեսնի վերանորոգումը, Ախալքալաքի մի բանի գյուղերի ջրանավարարման բարելավումը, վրացերենի ուսուցման դասընթացների կազմակերպումը, կրոնիրյան նորոշի այլ միջոցառումների անցկացումը: Ընդ որում, նենին, որ Սամցիս-Զավախսի զարգացման ծրագրի իրականացման մեկնարկը վրացական կողմը ժամանակին ուղղակիորեն կաղում էր Ախալքալաքից ռազմարազայի, որը սարածաւողական համար սննդական կարեւոր նեանակություն ունի, դրաբարման հետանկարի հետ: Երկրամասի նախկին նահանգաղեց Ն. Նիկոլովաշվիլին 2004թ. նոյեմբերին դաշյալ հայտարարեց Սամցիս-Զավախսի սննդական զարգացման նոր, արդեն հայտնի չէ, թե թվով՝ որեւորդ, ծրագրի իրականացման մեկնարկի մասին:

Ներկայում կարելի է հաստատած հայտարարել, որ Ախալքալաքի եւ Նինոծմինդայի տօջաններում արդյունաբերական արտադրությունը գործնականում

17 Sumbadze N., Tarkhan-Mouravi G. Development Strategy for Akhalkalaki and Akhaltsikhe Districts of Samtskhe-Javakheti. P.12.

18 Ախալքալաքի տօջանի վարչակազմի աշխատակցի հետ գրուցից:

19 Վրաստան, 26.10.2002:

բացակայում է: Տարածաշրջանում ազգաբնակչության մեծ մասն զբաղված է զյուղանեսնության ու առեւտրի մեջ: Հիմնական զյուղանեսական մշակությունը կարտոֆիլն է, որն իրացման համար տարվում է թրիլիսի ու Վրաստանի այլ ցրաններ:

Առեւտրի ոլորտում Զավախսի, Բարումի ու Փոքի ծովային նավահանգիսներից իր հեռավորության հետեւանենով, մեծապես կախված է Հայաստանից, Հարավային Օսիայից եւ, մասամբ, Ռուսաստանից աղբանների ներկրումից: 2004թ. ամռանը, Հարավային Օսիայի դեղբերից հետո, այնեղից աղբանների ներկրումը դադարեց: Հայաստանից աղբանների ներկրումը վերջին ժամանակներում դժվարանում է վրացական իշխանությունների կողմից հայ-վրացական սահմանում անցագրային ռեժիմի խստացման հետեւանենով: Դա եամբես ազդել է տարածաշրջանի բնակչության կենսամակարդակի վրա:

Զավախսի ազգաբնակչության եկամուտների զգալի մասը գոյանում է Ռուսաստանից ու ԱՊՀ այլ երկրներից դրամական փոխանցումներից: Օրինակ, Ախալքալաքում Ռուսաստանից դրամական փոխանցումների մակարդակը կազմում է օրական շուրջ 25 000 դրամին համարժեք գումար: Համեմատության համար նետեն, որ 2001թ. հունվար-հուլիս ամիսներին ցրանի արդյունաբերական արտադրությունը կազմում էր օրական շուրջ 35 000 դրամ: Միեւնոյն ժամանակ՝ Ռուսաստանի կողմից Վրաստանի հետ վիզային ռեժիմի սահմանումը, Զավախսից սեղոնային աշխատողներից շատերին դարձարեց ամբողջ ընտանիքով տեղափոխվելու Ռուսաստան, բանի որ, հակառակ դեմքում, հերթական սեղոնից հետո վերադարձ հայրենին երթևեկության բարձր արժեքի, բյուրոկրատական բարդությունների եւ այլ դաշտառներով էամես դժվարացել էր:

Զավախսում գործնականում չկան բնակչության սոցիալական դաշտանության իրական մեխանիզմներ: Բյուջետային աշխատողների քուակներն ու աշխատավարձերը տվում են ուսացումներով, դրանք այնքան ցած են, որ բոյլ չեն տալիս աղափոխվելու անգամ նվազագույն կենսամակարդակ: Վրաստանը կոռուպցիայի մակարդակով աշխարհում գրավում է առաջին տեղերից մեկը, իսկ Սամցխե-Զավախսում այն հասնում է չտեսնված չափերի: Հասկապես սուր է դրվագ Ախալցխայում տեղակայված նահանգային ստորաբաժնումների դաշտոնյաների հետ Ախալքալաքի եւ Նինոծմինդայի ցրանների հայ բնակչության փոխարարելությունների հարցը: Այդ ցրանների բնակչությունը, սիմդված լինելով անգամ անեւան տեղեկանքի համար մեկնելու Ախալցխա, չինովնիկների, որոնց մեծամասնությունը Վրաստանի այլ ցրաններից տեղափոխված էքնիկական վրացիներ են, բացահայտ կանայականություններին է հանդիդում: Այստիսով, բյուրոկրատական համակարգի անկարությանն ու կոռուպցիային գումարվում է վրացի չինովնիկների կողմից էքնիկական հողի

վրա իրականացվող խորականությունը: Յավոն, ինչոյն ընդգծում են տեղական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, չնայած 2003թ. «Վարդերի հեղափոխությունից» հետո ամբողջ Վրաստանի մակարդակով կոռուպցիայի դեմ դայբարում արձանագրած դրական տեղաւարժերին, այնուամենայնիվ, Սամցիե-Զավախի սարածառաջանում շատ քիչ բան է փոխվել:

Առ այսօր սուր կերպով է դրված Էներգետիկ խնդիրը: Բացի կենտրոնական իշխանությունների կողմից արհեստական բյուրոկրատական հաշվություններից, դա կադրված է նաև Զավախի ամբողջ Էներգահամակարգի ընդհանուր մասվածության հետ: Այս խնդիրի լուծման համար անհրաժեշտ են զգալի ֆինանսական միջոցներ, որոնք չեն հատկացվում ոչ կենտրոնական իշխանությունների և ոչ ոչ Էլ սարածառաջանում գործող միջազգային դրույթականական կազմակերպությունների կողմից:

Էներգետիկ ճգնաժամին ավելանում է նաև ջեռուցման խնդիրը: Երկրանար հանարկում է Վրաստանի ամենացուր սարածառաջանը, որտեղի ձյունածածկույթը երբեմն դահլյանվում է հոկտեմբերից մինչեւ ապրիլ: Տարածառաջանում բացակայում են կենցաղային ու սանհիտական տարրական դայմանները: Ախալքալաքի և Նինոծմինդրայի բազմաթիվ գյուղեր չունեն ջրանարակարման համակարգ, բնակչությունն սիդրված է ջուր հայրայթել հարեւան գյուղերից կամ սանալ ջրհորներից: Գյուղերի մեծամասնությունում բացակայում են ամբողառորդիանները, չկա որակյալ բուժանձնակազմ ու սարքավորումներ, անգամ թերեւ բուժօգնություն սահմանու համար բնակչությունն սիդրված է մեկնել Հայաստանի Հանրապետություն՝ հարեւան Առցելի տրամադրությունների համար գործում է Ախալքալաքից շուրջ 50 կմ հեռավորության վրա: Խնդիրը մասամբ լուծվում է հայկական սփյուռքի կազմակերպությունների, հատկանիշ՝ ՀՕՄ-ի կողմից մի շարք բարեգործական ծրագրերի իրականացման միջոցով:

